ՄՐՐԿԱԾԻՆ ԴՐՈՆ

9(47·925)
Ա-94

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

ՄՐԿԱԾԻՆ ԴՐՈՆ

Հ.Ց.Դաշնակցութեան երիտասարդական
«ԿԱՅԾԵՐ» մատենաշար - թիւ 4

Դրոյի մահուան
քառասնամեակին առիթով՝
Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի
«Դրօ» Կոմիտէն
կը ստանձնէ այս հրատարակութեան
մեկենասութիւնը՝ ի յիշատակ
մրրկածին հերոսին։

4125- 20.10

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

Մրրկածին Դրոն 3
Մանկութիւն եւ Պատանեկութիւն 5
Նակաշիձէի աճաբեկումը 22
Հայ-թաթարական կռիւները 34
Ալիխանովի աճաբեկումը 48
Քարիւղի վաճառական Սուրէն Էֆէնտին 62
Երկրորդ գնդի հրամանատար 77
Զինուորական կոմիտասար 97
Երեւանի զինեալ ուժերի հրամանատար 108
Պետական եւ զինուորական մարդը 119
Պատերազմ եւ խորհրդայնացում 129
Դրոն Մոսկուայում 144
Արտասահմանում 154
«Գործակցութիւն Նացիզմի հետ» 164
Մրրիկով աշխարհ եկաւ, փոթորիկով հեռացաւ 170
Անձնանուն 193
Տեղանուն 201

ԴՐՕ ԿԱՆԱՅԵԱՆ

ՄԲՐԿԱԾԻՆ ԴՐՈՆ

Հայ յեղափոխութեան լուսաւոր դէմքերէն՝ Դրոն, յեղափոխական հսկաներու փաղանգին առաջնակարգ դիրքերը գրաւեց, հայ-թաթարական կռիւներու ընթացքին իր ունեցած անգնահատելի դերակատարութեամբ, հայատեաց եւ հաւաքական չարիքի վերածուած Նակաշիձէի եւ Ալիխանովի ահաբեկումներով, հայ կամաւորական շարժման երկրորդ գունդի հրամանատարութեամբ, Ազգային Խորհուրդի զինուորական կոմիսարի հեղինակաւոր անդամակցութեամբ, Հայաստանի Ա. Հանրապետութեան օրերուն Երեւանի զինեալ ուժերու հրամանատարի պաշտօնով նուիրագործուած զինուորական տիքթաթորութեամբ, նոյն շրջանին պետական եւ զինուորական գործիչի հանգամանքով եւ առ հասարակ Հայաստանի Հանրապետութեան կերտման գործին մէջ իր բերած անսակարկ ծառայութեամբ եւ աննկարագրելի օգտակարութեամբ:

Դրոյի կենսապատմութիւնը սերտօրէն առընչակից է Հ.Յ.Դաշնակցութեան 1905–1950-ի գործունէութեան ժամանակահատուածին: 1903-ին, Թէջարապետի գիւղապետ դաւաճան Մարտիրոսի ահաբեկումով իր կրակէ մկրտութիւնը ստացած Դրոն, մին-

չեւ 1956 գործեց գերազանցօրէն յեղափոխական ոգիով, հայութիւնը բազմիցս փրկելով հաւաքական ըսպանդէ: Նիկոլ Դումանի յեղափոխական ոգիով տոգորուած դաշնակցական այս հսկան իր կարգին յեղափոխականօրէն տոգորեց սերունդներ ամբողջ, որոնք դաշնակցականօրէն թրծուեցան ու կազմաւորուեցան Դրոյի օրինակով:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան վերջին վարչապետը, Դրոյի սերտ գործակիցը՝ Սիմոն Վրացեան, «Ակօս»ի 12րդ եւ 13րդ տարիներու հրատարակութեանց իրերայաջորդ թիւերով ներկայացուցած է Դրոյի կեանքի ամէնէն կարեւոր հանգրուանները **«մրրիկով աշխարհ գալէն»** մինչեւ անոր **«փոթորիկով աշխարհէն հեռանալը»**: Կեանքը՝ **«այն սակաւութիւններից, որոնք աստիճանի, տիտղոսի եւ փառքի յետեւից չէին վազում: Անոր, որուն, յետեւից վազում էր ի՛նքը՝ փառքը»**: **«Կայծեր»**ի մատենաշարի ներկայ համարը նուիրուած է մրրկածին այս մեծ հերոսին:

Վրացեանի **«Մրրկածին Դրոն»** կարդալէ ետք է միայն որ ընթերցողը կը սկսի հասկնալ թէ ինչո՞ւ Դրոն **«իր անցեալով ու ոգեշունչ խօսքով յոյս ու կենսունակութիւն ներշնչեց հայ ժողովուրդին, բայց մանաւանդ երիտասարդութեան»**:

ԿԱՅԾԵՐ

Ա

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Անկարելիութեան աստիճան դժուար է ինձ համար գրել Դրոյի մասին։ Նա դեռ ողջ է ինձ համար։ Ներկայ է մեր մէջ, թէեւ հայ ժողովրդի աչքին պատմութիւն է այլեւս։ Ինչ-պէ՞ս գրել, ի՞նչ գրել։ Բայց լռելն էր ներելի չէ, մանաւանդ որ ժամանակ էլ չկայ լռելու։ Գրեթէ կէս դարու անստուեր մտերմութիւնը պարտադրում է զսպել վիշտը, ասելու ինչ որ հնար է ապագայ սերունդների համար։

Ռոստոմի նման Դրոն էլ անանձնական պատմութիւն ստեղծող էր, որ երբեք չէր մը-տածում իրեն յաւերժացնելու մասին։ Մեծերից մեծագոյնն էր Ռոստոմը, բայց ո՞վ ի՞նչ գիտէ այսօր նրա կեանքի եւ գործունէութեան մա-սին։ Դրօն դեռ նոր հեռացաւ մեզանից, ներ-կայ սերունդը ի՞նչ գիտէ նրա կեանքի եւ պատմական մեծ գործի մասին։ Նա չի թողել հատորներով յիշատակներ, իր անձը եւ կատա-րած դերը անմահացնելու մտահոգութեամբ։ Նը-րանից մնացած հատ ու կտոր նամակները եւ գրութիւնները համարեա՛ ոչինչ չեն ասում նրա անհատական կեանքի մասին։ Նա չէր սիրում խօսել իր անձի կամ գործերի մասին, եւ խո-սելիս էր՝ աւելի հեգնում էր։ Իր պատմութիւ-

նը չգրեց, պատմութիւն ստեղծող էր նա։

Ճնշուած սրտով, հապշտապ գրի առնուած հետագայ տողերը, նպատակ ունեն, գէթ աղօտ գծերով, պատկերացնելու Դրոյի լուսաւոր դէմքը, իբրեւ տժգոյն ծաղկեպսակ նրա թարմ հողակոյտի վրայ։ Լրիւ կենսագրութիւն չէ, ի հարկէ, գրելիքս, այլ լոկ համեստ ատաղձ ապագայ կենսագրողի կամ դիւցազներգողի համար, որովհետեւ — ես գիտեմ — Դրօն յաւէտ պիտի ապրի Հայոց աստուածատաճարում, մեր մեծ անմահների հետ, իբրեւ մրրկածին դիւցազն հայ ժողովրդի նորագոյն պատմութեան, որ իր հզօր անհատականութեան մէջ խտացրեց հայութեան մարտական ու նաեւ ազգային-քաղաքական առաքինութիւնները։

* * *

1921թ. Յունուար 9 լոյս 10ի գիշերը չըտեսնուած ցուրտ ու ձիւնամրրիկ եղաւ Երեւանում։ Փոթորիկը այնքան սաստիկ էր, որ տները դողում էին կարծես երկրաշարժից։ Մարդիկ սարսափահար կուչ էին եկել տներում։ Յաջորդ օր Ռուսաստան պիտի աքսորուէր Դրօն՝ Խորհրդային իշխանութեան հրամանով...

Երբ առաւօտեան, սահնակը անհետացաւ ողջերթի հաւաքուած սգաւոր բազմութեան աչքերից, եւ մենք վերադարձանք ամայացած տունը, Դրոյի հայրը, դժուարութեամբ զսպելով արտասուքը, պատմեց.—

—Էն տարի երկրաշարժ եղաւ Սուրմալու գաւառում։ Մեր ջաղացքի մեծ առուն պայթեց, եւ հեղեղը ողողեց այգիները։ Տները շարժից ցնցուեցին, եւ եկեղեցու զանգերը ինքնաբերաբար սկսեցին զարնել։ Ինամի Մացակի հարսը՝ Հռոմը վախից երեխէն գցեց...։ Լուսաբացին, ղարմաղալով, աշխարհ եկաւ Դրօն։ Տատմէրը ցոյց տալով երեխէն՝ ասաց. «Մուշթուլո՛ւխ... զալըմ տղայ է, հա՛...։ Աչքդ լիս»... Փոթորիկի պէս աշխարհ եկաւ. ամբողջ կեանքը եղաւ փոթորիկ ու հիմի էլ ահա գնում է փոթորիկով... Ասաց ու գլուխը կախեց։

Եւ, յիրաւի, երկրաշարժի ու փոթորիկի գիշեր էր, 1884 թ. Մայիս 31ին, երբ Սուրմալուի Իգդիր աւանում, Մարտիրոս Կանայեանի, կակոյենց մեծ ու բարեկեցիկ տանը՝ աշխարհ եկաւ Վահագնեան սերնդից մրրկածին մի տղայ, նոր ժամանակների Սասունցի Դաւիթը, որ փոթորիկի պէս անցաւ հայ երկնակամարից՝ լուսապայծառ ծիրկաթին ձգելով իր յետեւը — Դրաստամատ Կանայեան — Մրրկածին Դրօ։

Նա հուր հեր ունէր

Եւ աչկունքն էին արեգակունք...

Իգդիրը Սուրմալու գաւառի կեդրոնն էր, Մասիսի շուքի տակ։ Զինուորական մի կայան, ուր ամառ-ձմեռ 8–10 հազար ռուս զօրք էր պահւում՝ հետեւակ, կազակ, սահմանապահ, որոնց աղմուկով լեցուն էր այդ աւանը եւ որոնց հետ գործ անելով՝ բարգաւաճում էր բընակչութիւնը։

Իգդիրը հայաբնակ մեծ աւան էր։ Կից կպած էր Իգդիր-Մաւա գիւղը, Աւետիս Ահարոնեանի ծննդավայրը։ 1828ից յետոյ, Պարսկաստանից բերուած գաղթականներ էին բնակիչները։ Ինչպէս Արարատեան դաշտի բոլոր գիւղացիների, սրանց բարեկեցութեան աղբիւրն էլ արգասաբեր հողն էր։ Առհասարակ, այգեգործութիւն եւ հացահատիկների ու բամպակի մշակում։ Ռուս զօրամասերի շնորհիւ Իգդիրը դարձաւ նաեւ առեւտրական շուկայ։

Բարեշէն ու բարեկեցիկ աւան էր Իգդիրը։ Ունէր երկսեռ մեծ դպրոց եւ դրամ չէր խնայում դրսից լաւ ուսուցիչներ բերելու համար։ Այստեղ պաշտօնավարել է նշանաւոր մանկավարժ Քալանթարեանը։ Ունէր աշխոյժ եւ քաջ երիտասարդութիւն։ Հայութեան տուել է ականաւոր մտաւորական դէմքեր։ Աւետեաց երկրին սահմանակից՝ Իգդիրը մի տեսակ կայան էր դէպի Թրքահայաստան դիմող յեղափոխական մտաւորականների եւ մարտիկների համար։ Այստեղ ուսուցչութիւն է արել, ապա երկիր մտել նշանաւոր յեղափոխական Զաքքին՝ հետագային Բագրատ Վարդ. Թաւաքալեանը։ Այստեղից յեղափոխական սերմեր է ցանել Հըմայեակ Վարդ. Արշարունին՝ Աւետիս Ահարոնեանի հոգեհայրը։ Իգդիրը յեղափոխական խմբումների եւ մարտական գործերի հնոց էր։ Սուրմալուի ժողովուրդը, բայց մանաւանդ Իգդիրցին, հռչակուած էր իր ազատասիրութեամբ, նախաձեռնող ոգիով, համարձակութեամբ ու

քաջութեամբ։ Եւ նաեւ արտասովոր հիւրասիրութեամբ եւ ժողովրդական երգերով։ Կոմիտաս վարդապետը իր մշակած ժողովրդական երգերից չատերը հաւաքել է Սուրմալուի գիւղերից։

Եւ ինչպէս սովորական էր Հայաստանի գիւղերում, Իգդիրի բնակիչներն էլ բաժանուած էին թաֆիաների, որոնց մէջ անպակաս էին աղմկոտ վէճերն ու կռիւները՝ երբեմն սպանութեան հասնող։ Իգդիրը եւ Աշտարակը նշանաւոր էին իրենց թաֆիաներով Արարատեան դաշտում։

Իգդիրում, մասնաւորապէս, թաֆիական խիստ բուռն բախումներ էին տեղի ունենում Կանայեան կամ Կակոյենց եւ Աւագեան գերդաստանների միջեւ։ Մահացու թշնամիներ էին այդ երկու մեծ գերդաստանները, որոնց յարուցած աղմուկներից եւ յաճախակի ընդհարումներից չարաչար տուժում էր գիւղը։

Առանձնապէս նշանաւոր էր Կանայեան կողմը, որի պարագլուխը, Մարտիրոսը բնածին խելքով եւ ձեռներէցութեան եւ ուժեղ կամքով օժտուած, հարուստ, ազդեցիկ, լայն կապերի տէր ու ժողովուրդի մէջ մեծ յարգանք վայելող մարդ էր։ Անպատ եռանդ ունէր եւ ընդարձակ գործ, իբրեւ կալուածատէր, այգիներ ու հողեր մշակող, կապալառու եւ առեւտրական։ Սուրմալու գաւառը ծայրից ծայր նրա ոտների տակ էր։ Ամէն տեղ ծանօթներ, բարեկամներ — ու նաեւ թշնամիներ — ունէր։ Գիտէր դրամ չահել եւ դրամը հաճելի կերպով

ծախսելու արուեստը։ Իր մեծ տունը լեցուն էր աստուածային ամէն բարիքով եւ չէնութեամբ։ Եւ հիւրերը անպակաս էին նրա սեղանից։

Ահա այս չէն տան մէջ, մեծ ընտանիքում, փոթորկոտ եւ բնութեան արկածներով լեցուն մի գիշեր, աղմուկ-ճիչով, աչխարհ եկաւ Դրօն։ Եւ աճեց ու մեծացաւ բնութեան ծոցում, եղբայրների ու քոյրերի, բայց, մանաւանդ, գիւղի հասակակից երեխաների հետ։ Փոքրը տարիքից արդէն աչքի էր ընկնում, իբրեւ խաղերի առաջնորդ, իչխելու եւ հրամայելու հակումով ու տիրական բնաւորութեամբ. նոյնիսկ իրենից մեծ տղաներին ենթարկում էր իր կամքին։ Աղմկայոյզ էր, հնարամիտ, կենսուրախ։ Հարեւանները յաճախ գանգատում էին նրա արարքներից։ Հայրը խրատում էր, երբեմն տփոցով էլ, բայց սիրում եւ երես էր տալիս նրան։ Եւ ոչինչ չէր խնայում նրանից։

Երբ մանուկ Դրօն հասաւ դպրոցական տարիքի, հայրը դրեց նրան Իգդիրի ծխական ուսումնարանը, բայց չուտով փորձը ցոյց տրւեց, որ Մարտիրոս Կանայեանի տղան ուսման գլուխ չունէր։ Դրոյի ուշքն ու միտքը դուրսն էր, խաղերը ընկերների հետ եւ թափառումները զօրանոցների շրջանում։ Նրան յափշտակում էին զինուորական մարզանքները։ Սիրում էր հրացան գործածել ու ձի հեծնել։ Գրքի եւ ուսման սէր չունէր։ Ուսումնական տարին լրացաւ, եւ Դրօն տարեվերջին էլ նոյնքան «գրրոց» էր, որքան եւ տարուան սկիզբը։

—Համոզուեցի, որ գիւղի դպրոցը երեխի տեղը չի, տարի դրի գիմնազիա, ասում էր հայրը, մտածեցի՝ բալքի խելքի գայ...»։

Բայց Երեւանի գիմնազիան էլ նրա «տեղը չէր»։ Հակառակ որ գիշերօթիկ էր դպրոցի կարող ուսուցիչներից մէկի տանը, որ խըստապահանջ մարդ էր, Դրօն ուսման սէր ցոյց չէր տալիս։ Նա ուշիմ տղայ էր եւ սուր միտք ու օրինակելի յիշողութիւն ունէր եւ եթէ ուզէր կարող էր դասարանի առաջին աշակերտը լինել, բայց հազիւ կարգը փոխելու չափ նիշեր էր ստանում։ Դասարանում ուսուցիչներից լսածից դուրս, կարդալու եւ գրելու գլուխ չունէր։ Բայց խաղերի եւ աշակերտական շարութիւնների մէջ առաջին գծի վրայ էր թէ՛ գիմնազիայում եւ թէ դպրոցից դուրս։

Երեւանի գիմնազիան, ինչպէս եւ Ռուսաստանի բոլոր ծայրագաւառների պետական դըպրոցները կանչուած էին ոչ միայն գիտութիւն տալու նոր սերնդին, այլեւ հետապնդում էին ռուսացման քաղաքականութիւն։ Այդպիսի դըպրոցներում, սովորաբար, կենտրոնից նշանակուած էին ազգայնամոլ ուսուցիչներ, որոնք ընդհանրապէս, արհամարհական վերաբերում էին ցոյց տալիս դէպի տեղական այլացեղ տարրերը, նրանց լեզուն, եկեղեցին ու բարքերը, աշխատում էին ամէն գնով ռուսացնել աշակերտներին։

Դրոյի ժամանակ Երեւանի գիմնազիայի տեսուչն էր հայատեաց Բրաժնիկովը, ուսուցիչ-

ների մեծ մասը նոյնպէս թթու ազգայնական պաշտօնեաներ էին։ Դպրոցում տիրում էին թըթու ռուսամոլ ոգի եւ խիստ կարգեր։ Աշակերտութիւնը բաղկացած էր մեծ մասամբ հայերից, ապա՝ թաթարներ եւ ռուսեր։ Առարկաներից միայն կրօնն էր աւանդւում հայերէն՝ մի խեղճ ու կրակ քահանայի միջոցով, որ ամսական ստանում էր քսանհինգ մանէթ՝ պաշտօնը պահելու համար ենթարկուելով բըռնակալ տեսչի բոլոր քմահաճոյքներին։ Տեսուչը թոյլ չէր տալիս, որ գիմնազիայում հայկական որեւէ հետք նկատուի։ Գոլիցինի դաժան տիրապետութեան տարիներն էին։

Բայց հայութիւնն էլ քնած չէր։ Ժթ դարու վերջը եւ քսաներորդի սկիզբը կովկասում էլ հայկական քաղաքական զարթօնքի շրջանն էր՝ թրքահայոց ազատագրման շարժման հետեւանքով։ Սահմանի միւս կողմից ցնցող լուրեր էին հասնում։ Ջայնը հնչել էր Էրզրումից։ Տարօն, Վասպուրական ու Բարձր Հայք եռուզեռի մէջ էին։ Կովկասի հայ երիտասարդութիւնը ոգեւորուած էր։ Նոր հիմնուած էր Հ.Յ.Դաշնակցութիւնը եւ արագ ծաւալւում էր ժողովրդական զանգուածների մէջ։ Կուկունեան արշաւանքը իր եղերական վախճանով լեցրել էր զայրոյթով հայերի սրտերը։ «Վրէ՛ժ», «վրէ՛ժ» լսւում էր ամէն կողմից։ Թրքական զուլումից ճողոպրած փախստականների պատմութիւնները հարստահարութիւնների մասին աւելի եւս բորբոքում էին Կովկասահայերի մտքերը։ Երիտա-

սարդութիւնը գաղտնի «Դրօշակ» էր կարդում, լսում էր աշուղների յեղափոխական երգերն ու ռազմական պատմութիւնները եւ պատրաստւում էր հասնելու տաճկահայ եղբայրներին...

Զարթօնքի այդ ոգին, հազար ձեւերով, թափանցում էր եւ պետական դպրոցները։

Իննուսնական թուականների կէսերից արդէն ռուս պետական դպրոցների հայ աշակերտութիւնը համակուած էր ազգային տրամադրութեամբ, որ հետզհետէ աւելի է ուժեղանում։ Գաղտնի խմբերում ուսումնասիրւում էր հայերէն լեզուն, հայոց պատմութիւնն ու գրականութիւնը, հայ ազատագրական շարժումը։ Պայքար էր մղւում ռուսախօսութեան եւ, առհասարակ, ռուսացման դէմ։ Դպրոցական հանդէսների ժամանակ ազգայնական աշակերտները ռուսերէն խօսող աշակերտուհիների ծամն էին կտրում, ռուս սպաների հետ պարող հայ օրիորդների սպիտակ հագուստն էին ներկում կուպրով, հրապարակով խայտառակում էին։ Ցուցական կերպով յեղափոխական երգեր էին երգում։ Մի խօսքով՝ «յեղափոխութիւն էին անում»։ Եւ Դրօն, բնականաբար այդ յեղափոխականների առաջին շարքերում էր Երեւանի գիմնազիայում։ Նա հետեւեալ կերպով էր արտայայտւում իր պատանեկան տարիների ապրումների մասին։

«Պատանի էինք մենք։ Մեր նշանաբանն էր դիմադրութիւն ցոյց տալ իշխանութեան եւ կամովին զիջումներ չանել երբեք։ Ցեղափոխական

ներշնչման գլխաւոր աղբիւրներից մէկն էր այդ օրերին Անդրանիկի հերոսական կռիւը։ «Երբ Անդրանիկ մի քանի հարիւր կտրիճներով կուրծք էր տալիս տաճկական բանակներին ու քրտական աշիրէթներին յանուն հայ ժողովուրդի պատիւին եւ ազատութեան, մենք նոյնպէս կուրծք կը տանք ցարական կառավարութեան եւ մեր արիւնը կը թափենք յանուն հայ ժողովուրդի իրաւունքների»։ Այս խօսքը բերնէ բերան շրջում էր եւ ոգեւորում մեզ»։

Գիմնազիան, սակայն, նրան չի կարողանում հրապուրել։ Գիրքն ու դասը չէին խօսում նրա հոգուն։ Հակառակ իր ուշիմութեան եւ սուր մտքին, դասերի մէջ յետին շարքերում էր, բայց առաջինը՝ խաղերում։ Ուսուցիչները գանգատում էին նրա յետին «ծուլութիւնից» եւ չարութիւններից։ Տեսուչը օձիք էր թօթւում, յաճախ։ Կանչում էր հօրը, որ խրատ տայ որդուն։ Հայրը խրատում էր «երեխին», յորդորում էր, որ դպրոցը աւարտի, «մարդ դառնայ», «երեխէն» չէր ուզում «մարդ դառնալ»։ Նրա խելքն ու միտքը դրսի աշխարհն էր։ Սահմանի միւս կողմից հայդուկների հրացանի որոտն էր հասնում, աշակերտները Անդրանիկի եւ իր միւս ընկերների սխրագործութիւններն էին երգում.—

Անդրանիկը բաջ իր ընկերներով
Կ'ուզէ պատերազմ, կը սպասէ գարնան...

Կարելի՞ էր հանգիստ նստել գիմնազիայի



ԴՐՕ

ԴՐՕ, ՄԱՏԹԷՈՍ, ՓԻԼԻՊՏ ԽԷՉՕ (1905ԹՎ)

նստարանի վրայ եւ միտք յոգնեցնել ինչ որ գիտութիւնների վրայ։ Եւ Դրօն որոշում է ձըգել դպրոցը։ Որոշում է մտնել զինուորական դպրոց՝ վերջը յեղափոխական մարտիկ դառնալու նպատակով։ Բայց զինուորական դպրոցը ընդունուելու համար պէտք էր բարձր նիշեր ունենալ, իսկ իր նիշերը··· ողբալի էին։

Անհամարձակ գնում է տեսչի մօտ, թէ՝

—Պարոն տեսուչ, ուզում եմ գնալ զինուորական դպրոց, բայց··· նիշերս··· կարելի՞ է մի բան անել···

—Սիրելի՛ս, ուրախանում է տեսուչը, քո բոլոր երեքները հինգ կը դարձնեմ, վարքիդ զերօն հինգ ու խաչ կ՚անեմ, միայն թէ գընաս··· կը մաղթեմ քեզ յաջողութիւն, որ զօրավար դառնաս···

Եւ փառաւոր վկայականը ձեռքին՝ Դրօն հեռանում է Երեւանի գիմնազիայի չորրորդ կարգից։

Բայց անմիջապէս զինուորութեան չի գընում, այլ մի որոշ ժամանակ անցնում է ծընընդավայրում։ Փոթորկայոյզ օրեր էին։ Անդին մարտական եռուզեռի մէջ էր ամբողջ Սասունը, ուր համախմբում էին զինամթերք եւ հայդուկային ուժեր՝ քաջ Անդրանիկի հրամանատարութեան ներքեւ։ Այս կողմ, 1903թ. Յունիս 12ին, հրատարակուել էր ցարական հրամանագիրն հայ ազգային-եկեղեցական կալուածների գրաւման մասին։ Դաշնակցութեան ղեկավարութեամբ հայութիւնը ոտքի էր ելնում ընդդէմ

ցարիզմի։ Բարձրանում ու տարածւում էր ժողովրդական ցոյցերի եւ ըմբոստութիւնների ալիքը։ Հ.Յ.Դաշնակցութեան նախաձեռնութեամբ կեանքի էր կոչւում Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէն, որ հրապարակային ազդով սպառնում էր կառավարական պաշտօնեաներին ու դաւաճաններին, եթէ նրանք աջակցին կառավարութեան բռնագրաւելու հայկական գոյքերը։ Կազմակերպւում էին ահաբեկչական խմբեր պատժելու համար յանցաւորներին։ Իրար յետեւից տեղի էին ունենում յանդուգն ահաբեկումներ, եւ միշտ «ահաբեկիչը ազատ էր»...

Դրօն, որին Աստուած ստեղծել էր յեղափոխութեան եւ ռազմի համար, կարո՞ղ էր հանգիստ մնալ տեղը կամ զինուորական դըպրոցի մասին մտածել։ Նա ամբողջ էութեամբ նետւում է կռուի ասպարէզ, մտնում է ահաբեկիչների խմբի մէջ, մասնակցում է ժողովրդական ցոյցերի կառավարութեան դէմ, մի քանի անգամ ծեծւում է ժանդարմների կողմից։

—Մայրս, պատմում էր նա խնդալով, օրհնում էր ցարին. «Օրհնեալ լինի Նիկոլայի թախտը, տղէս որ ժամ ոտք չէր դնում, հիմի ժամի համար ծեծ է ուտում...»։

Խնդիրը միայն ծեծով ու ցոյցերով չի վերջանում։ Դաշնակցութիւնը անխնայ կռիւ էր յայտարարել լրտեսների, մատնիչների եւ դաւաճանների դէմ։ Գաւառապետ հայկեր Բոգուսլաւսկիի ձեռքին կոյր գործիք էր դարձել Թէճէրապատ գիւղի տանուտէր Մարտիրոսը։ Դրո-

յին վիճակուեց նրա հաշիւը տեսնելու, եւ այդ եղաւ Դրոյի առաջին մարտական գործը կամ, ինչպէս ինքն էր ասում, «առաջին զէնք բանեցընելը»։ Ուզում եմ իր խօսքերով ներկայացնել այդ դէպքը, որով սկսւում է Դրոյի դիւցազնական մարտական ասպարէզը։

Մի երեկոյ, 1953թ. Հոկտեմբեր 15ին, երբ ըստ սովորութեան միասին նստած տանը վերյիշումներ էինք անում անցեալից, Դրօն դարձաւ ինձ, թէ

—Գիտե՞ս ինչ, այսօր իմ զէնք բանեցնելու յիսնամեակն է։

Եւ իմ պնդումի վրայ պատմեց։ Վերջը ես պատմածը գրի առի։

—1903թ. ամառուանից մեծ թափ առաւ զէնքի փոխադրութիւնը դէպի Տաճկահայաստան։ Գաւառապետ գազան Բոգուսլաւսկին խիստ հետապնդում էր հայ յեղափոխականներին։ Թէճէրապատ գիւղի դաւաճան գալաւա (գիւղապետ) Մարտիրոսը օգնում էր ոստիկանութեան։ Որոշուեց խփել եւ գործը յանձնուեց ինձ, մեր շրջանի յանդուգն ու նուիրուած դաշնակցական Գէորգեանի եւ մի ուրիշ ընկերոջ հետ միասին։

«Մեր տանը ապրում էր Սաչա Զաբոլոտկօ անունով մի սպայ, որի մօտ ես ռուսերէն դասեր էի առնում։ Մեզ մտերիմ մարդ էր։ Նրա մօտ յաճախ հաւաքւում էին իր սպայ ընկերները եւ ուրախ ժամանակ էին անցնում։ Այդ երեկոյ էլ, Հոկտեմբեր 15ին, հիւրեր եկան։ Սաչան խնդրեց ինձ, որ ձի նստեմ եւ

երթամ չուկայից ուտելիք բերեմ։ Գնացի։ Նոր էի վերադարձել ուտելիքով, լուր բերին, թէ գալաւան երկու հոգու հետ միասին բաղնիք է գնում։ Շտապով դուրս թռայ եւ մէկ հարուածով գետին փռեցի՝ պոռալով՝ «Սատկի՛ր, դաւաճան շուն»։ Վրայ հասաւ եւ Գէորգեանը. նա էլ դաշոյնի երկու հարուած տուեց սրիկային։

«Դրանից յետոյ, ես անմիջապէս եկայ տուն։ Սպանները թուղթ էին խաղում։ Նստեցի նրանց մօտ եւ սկսեցի դիտել խաղը։

«Դէպքին ականատեսներ լուր էին տուել ոստիկանութեան։ Մէկ էլ ոստիկանութիւնը ըշտապեց մեր տունը թէ՝ «աւազակ Դրօն մարդ է սպանել, ո՞ւր է»։ Սպայ Սաշան պատասխանեց, թէ Դրօն ամբողջ ժամանակ ինձ հետ էր եւ հետեւաբար, չէր կարող մարդ սպանել։ Բայց ոստիկանութիւնը չլսեց եւ ինձ ձերբակալելով՝ տարին ոստիկանատուն հարցաքննութեան։ Պահանջում էին, որ խոստովանուեմ, թէ ես եմ սպանել գալաւային։ Մերժեցի։ Այն ժամանակ տարին վիրաւոր գալաւային մօտ։ «Անաստուած, քեզ ի՞նչ եմ արել, որ ինձ զարկիր» բացագանչեց թշուառականը։ Ես նորէն մերժեցի։ Ցոյց տուին գալաւայի հետ եղողները, բայց սրանք չճանաչեցին կամ չճանաչել ձեւացան։ Ապա՝ ինձ տարին բանտ։ Լուսաբացին դաւաճանը սատկեց։

«Յաջորդ օրը՝ կրկին քննութիւն։ Երեւանից եկել էին քննիչ, եւ ժանդարմական ռոտ-

միստրը, որոնք խիստ հարցաքննութիւն արին։ Ձերբակալել էին նաեւ Գէորգեանին եւ ուրիշներին։ Բոգուսլաւսկին ամէն կերպ աշխատում էր ազդել քննիչների վրայ, որ յանցաւորը հանեն։ Ես նորից կտրուկ կերպով յայտարարեցի, թէ ամբողջ օրը տանն եմ եղել սպայ Սաչայի մօտ եւ ոչ մէկ կապ չունիմ գալաւայի սպանութեան հետ։ Սաչան եւ միւս սպաներն էլ երդումով վկայեցին, թէ ամբողջ ժամանակ իրենց մօտ եմ գտնուել։ Բոգուսլաւսկու ճնշումի վրայ էլ սպաները անդրդուելի մնացին։ Ժողովուրդն էլ համակրական ցոյց տարաւ մեր օգտին։

«Երկու օր բանտում պահեցին, վերջը ինձ ազատ ձգեցին։ Վերջը Գէորգեանին եւ միւսներին էլ բաց թողին գրաւականով։

«Ահա քեզ իմ առաջին զէնք բանեցնելու պատմութիւնը։ Մնց ես հաւանում» յուզուած վերջացրեց Դրօն...

«Հա՛, այս էլ աւելացնեմ. 1916ի վերջերը, ես Թիֆլիսում հանդիպեցի Սաչային։ Այժմ գնդապետ էր, վիրաւորուած եկել էր ռազմաճակատից բժշկուելու։

—Ցիչո՞ւմ ես, հարցրեց նա, անպիտան Բոգուսլաւսկին ուզում էր գալաւայի սպանութիւնը քո վրայ ձգել։

—Գիտե՞ս ինչ Սաչա, պատասխանեցի ես, Բոգուսլաւսկին իրաւունք ունէր. իսկապէս որ գալաւային ես էի սպանել։

Գնդապետ Սաչա Զաբոլոտկօն չչմած նա-

յում է Դրոյի երեսին…

Այս դէպքից յետոյ, այլեւս Իգդիրում մնալը վտանգաւոր էր։ Կուսակցութիւնը որոշում է, որ նա անմիջապէս հեռանայ Սուրմալուից։ Բայց հեշտ էր ասել «հեռանայ» ո՞ւր եւ ինչպէ՞ս հեռանար, երբ յեղափոխական գործից զատ կար եւ սրտի գործ։ Դրօն սիրահարուել էր Աւագեան ընտանիքից Օր. Արծուիկի վրայ, գիւղի գեղեցկուհիներից։ Սէրը փոխադարձ էր, բայց թւում էր անյոյս, որովհետեւ անհաշտ թշնամութիւնը շարունակւում էր Կանայեան եւ Աւագեան ընտանիքների միջեւ, եւ Դրոյի հայրը չէր կարող համաձայնել, որ իր տղան ամուսնանայ Աւագեանի աղջկայ հետ։

Դժուարութեամբ, բայց ստիպման տակ, Դրօն մեկնում է ծննդավայրից, նախ՝ Երեւան եւ այնտեղից Բագու։ Ապա մտնում է Ախուլգինսկի զօրագունդը, իբրեւ կամաւոր զինուոր զինամարզական բաժնում, ուր ենթասպաներ էին պատրաստւում։ Տեսչի տուած վկայականը օգնում է նրան յաջողութեամբ ընդունուելու։

Դրոյի զինուորական ծառայութիւնը զուգադիպում է պատմական փոթորկայոյզ դէպքերի՝ պայքարի բորբոքում ցարիզմի դէմ եկեղեցական գոյքերի գրաւման առթիւ, Սասունի ապստամբութիւն, ռուս-ճաբոնական պատերազմ, յեղափոխական լուրջ խմորումներ Ռուսաստանում, հայ-թաթարական ընդհարումներ… Անկարելի էր հանդարտ մտքով մնալ զօրամասում։ Սկսւում է զինուորների դասալքութիւնը։ Բագ-

ուի հայ-թաթարական առաջին ընդհարման լուրը առնելով Դրօն էլ գաղտնի հեռանում է գնդից։ Ինքը այդ մասին պատմել է Նիկոլ Դումանին։

«Աւարտել եմ Երեւանի գիմնազիայի չորրորդ դասարանը, եղել եմ Ախուլգինսկի գնդի զինավարժական բաժնում եւ Բագուի հայ-թաթարական ընդհարումների պատճառով կիսատ ձգել եւ փախել եմ Բագու»։

Բագուում ընկնում է դաշնակցական մարտիկների շրջանակը Նիկոլ Դումանի ղեկավարութեան ներքեւ։ Եւ նրա առջեւ բացւում է մարտական գործունէութեան հերոսական մի շրջան։

Բ

ՆԱԿԱՇԻԶԻԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

ԺԹ. դարու իննսնական թուականների վերջերը, շնորհիւ արտասովոր հարուստ նաւթային արդիւնաբերութեան, Բագուն, կովկասում, առասպելական վերելք էր ապրում՝ դառնալով Ռուսաստանի ճարտարարուեստական գլխաւոր կեդրոններից մէկը։ Այստեղ արագ կերպով համախմբուել էր շահագործող դրամագլուխը, ճարտարագէտ մտաւորականութիւնը եւ արհեստաւոր ու հասարակ բանուոր դասակարգը։ Բոլոր ասպարէզներում էլ հայ տարրը առաջաւոր տեղ էր գրաւում եւ բնական կերպով, մրցման մէջ էր մտնում ուրիշների հետ՝ նախանձի առարկայ դառնալով սրանց աչքին։

Մրցումը սաստիկ էր, մասնաւորապէս հայերի եւ մահմետական թուրք թաթարների միջեւ։ Սրանց հարուստներն ու մտաւորականութիւնը խանական բարքերով ու հոգեբանութեամբ, աւելի զօրաւոր, իբրեւ հողատէր, ձգտում էր առաջաւոր դիրքեր գրաւել նաեւ արդիւնաբերական ասպարէզում, ուր հանդիպում էր ուժեղ մրցակից հայերի դիմադրութեան։ Մեծ թիւ կազմող իսլամ, տգէտ, սեւ բանուորութիւնը կոյր գործիք էր իսլամ դրամատէրերի ձեռքին։ Հայ աշխատաւորութիւնը, թուով

նոյնպէս մեծ եւ որակով աւելի բարձր, աչքի զարնող դեր էր կատարում ընկերային խմբումների եւ դասակարգային բախումների մէջ։ Եւրոպական դրամագլուխը — Նոբել, Ռոդշիլդ, եւայլն — որակեալ մասնագէտներով իբրեւ աւելի զարգացած տարր պէտք է, մի տեսակ խաղաղարարի եւ միջնորդի ազդեցութիւն բանեցրնէր տեղական դրամագլխի եւ աշխատաւորութեան միջեւ, սակայն, նոյնպէս արագ հարստանալու մոլուցքից տարուած եւ ընչաքաղց, աւելի էր հրահրում ազգային եւ ընկերային ներհակութիւնները, որոնք տարուէ տարի աւելի էին բարդանում, որովհետեւ աճում ու բարդանում էին մի կողմից դասակարգային պայքարը աւգահ հարուստների ու ճնշուած աշխատաւորութեան միջեւ, միւս կողմից հայ-թաթարական հակառակութիւնները կրօնական եւ ազգային գետնի վրայ։

Քսաներորդ դարը Բագւում սկսուեց ազգային եւ դասակարգային սաստիկ բախումներով։ Իրար էին յաջորդում տնտեսական եւ քաղաքական գործադուլները ռուս ընկերվարականների առաջնորդութեամբ։ Դաշնակցութիւնը, որի դրօշի տակ կազմակերպուած էր հայ աշխատաւորութեան մեծ մասը, պարտաւոր էր զբաղուել եւ ընկերային-դասակարգային խնդիրներով՝ միաժամանակ հետապնդելով եւ թրքահայ դատը։ Իր այս ազգային-ընկերվարական դիրքը սուր քննադատութեան էր հանդիպում մի կողմից ռուս եւ վրացի ընկերվարականնե-

րից, միւս կողմից — լարում էր թուրք-թաթարների թշնամանքը հայերի դէմ։ Դաշնակցութիւնը ստիպուած էր հաշուի առնել ու պաշտպանել ոչ միայն հայ աշխատաւորութեան դասակարգային շահերը, այլեւ հայկական ընդհանուր ազգային իրաւունքներն ու նպատակները։

Նաւթաշխարհի այս հրաբխային հնոցում Հ.Յ.Դաշնակցութիւնը խոր արմատներ ձգած ու տարածուն պատկառելի մի ուժ էր դարձել, որ հետզհետէ աւելի եւս ծաւալւում ու զօրանում էր։ Այստեղ Հ.Յ.Դ. Ոսկանապատի կեդրոնական կոմիտէութեան շրջանում, հաւաքուած էին կուսակցութեան մտաւոր ու մարտական ղեկավար ուժերից շատերը, ինչպէս Նիկոլ Դուման, Խանասորի Վարդանը, Լեւոն Թադէոսեան, (Պապաշա), Յարութիւն Շահրիկեան, Յովհաննէս Քաջազնունի եւ շատ ուրիշներ։ Այստեղ էին թրծուում Դաշնակցութեան երիտասարդ գործիչներից ու մարտիկներից շատերը, որոնք յետոյ առանձին-առանձին կամ հայդուկային խմբերի մէջ մտնում էին «Արցունքի Հովիտը» կռուելու սուլթանական բռնակալութեան դէմ։ Բագուի հայ աշխատաւորութեան ծոցից դուրս էին գալիս անձնուէր խմբապետներ ու հայդուկներ, անվեհեր ահաբեկիչներ, որոնց ռումբերից ու գնդակներից սարսափում էին ցարական պաշտօնեաներն ու հայանուն դաւաճանները։

Տնտեսական ու մշակութային մեծ կշիռ ներկայացնում Բագուի հայութիւնը կովկասում ընդհանրապէս եւ ազգային կեանքում ի մաս-

նաւորի։ Եւ զարմանալի չէ, ուրեմն, որ ռուս բռնապետութիւնը կոտրելու համար հայերի դիմադրական ուժը, հարուածը հայերի գլխին Բագուից իջեցրեց, իբրեւ գործիք ծառայեցնելով խաւարակուռ մահմետականութիւնը։

Նահանգապետ Նակաշիձէի մեղսակցութեամբ, 1905թ. Փետրուար 6ին թուրք խուժանը, Բագուի արուարձաններու մէջ, յարձակուեցաւ հայերի վրայ եւ սկսեց թալանել ու կոտորել յանկարծակիի եկած հայերին, ոստիկանութեան աչքի առջեւ։ Ակներեւ էր, որ ջարդն ու թալանը նախօրօք ծրագրուած ու կազմակերպուած էր։ Գրեթէ երկու օր տեւեց անիշխանութիւնը, մինչեւ որ հայերը ի վիճակի եղան պաշտպանուելու։ Հ.Յ.Դաշնակցութեան մարտիկները Նիկոլ Դումանի առաջնորդութեամբ հրապարակ ելան եւ արագ ու կտրուկ հակահարուածով չչմեցրին թշնամուն։ Թուրք ղեկավարները հաշտութիւն խնդրեցին։ Մէջտեղ եկաւ զօրքն ու ոստիկանութիւնը։ Եւ կռիւը վերջ գտաւ Փետրուար 9ին։ Երկու կողմերի զոհերի գումարն էր. հայ սպանուած՝ 205, վիրաւոր՝ 121, թուրք սպանուած՝ 111, վիրաւոր՝ 128։ Հայերի նիւթական կորուստը շատ մեծ էր։

Ոչ միայն հայերը, Բագուի ռուս եւ եւրոպացի բնակչութիւնն էլ ցնցուած էր Փետրուարեան սարսափներից։ Մէվ էր պատասխանատուն։ Ամէնքի համար պարզ էր, թէ ով էր վայրագութիւնների հեղինակը — նահանգապետ Նակաշիձէն։ Բագուի նախկին քաղաքագլուխ

ռուս Նիվիկովը ցասումով ամբաստանեց Նակաշիձէն իբրեւ Փետրուար 6-ի սարսափների հեղինակ՝ անուանելով նրան «Ցուդա եւ Ցուդայից էլ վատ»։ Հասարակական խիղճը վրդոված՝ պահանջում էր պատժել չարագործին։ Հ.Ց.Դ. Ոսկանապատի Կեդր. Կոմիտէն որոշեց նրան ահաբեկել, բայց նոյն որոշումը տուել էր եւ ռուս սոց-յեղափոխական կուսակցութիւնը, որի դիմումի վրայ Դաշնակցութիւնը նրան է զիջում ահաբեկման պատիւը։ Բաւական ուշացումից յետոյ սոց-յեղափոխականների մահափորձը անցնում է անյաջող։ Դրոն որոշում է ինքը գործադրել մահավճիռը։

Դրոն այդ օրերուն գինուոր էր Ախուլգինսկի գնդում, հիւսիսային Կովկասի Պիատիգորով քաղաքում։ Բագուի դէպքերի լուրը առնելուն պէս նա թողնում է զօրամասը եւ փախչում անցնում է Բագու միանալու համար Դաշնակցական մարտիկներին։ Առաջին մահափորձի անյաջողութիւնից յետոյ, Դրոն խնդրում է, որ իրեն յանձնուի Նակաշիձէի ահաբեկումը։ Դեռ հազիւ 21 տարեկան անփորձ երիտասարդ էր, թէեւ նրա անվախութիւնն ու յանդգնութիւնը արդէն ծանօթ էին Գալաւայի դէպքից։ Նակաշիձէի մահապատիժը շատ աւելի պատասխանատու եւ վտանգաւոր գործ էր, եւ հասկըՆալի է, որ Կեդր. Կոմիտէի անդամների վրանում էին։ Խնդիրը վճռում է Նիկոլ Դումանը։ լսելով Դրոյի թախանձագին աղաչանքը, որ իրեն վստահուի այդ գործը, Նիկոլ Դումանը

բացականչում է «Շա՛տ լաւ, Տէրը քեզ հետ, գնա՛, կը վերադառնաս կամ վահանը ձեռքիդ, կամ վահանի վրայ»։ Եւ համոզում է կեդրոնական կոմիտէի միւս անդամներին էլ, որ գործը յանձնուի Դրոյին։

Ցաւում եմ, որ դէպքի մանրամասն պատմութիւնը արձանագրուած չէ։ Միայն յիշողութեամբ վերականգնում եմ Դրոյի պատմածը իր իսկ խօսքերով։

«Ոսկանապատի կեդրոնական կոմիտէն դժուարութեամբ, Նիկոլ Դումանի պնդումին վրայ, համաձայնուեց ինձ վստահել ու յանձնել Նակաշիձէի հաշիւը մաքրելու գործը՝ ընդհանուր հսկողութեամբ Աբրահամին (Գիւլխանդանեան)։ Որոշուեց ռումբ գործածել, թէեւ ես պիտի նախընտրէի տասնոցը։ Ռումբի թողած տպաւորութիւնը աւելի ցնցող կը լինէր։ Ինձ օգնական նշանակուեց Գանձակեցի Կռոն։

«Նշանակուած հսկողութիւնը պարզեց, թէ Նակաշիձէն ամէն օր, որոշ ժամերին, զինուած պահակներով շրջապատուած, կառքով գնում էր պաշտօնատեղին՝ անցնելով Պարապետ կեդրոնական հրապարակից, ուր Փետրուարին շատ հայեր էին ջարդուել Նակաշիձէի մեղսակցութեամբ։ Դրա համապատասխան էլ կազմեցինք ծրագիրը։ Պէտք է ռումբը թողնէինք ընկերներից մէկի խանութում՝ Պարապետին մօտ։ Որոշուած ժամին Կռոյի հետ պիտի մտնէինք ընկերոջ խանութը, ռումբի վրայ կապսիլ դնելու համար։ Ապա Կռոն պիտի երթար պահակ

կանգնէր հրապարակ տանող փողոցի անկիւնը սպասելու համար կառքին, իսկ ես ռումբը պիտի դնէի կեռասի տոպրակի մէջ, իբրեւ թէ քէֆի համար ուտելով ման գայի մայթի վրայ՝ եւ աչքի տակով նայէի Կուռոյի ազդանշանին։ Կառքը կը մօտենար հրապարակին, ես պէտք է նետէի ռումբը։

«Սակայն, տան հաշիւը չուկայի հաշուին չյարմարուեց։ Որոշուած ժամին մտայ ընկերոջ խանութը, բայց Կռոն չկար։ Սպասեցի, չեկաւ։ Աւելի երկար սպասելու ժամանակ չկար։ Կապսիւլը դրի ռումբի վրայ, ռումբը տեղաւորեցի թղթէ տոպրակի մէջ եւ դուրս եկայ։ Փողոցի անկիւնն էլ Կռոն չկար։ Մի պահ երեւաց Արամը եւ անհետացաւ։ Կարող ես երեւակայել վիճակս։ Մանաւանդ որ մի քանի օր է տառապում էի սաստիկ տիզանտերիայից։ Վախում էի, որ փորի ցաւս կը բռնէ։

Դանդաղ շարժուեցի առաջ կաղնիկաղ, իբրեւ թէ մէկ ոտքս ցաւում է եւ դժուարութեամբ եմ կոխում։ Քիչ այն կողմ, Պարապետի մուտքի մօտ, մի թուրքի խանութի պէս բան կար. պտուղ էր ծախում։ Ահագին զամբիւղով կեռաս էր դրուած մայթի վրայ։ Մօտեցայ։ Խոշոր, հիւթեղ կեռասներ էին։ Համը նայեցի եւ պատուիրեցի թուրքին ինձ համար կեռաս կշռել։ Թուրքը սարքում էր կշիռքը, ես էլ, զամբիւղի կողքին կկզած, ընտիր կեռասներ էի ջոկում, մէկ-մէկ էլ բերանս էի գցում՝ աչքի տակից նայելով, թէ արդեօք Կռոն եկա՞ւ, բայց

անիրաւը չէր երեւում...

«Մէկ էլ, լայն պողոտայի վերից լսուեց զիլ սուլոց եւ շառաչով երեւաց ճիաւոր պահակներով շրջապատուած կառքը, որ արագ սըլանում էր Պարապետի ուղղութեամբ։ Նակաշիձէն էր։ Սիրտս սկսեց ուժեղ տրոփել... Կառքը մօտեցաւ... «Եա, Փուքքի սուրբ Գէորգ» կանչեցի, թռայ տեղիցս եւ ռումբը ուժով նետեցի կառքի վրայ... լսուեց մի սարսափելի պայթիւն։ Բարձրացաւ փոշի ու ծուխ։ Հառաչանք ու ճիչ։ Մարդիկ սարսափից փախչում էին ամէն ուղղութեամբ։ Օգտուելով խուճապից ես էլ խառնուեցի ժխորի մէջ, եւ ապահով անհետացայ։ Մի պահ ուզեցի մօտենալ ջարդուած կառքին համոզուելու համար, որ հրէշը սպանուա՞ծ է, բայց միտքս փոխեցի։ Զիմացայ, ինչ էր պատահել...»

Իսկ պատահեր էր ինչ որ պէտք էր որ պատահեր։ Նակաշիձէի կառքը կտոր-կտոր էր եղել. չարագործի արիւնլուայ դիակը փռուել էր հրապարակի վրայ, ցեխի մէջ։ Թուրք կառապանը ծանր վէրք էր ստացել եւ շուտով մեռել. սպաննուել էին նաեւ Նակաշիձէի սպասաւորը եւ Դրոյին կեռաս ծախող թուրք պըտղավաճառը...

Հայ եկեղեցական կալուածների գրաւման եւ հայ-թաթարական կռիւների շրջանում, 1904-1906 թուականներին, Կովկասում շատ ահաբեկումներ տեղի ունեցան, դաշնակցական ահաբեկիչի վրիժառու գնդակից չանսատակ եղաւ Օլ-

Թիւ ջարդարար Գնդ. Բըկովը, սպաննուեցին Գանձակի փոխ նահանգապետ Անդրէյեւը, գաւառապետեր Բոգուսլաւսկին, Շմերլինգը, Պաւլովը, ոստիկանապետ Սախարովը եւ շատ ուրիշներ, բայց ո՛չ մէկը այնպիսի ցնցող տպաւորութիւն չգործեց, որքան Նակաշիձէի ցերեկով կենտրոնական բանուկ հրապարակին դէմ կատարուած մահապատիժը։ Այդ նոյն օրն իսկ, Հ.Ց.Դ. Ոսկանապատի Կեդր. Կոմիտէն հայ ժողովուրդին ուղղեց հետեւեալ կոչը.

«Ռումբը խօսեց։

Գազազուած հայ ժողովուրդի վրէժի որոտաձայն խօսքն էր այն։

Հրէշը, որ համեց մեր սրտի արիւնը, ողորմելի դիակ է հիմա։

Փետրուարի 6-ին նահատակուած մեր սիրելիների հոգիները թող հանգիստ առնեն այժմ։

Ռումբը դատեր շատ ունի դեռ։ Վայ նրանց, որոնք կը կամենան այսուհետեւ յոշոտել հայ ժողովուրդը։

Կորչի՛ բռնակալութիւնը։

Կեցցէ՛ Կովկասեան ժողովուրդների եղբայրութիւնը։

Կեցցէ՛ ազատ Դաշնակցութեան կառավարութիւնը»։

11 Մայիս 1905

Յաջորդ օր, Մայիս 12ին Կեդր. Կոմիտէն հասարակութեան ուղղեց հետեւեալ կոչը.

«Քաղաքացիներ, Զորեքշաբթի, Մայիս 11ին,

ցերեկուան ժամը 3ին քաղաքի կենտրոնում Պարապետի վրայ, Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէն մահուան պատժի ենթարկուեց:

Հ.Յ.Դաշնակցութիւնը նրան դատապարտել է մահուան իբրեւ Փետրուար 6-9 արիւնոտ օրերի գաղտնի կազմակերպիչը եւ հեղինակը: Այս վճիռը իր ժամանակին հաղորդուած էր դատապարտուածին: Սոյն վճիռը արձակուած էր նաեւ Բագուում գործող միւս յեղափոխական կազմակերպութիւնների կողմից, առանց ազգութեան եւ կուսակցական խըտրութեան: Վճիռը ի կատար ածուեց Դաշնակցութեան կողմից, որ այս պարագայում առաւելագոյն իրաւատէրն է հասարակական վրէժխնդրութեան:

Իշխան Նակաշիձէի կրած պատիժը թող չշփոթեցնէ ոչ ոքին: Դա մի արդար հատուցումն է մի զազիր ոճիրի-կանգնեցնել հարեւանը հարեւանի դէմ եւ կազմակերպել մասսային կոտորած՝ խաղաղ ժողովուրդը ահաբեկելու նպատակով: Իշխան Նակաշիձէն մարդասպան էր եւ դաւանան: Նա մատնեց իր պահպանութեան յանձնուած քաղաքը հրոսակների եւ աւարառուների եւ դրեց մարդասպանների ձեռքը մահացու զէնքեր: Եւ այդ զէնքերը թաթախեց հարիւրաւոր անմեղների արիւնով: Մահապարտ Նակաշիձէն պարտաւոր էր կնքել իր եղեռնալի կեանքը, անարգ մահով: Այդ էր պահանջում հասարակական վրդովուած խիղճը եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը դրա արտայայտիչը հանդիսացաւ:

Հրաւիրում ենք, Ձեզ, քաղաքացիներ, խաղաղութեան եւ անդորրութեան: Մի կորցնէք Ձեր սառնասրտութիւնը: Իշխան Նակաշիձէն պատժուեց իր-

ռեւ եղեռնագործ, որի ճակատին արդէն դրոշմուած էր հասարակաց անարգանքը եւ որ դատապարտուած էր հասարակական դատաստանով։

Պարապետի վրայ պայթած ռումբը թող չներշընչէ ձեզ երկիւղ վաղուան համար։ Այդ ռումբը ուղղուած է մի սրիկայի դէմ, որ սերմանում էր ազգաբնակութեան մէջ ատելութիւն եւ երկպառակութիւն, որ ձեր եւ մեր թշնամին էր, որ կոտրեց ձեր որդկերանց, հայրերին, մայրերին, եղբայրներին եւ քոյրերին»։

Իսկ Հ.Յ.Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ը, ժրնեւում, հաղորդում էր մեծատառ.— «Հ.Յ.Դաշնակցութեան Կովկասի Բ. Կեդրոնական Կոմիտէի որոշումով Բագուի Նահանգապետ իշխան Նակաշիձէն, փետրուարեան եղեռնի գլխաւոր հեղինակը, Մայիսի 11-24ին, ենթարկուեց տեռորի ռումբի միջոցով։ Նահանգապետը սպաննուեց տեղնուտեղը։ Տեռորիստը ազատ է»։

Միաժամանակ, Հ.Յ.Դաշնակցութեան Կովկասեան Պատասխանատու Մարմինը հասարակութեան եւ Կովկասի պաշտօնէութեան ուղղեց հետեւեալ Հրաման-ազդարարութիւնը։

ՀՐԱՄԱՆ

Ռուս կառավարութեան Կովկասեան Վարչութեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը սրանով յայտնում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետներին, գաւառապետներին, ժանդարմ-

ներին եւ խուզարկու ոստիկանութեան անդամներին, որ այսուհետեւ նրանցից իւրաքանչիւրը անխնայ կերպով կ'ոչնչացուի, եթէ համարձակի հայերի ձեռքից զէնք խլել, խուզարկութիւններ կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից իւրաքանչիւրը նախքան այդ տեսակ գործ սկսելը յիշէ Բագուի նահանգապետ Նակաշիձէն, Գանձակի փոխ նահանգապետ Անդրէյեւին, գաւառապետեր Բոգուսլաւսկուն, Շմերլինգին, Պալովին, ոստիկանապետ Սախարովին, պրիստաւներ Նաշչանսկուն, Ջաւախովին, Շումակեւիչին, Տէր-Սահակովին, ոստիկան Սերգոյին, դռնապան Շէկոյին եւ ուրիշ շատերին, որոնք Հ.Յ.Դաշնակցութեան վնռով մահուան պատժին են արժանացել: Փոխարքայի կողմից 25 ռուբլի ընծայ կամ յեղափոխականի գնդակը - ահա թէ ինչ բան պէտք է ընտրել: Փոխարքան խոստանում է այդ ձեւով վնասուածների ընտանիքներին ապահովել, այդ թեթեւացնում է մեր գործը, որովհետեւ միայն անմեղ ընտանիքների անօգնական դրութիւնը կարող էր դողացնել յեղափոխականի ձեռքը. այժմ վերջացած է այդ արգելքն էլ»:

Հ.Յ.Դաշնակցութեան Կովկասի
Պատասխանատու Կեդր. Կոմիտէ

Գ

ՀԱՅ ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ

Նակաշիձէն պատուհասելուց յետոյ, Դրոն մի քանի օր պահուած մնաց մի ընկերոջ տանը բնաւ ոչ-հերոսական տրամադրութեան մէջ՝ գալարուելով տիզանտերայի ցաւերից։ «Անիծեալ տիզանտերիան հոգիս հանեց, պատմում էր նա, ծիծաղելով ինքը իր վրայ։ Օրը մի քանի անգամ այցելում էր Բժ. Տէր Թովմասեանը, բայց նրա դարմանումից բան դուրս չէր գալիս»...

Ոստիկանութիւնը ամէն կողմ փնտռում էր Նակաշիձէի ահաբեկիչին։ Բագուում մնալը այլեւս վտանգաւոր էր Դրոյի համար, ուստի Կեդրոնական Կոմիտէն որոշում է, որ նա անմիջապէս փոխադրուի ուրիշ տեղ։

Դրոն դժուարութեամբ է համաձայնում բաժանուել Բագուի ընկերներից, մանաւանդ որ նաւթաչխարհը յղի էր յեղափոխական խմորումներով, եւ Դրոն ուզում էր մասնակցել համապետական ընդհանուր յեղափոխութեան՝ ոգեւորուած ռուս ահաբեկիչների, մանաւանդ, Կալեայեւի հերոսական գործերով։ Կեդր. Կոմիտէի պընդումների վրայ նա համաձայնուեց մեկնել Թիֆլիս՝ խնդրելով, որ իրեն հետ թոյլ տրուի գնալու եւ Գանձակեցի Կռոյին, որ չէր գտնուել նշանակուած տեղը Նակաշիձէի ահաբեկ-

ման պահուն եւ որին կեդր. Կոմիտէն ուզում էր պատժել։ Կեդր. Կոմիտէն տեղի է տալիս, եւ Դրոն Կռոյի հետ միասին մեկնում է Թիֆլիս, ուր ներկայանում է Բիւրոյի հերթապահ անդամ Բժ. Ց. Տէր Դաւթեանին եւ զէնքի գործի — Զինֆոնի — վարիչ Սարգիս Մանանեանին, որ յանուն կուսակցութեան նուիրում է նրան մի նոր մաուզէր տասնոց ատրճանակ։ Այս եւ հետագայ օրերի մասին Դրոն թողել է իր յուշերը «Վէմ» հանդէսի մի քանի համարներում։

Թիֆլիսում մի քանի օր մնալուց յետոյ, Դրոն անցնում է Երեւան, ուր նրան մեծ ուրախութեամբ ընդունում են Դաշնակցական Խեչոն, որ քաղաքի ինքնապաշտպանութեան վարիչը էր եւ նրա օգնական Փառակեցի Մկրտիչը։ Եւ կեդր. Կոմիտէի հաւանութեամբ Խեչոն նշանակում է նրան թռուցիկ խմբի պետ եւ թոյլ է տալիս, նախքան գործի անցնելը, մի քանի օրով այցելել Իգդիր տեսնելու համար ծնողներին, ազգականներին, ընկերներին ու բարեկամներին եւ, ի հարկէ, Արծուիկին, որոնց չէր տեսել երկար ժամանակ։ Նրան ցաւ էր պատճառում Կանայեան-Աւագեան թաղական կռուները, որոնց պատճառով, այսպիսի խռովայոյզ օրերին, Իգդիրի ներքին համերաշխութիւնն էր վրդովւում եւ իր անձնական երջանկութիւնն էր խանգարում։ Նա վճռել էր ամուսնանալ սիրած աղջկայ եւ դրանով հաշտեցնել նաեւ երկու հակամարտ ընտանիքները։ Եւ այ-

ժըմ կարօտով ու յուզումով մտնում էր ծնընդավայր։

Սակայն, հազիւ էր հասել Իգդիր ու տեսնուել հարազատների հետ, նոյն երեկոյեան լուր է ստացւում Երեւանից, թէ այնտեղ սկըսւել են հայ-թաթարական ընդհարումները։ Նա զգում է իրեն յանցաւոր, որ այդպիսի պատասխանատու ժամանակ թողել է իրեն վստահւած պարտականութիւնը անձնական գործի համար։ Եւ հակառակ ծնողների թախանձանքին, որ գէթ մի օր էլ մնայ, նոյն գիշերն իսկ վերադառնում է Երեւան։

Երեւանում իր աչքերի առջեւ բացւում է մի մռայլ տեսարան։ Քաղաքի թուրքերը յանկարծակիի բերելով՝ յարձակուել էին հայերի վրայ եւ 20-25 հայեր սպաննել։ Կեդր. Կոմիտէն, զէնքի պակասի պատճառով, խուճապի մատնուած, հրահանգել էր Խեչոյին զգոյշ լինել եւ նոր ընդհարումների առիթ չտալ։ Հայերը ընկճուած դրութեան մէջ էին։ Խեչոն վրդովւած՝ ելք էր փնտռում ստեղծուած անտանելի կացութիւնից, մանաւանդ որ շուտով պիտի գար Նիկոլ Դումանը, որի հանդէպ նա անսահման պաշտամունք ունէր. ի՞նչ պիտի ասէր նրան։

—Հէ՛յ, մէրդ չմեռնի, Խեչօ, անդադար կրկնում էր նա, ի՞նչ երեսով պիտի երեւաս Դումանին... բէնամուս եղանք...

Կեդր. Կոմիտէի խոհեմ քաղաքականութիւնը աւելի երես պիտի տար թուրքերին։ Անհրա-

ժեչտ էր նախաձեռնութիւնը նրանց ձեռքից առնել։ Եւ Խեչոն, Մկրտիչը եւ Դրոն խորհրդակցելով՝ որոշում են մի ուժեղ հակահարուած հասցնել Թշնամուն։ Երեւանը Կովկասի հայութեան սիրտն էր. այդտեղ էլ ծեծ ուտել, ինչպէս պատահեց Բագւում, նշանակում էր խկապէս «բէնամուս» լինել եւ ուրիշ վայրերի հայ բնակչութեան ապահովութիւնն էլ վտանգել։

Երեւանի թուրքերը, խրախուսուելով առաջին յաջողութիւնից, պատրաստւում են նոր յարձակման, բայց այս անգամ անակնկալի են հանդիպում։ Խեչոն դասաւորել էր իր ուժերը այնպէս, որ Թշնամին ընկնում է երկու կրակի միջեւ եւ չչմեցուցիչ հարուած է ստանում։ Այս կռիւներում աչքի ընկնող դեր է կատարում Դրոն իր թռուցիկ խմբով եւ զինուած մարդերով ու կամաւորներով։ Նա գիշերով անցնում է թուրքերի թիկունքը եւ բարձր դիրքերից գնդակների տարափ է թափում նրանց գլխին։ Առաւօտեան հայ ժողովուրդը ցնծութեամբ ողջունում է յաղթանակը։ Խեչոյի դէմքը փայլում էր։ Նա չնորհաւորելով Դրոյին՝ ասում է.

—Խաթաքեա՛ր. դու որ մի չաբաթ կռիւ անես, Քանաքեռի ջաբախանան քեզ չի հերիքի...

Քանաքեռում գտնւում էր ռուս զօրամասի զինանոցը։

Երեւանի թուրքերը սմքել էին։ Անմիջական

վտանգը անցել էր, եւ Դրոն մտածում էր նորից գնալ Իգդիր, բայց այդ պահուն իր մտերիմ ընկեր Մարտիրոս Զարուխեանից նամակ է ստացւում Բագուից. Մարտիրոսը մի ընկերոջ հետ ձերբակալուել էր ահաբեկումի գործով։ Պիտի յանձնուէր զինուորական դատարանի, որից սպասւում էր մահավճիռ կամ ցմահ տաժանակիր աշխատանք Սիբիրում։ Մարտիրոսը խնդրում էր փախցնել իրենց բանտից դատարան տանելիս, իսկ եթէ անհնար լինել փախցրնել, ռումբով սպաննել, իրենց պահակների հետ միասին։

Խորհրդակցելով Խեչոյին եւ Մկրտիչին հետ, հակառակ Ոսկանապատի կեդրոնական կոմիտէի արգելքին, Դրոն շտապով մեկնում է Բագու։ Այստեղ սարսափով եւ զայրոյթով են ընդունում նրան ընկերները, չէ՞ որ Նակաշիձէի ահաբեկիչին փնտռում էր ոստիկանութիւնը եւ ձերբակալելու պարագային մահապատիժը անխուսափելի էր։

—Ա՛յ, տղայ, դու հօ գիժ չե՞ս, վրդովւած յանդիմանում է նրան Պապաշան, ինչո՞ւ ես եկել, չէ՞ որ ոստիկանները չան նման փնտռում են քեզ...

Բայց սիրելի ընկերոջ կեանքը փրկելու միտքը ամբողջապէս կլանել էր նրան։ Նա ոչ ոքի չի յայտնում իր գալու նպատակը եւ անելիքների մասին։ Մարտիրոսի քրոջ՝ Սաթոյի հետ, իբրեւ նրա եղբայրը գնում է բանտ, երկար տեսակցութիւն է ունենում բանտարկեալ

ընկերոջ հետ, համոզում է Մարտիրոսին, որ յուսահատական միջոցների չդիմի եւ հանգստացրած ու հանգստացած դուրս է գալիս։

Այդ միջոցին Դումանը արդէն հասել է Երեւան։ Նա հեռագրով յետ է կանչում Դրոյին։

Մօտ մի ամիս Բագւում մնալուց յետոյ, Դրոն վերադառնում է Երեւան եւ անմիջապէս ներկայանում է Դումանին, որ խիստ նկատողութիւն է անում է նրան.

Յուսակցութիւնը քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, ասում է Դումանը, բայց այդ չի նշանակում, որ դու, հակառակ նրա կեդր. կոմիտէի հրահանգի, կարող ես կամ իրաւունք ունիս վերադառնալ այն վայրը, որտեղ քո իսկ ապահովութեան եւ իրեն յայտնի պատճառներով հեռացրել է քեզ։

Եւ հակառակ Դրոյի խնդրանքին մնալու Դումանի տրամադրութեան տակ ահաբեկչական եւ այլ նման նպատակների համար, Դումանը նշանակում է նրան տասնապետ եւ ուղարկում է Կոտայքի Ղըրխբուլախի չրջանի ժողովրդական ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու եւ վարելու։

Հազիւ քսանմէկ տարեկան դեղնակտուց, բայց վառվռուն եւ յուսատու երիտասարդ էր Դրոն։ Նակաչիմէի յանդուգն մահապատիժը արդէն նրա համար ստեղծել էր հերոսի համբաւ, բայց ինքնագլուխ հեռանալը Երեւանից ապացոյց էր, որ դեռ փորձառութեան պէտք ունէր

կարգապահ յեղափոխական դառնալու համար։ Ղրրխբուլախի նման համեմատաբար ապահով եւ հանգիստ մի վայր ուղարկելով՝ Նիկոլ Դումանը, անշուշտ ուզում էր նրան փորձութեան ենթարկել տեսնելու, թէ ինչ գինի է դուրս գալու այդ թունդ չիրայից։

Դրոն գոհ չէր այդ նշանակումից, բայց ի՞նչ կարող էր անել, Դումանն էր կարգադրողը։ Ստանալով մանրամասն հրահանգներ՝ նա մեկնում է նշանակուած շրջանը եւ եռանդով անցնում գործի։

Ղրրխբուլախի հայկական գիւղերը անմիջական վտանգի ենթակայ չէին։ Նրանց մնաս կարող էր հասնել միայն լեռները ամարանոց եկած թուրքերից, թարաքեամաներից։ Պէտք էր, ուրեմն, արթուն մնալ եւ հսկել, որ քոչուոր թուրքերը գողութիւն չանեն հայերից, չքշեն նրանց տաւարը կամ սպանութիւններ չանեն։

Դրոն փայլուն կերպով կատարում էր Դումանի տուած բոլոր հրահանգները։ գիւղերում կազմում է ինքնապաշտպանութեան պահակախմբեր, հարուստների վրայ պարտադիր տուրք դնելով՝ զինում է կռուի ընդունակ երիտասարդութիւնը, հետեւում է խիստ կարգապահութեան, հսկում է, որ ժողովրդին նեղութիւն չտրուի։ Իր կողմից հաստատում է դաշտային պահակների դրութիւն, որ մեծ չափով նպաստում է շրջանի խաղաղութեան պահպանութեան։ Եւ երբ, մէկ ամիս վերջը, իջնում է Երեւան զեկուցանելու Դումանին եւ խնդրելու,

որ իրեն աւելի հետաքրքրական աշխատանք տրուի, Դումանը լսելով դաշտային պահակների մասին, քաջալերանքով ասում է գոհունակութեամբ։

—Տեսա՞ք, այդ կէտը իմ հրահանգների մէջ չկար. մի բան էլ դեռ աւելի էք արել։ Դուք նորից կ'երթաք Ղրրխբուլախ, ուր կը մնաք, մինչեւ որ քոչուոր թուրքերը վար իջնեն լեռներից։ Ապա ես ձեզ կը կանչեմ եւ մի ուրիշ աւելի հետաքրքրական աշխատանք կը տամ։

Դրոն ակամայ վերադառնում է Ղրրխբուլախ, որ նեղ էր գալիս նրա եռուն բնաւորութեան համար։ Ռուսաստանի յեղափոխութեան խռովայոյզ օրերն էին։ Նախիջեւանում, Ղարաբաղում, Գանձակում հայ-թաթարական բուռն ընդհարումներ էին տեղի ունենում, ինչպէ՞ս կարելի է հանգիստ մնալ Ղրրխբուլախի նման մի յետամնաց անկիւնում եւ սպասել թարաքեամաների հեռանալուն լեռներից։ Դրոն նորից եւ նորից խնդրում էր Դումանին ուրիշ գործ տալ իրեն, բայց Դումանը մնում էր անդրդուելի, թէեւ արտակարգ ջերմ ու սիրալիր վերաբերում էր ցոյց տալիս դէպի Նակաչիձէի ահաբեկիչը։

—Եթէ ես ամէն զինուորի ու խմբապետի քէֆով շարժուեմ եւ նրանց անհատական ցանկութիւններին յարմարուեմ, էլ ինչացո՞ւ է իմ այստեղ նստելն ու հրամաններ տալը, առարկում էր նա Դրոյի թախանձանքներին։

Վերջապէս, Օգոստոսի վերջերը մի օր,

Դումանը կանչում է իր մօտ Դրոյին եւ յայտնում, թէ նշանակում է նրան աւելի մարզըւած ու փորձառու հայդուկների խմբապետ եւ ուղարկում է Նախիջեւանի շրջանը մասնակցելու ինքնապաշտպանութեան։ Դրոյի խնդրանքը չէր այս. նա ուզում էր գործօն մասնակցութիւն ունենալ ընդհանուր յեղափոխական շարժումներին, իբրեւ ահաբեկիչ, բայց ինչպէ՞ս կարող էր հակառակել Դումանի կամքին։

Սակայն, նախքան Նախիջեւանի շրջանը մեկնելը, Դրոն մի անգամ էլ գնում է Իգդիր, այս անգամ աւելի լաւ պայմաններում։ Մի քանի օր մնում է հայրենի տանը ծնողների եւ ազգականների հետ։ Տեսնւում է ընկերների եւ, ի հարկէ, Արծուիկի հետ։ Իր եւ ընկերների աշխատանքը մարելու Կանայեան-Աւագեան թայֆայական կրակը դրական արդիւնք էին տուել։ Դրոն արդէն Իգդիրի համար, պանծալի հերոս էր. Աւագեանների համար պատիւ էր հերոս փեսայ ունենալ։ Դրոյի հօր սիրտն էլ զգալապէս մեղմացել էր։ Եւ Դրոն հեռանում էր ծընընդավայրից շուտով Արծուիկի հետ ամուսնանալու որոշումով։

Երեւանից, խումբի գլուխ անցած, Դաւալուի վրայով մեկնում է Դարալագեազ, ուր ինքնապաշտպանութեան ղեկավարն էր Տարօնցի նշանաւոր Հաճին։ Դրոն, իր յուշերի մէջ, կենդանի գոյներով պատկերացնում է հայդուկների կեանքն ու սխրագործութիւնները։ Առանձնապէս նրա ուշադրութիւնն էր գրաւում Սերոբ Փա-

չայի անվեհեր զինուոր Առիւծ Գէորգը, որ հեգնանքով ու արհամարհանքով է խօսում Քաչալ Անդրանիկի եւ Կոտոյի Հաճիի մասին։ Ընկարագրում է պարծենկոտ Առիւծի քաջութիւնը։ Հրաժեշտի պահուն Առիւծ Գեւոն Դրոյին ուղղում է հետեւեալ իմաստալից ճառը.

—«Տղա՛յ, էս լեռներուն մէջ տեղ չկայ, որ վտանգ ըլի եւ Առիւծ Աւագն Թուանքի ձէն լսէ ու օգնութեան չհասնի։ Գնա՛, կռիւ լէ ունենաս, քչի վրը թշնամուն, վառէ զրմէն, դոտ լէ կռիւ ընես, դուշի թեւով քեզի կը հասնիմ, քեռ կռնակն իմ, քե օգնութեան կու գամ, լաւ գիտցիր...

Դրոն իր խմբով Դարալագեազից ապահով անցնում է Լեռնային Նախիջեւանը եւ իրեն համար կեդրոնավայր է ընտրում Նորս գիւղը։ Այս շրջանի վիճակը բաւական տխուր էր, հայկական գիւղերի մեծ մասը թալանուած էր թուրքերից։ Տները կիսաւեր էին։ Դռներն ու պատուհաններն անգամ տարել էին։ Գիւղացիները թէեւ վերադարձել էին իրենց կիսաւեր տները եւ սկսել բերքի հաւաքման արտերից, բայց ապրուստի միջոց համարեա չէր ճարւում։ Կերակրւում էին գլխաւորապէս հացով։ Խմբի զինուորները մեծ յարգանք էին ցոյց տալիս դէպի իրենց երիտասարդ խմբապետը, միայն Խլաթցի Գալօն տարբեր կարծիքէն էր. նա հետեւեալ կէս-հեգնական ու կէս-արհամարհական պատմութեամբ էր արտայայտել իր վերաբերումը.

—Տղա՛ք, մեր Մոկաց իշխաններ կը ժողվին ու էրկար ֆիքր կ'ընեն, թէ իրենց հարկ որո՞ւ ձեռքով ղրկեն Վանայ վալիին, որ քրտեր չը-թալլեն ճամբին։ Շատ ֆիքր կ'ընեն ու կ'ո-րոշեն փողեր ժամկոչի աղուէսի վիզէն կապել, որ տանի, սաղ-սալամաթ տեղ հասցնէ։ Հիմա մեր պարոն Դուման մեզ կապեր է իդա աղ-ուէսի վիզ»…

«Իդա աղուէս»ը Դրոն էր, բայց Գալօն չուտով պիտի համոզուէր, որ Դրոն աղուէս չէր, այլ առիւծ։ Խումբը անմիջապէս գործի է ձեռնարկում։ Նախ՝ կապ է հաստատում հայ-կական բոլոր գիւղերի միջեւ։ Վտանգուած գիւղերում խմբապետներ են նշանակւում։ Կազ-մըւում են տեղական ինքնապաշտպանութեան խմբեր։ Կազմակերպւում է հետախուզութեան գործը՝ օրը օրին հետեւելու համար թշնամու շարժումներին։ Գիւղացիութիւնը մեծ վստահու-թեամբ էր վերաբերւում դէպի Դրոյի կարգադ-րութիւնները եւ սիրով կատարում էր նրա բո-լոր առաջարկները։ Խմբի վրայ էր ընկած ոչ միայն շրջանի ինքնապաշտպանութիւնը, այլեւ վարչական-դատաստանական գործը, որովհետեւ ռուս պաշտօնէութիւնը վախից ամբողջապէս փախել էր։ Փաստօրէն Դաշնակցութեան ձեռքն էր անցել շրջանի բովանդակ իշխանութիւնը։

Դրոյի խմբի ժիր գործունէութիւնը գրա-ւում է հարեւան թուրքերի ուշադրութիւնը, մանաւանդ որ Նորսից Դրոն յարաբերութիւն էր հաստատել Զանգեզուրի եւ Նախիջեւանի

հետ։ Թուրքերը փորձեցին գրաւել Նորսը եւ դրանով վերջ տալ Դրոյի խմբի վտանգաւոր շարժումներին։ Ցարձակումը Նորսի վրայ հանդիպեց հայերի բուռն դիմադրութեան։ Դրոյի խումբը, ուժեղ գրոհով, յետ մղեց թշնամուն՝ քաջալերելով նրա ուժերը։ Հայ գիւղացիք գրաւեցին թուրքերի տաւարը՝ ապահովելով շրջանի կաթն ու մսացուն։

Նորսի կռիւը եւ փայլուն յաղթանակը Դրոյի խմբի առաջին մկրտութիւնն էր, որ մեծապէս բարձրացրեց Դրոյի հեղինակութիւնը մարտիկների եւ ժողովրդի աչքին. Խլաթցի Գալօն այլեւս հեգնական առակներ չէր պատմում։

Նորսի կռուից յետոյ, Դրոյի մօտ են գալիս Նախիջեւանի շրջանի ինքնապաշտպանութեան վարիչ Դաշնակցական Խեչոն եւ Կոլոտ Սարգիսը — Օդապաշեան — Քեռիի հետ միասին։ Նիկոլ Դումանը Քեռիին նշանակել է ընդհանուր հրամանատար Դարալագեազ-Լեռնային Նախիջեւան-Զանգեզուրի համար։ Խեչոն զգուշութեամբ ուզում է այս որոշումը յայտնել՝ վախենալով, որ կը դժգոհի, բայց Դրոն անմիջապէս պատասխանում է, թէ սիրով կ'ենթարկուի Քեռիի հրամանատարութեան եւ խկոյն փոխանցում է նրան իշխանութիւնը։ Խեչոն ու Սարգիսը ուրախութեամբ համբուրում են նրան։ Քեռին առաջարկում է միասին վարել հրամանատարութիւնը, բայց Դրոն առարկում է։ Եւ այնուհետեւ մի ամբողջ տարի Դրոն իր խմբով գործում է իբրեւ Քեռիի օգ-

նական՝ կազմակերպելով տեղական վարչութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը Լեռնային Նախիջեւանի ու Զանգեզուրի շրջանում, վարելով բազմաթիւ կռիւներ, որոնց շնորհիւ թուրք թշնամին, ի վերջոյ, պարտուած՝ ստիպուած եղաւ հաշտութիւն խնդրելու։ Թուրքերի վրայ մասնաւոր մեծ տպաւորութիւն թողեց Սիսիան թրքական մեծ գիւղի յաղթական կռիւը եւ գիւղի հրդեհումը հայ մարտիկների ձեռքով։ Այս կռուում առանձնապէս աչքի ընկաւ Դրոն, իբրեւ հմուտ հրամանատար եւ անվախ ու քաջ կռուող։

Օգտուելով կարճատեւ խաղաղութիւնից՝ Դրոն գնում է արձակուրդով ծննդավայր եւ այդ միջոցին ամուսնանում է Արծուիկ Աւագեանի հետ։ Այլեւս մեծ հռչակ ստացած անձնի խմբապետ էր, ո՞վ կարող էր հակառակել նրա կամքին։ Այս ամուսնութեամբ վերջ էր գտնում Կանայեան-Աւագեան ընտանիքների երկարատեւ հակառակութիւնը։

Դրոյի հարսանիքը մեծ դէպք է նկատւում։ Պսակին՝ եկեղեցին բերնէ բերան լեցուած է լինում հարսնեւորներով։ Պսակին պիտի յաջորդէր ճոխ հարսանիքը՝ անհաշիւ հրաւիրեալներով գաւառից ու Երեւանից։ Գեղեցկուհի հարսը եւ հերոս փեսան ամէնքի հիացմունքի առարկայ էին։ Երբ պսակից յետոյ, նորապսակ զոյգը դուրս է գալիս եկեղեցուց ընդհանուր ցնծութեան եւ բացականչութիւնների մէջ, մի անծանօթ երիտասարդ մօտենում է փեսային եւ

ձեռքը դնում է մի թղթածրար։ Դրոն բաց է անում եւ կարդում։ Հրամանագիր էր Նիկոլ Դումանից, «Կռիւները վերսկսել են Զանգեզուրում, անմիջապէս վերադառնալ ռազմաճակատ»...

Հազիւ տուն հասած՝ Դրոն յայտնում է հօրը, թէ պէտք է իսկոյն մեկնի։ Իրարանցում, աղաչանք՝ գէթ մի օր մնալ, բայց Դրոն մընում է անդրդուելի։ Հրամանը հրաման է. յեղափոխական զինուորը պարտական է առանց առարկութեան անյապաղ ենթարկուել։ Եւ ձգելով հարսանիքը կիսատ՝ Դրոն չտապում է վերադառնալ Քեռիի մօտ, ուր տաք կռիւներ էին տեղի ունենում։

Այս ամուսնութիւնից Դրոն ունեցաւ մէկ մանչ զաւակ՝ Լիւտեկը։ Կինը երկար չապրեց։ Առաջին զաւակի ծնունդից յետոյ հիւանդացաւ թոքախտով, եւ Դրոն, հազիւ ընտանեկան բոյն կազմած, այրիացաւ։

Դ

ԱԼԻԽԱՆՈՎԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Դրոն գրեթէ մէկ տարի անցկացրեց լեռնային Նախիջեւանում եւ Զանգեզուրում, Քեռու հետ, իբրեւ առանձին մարտական խմբի ղեկավար։ Նակաչիձէի խիզախ ահաբեկումը նրան արդէն ապահովել էր անվախ, յանդուգն եւ քաջ հայդուկի համբաւ։ Հայկական ինքնապաշտպանութիւնը թաթարների դէմ փաստեց, որ նա միաժամանակ եւ հմուտ կազմակերպիչ էր եւ տաղանդաւոր խմբավար ու ռազմագէտ։

Բայց եւ այնպէս Դրոյի հոգին խաղաղ չէր հայոց լեռներում։ 1905 թուականի երկրորդ կէսից սկսած, մանաւանդ, Ռուսաստանը իր ամբողջ տարածութեանը վրայ դարձել էր ալեկոծ ովկիանոս՝ յեղափոխական փոթորիկներով։ Ռուս բանակի պարտութիւնը հեռաւոր արեւելքում ճաբոնի կողմից, երեւան էին բերել ցարական վարչաձեւի բոլոր փտած կողմերը։ Ժողովրդական զանգուածները, յեղափոխական կուսակցութիւնների ղեկավարութեամբ գլուխ էին բարձրացրել ատելի միակեցութեան դէմ։ Ոստիկանութիւնը անզօր էր զսպելու պոռթկումները։ Կառավարական խստութիւններին ժողովուրդը պատասխանում էր գործադուլներով, գիւղացիական խռովութիւններով, ահաբեկումներով։

Ցեղափոխական խուլ մրրիկների արձագանգները ներքին Ռուսաստանից հասնում էին եւ Զանգեզուրի ընկերներին։ Դրոյի զինակից ընկերները՝ Մարտիրոսը, Համոն, Զանփոլատեանը, Զոփուռը, Քիւրտը եւ ուրիշներ մահացու սարսափ էին ձգել ռուս կառավարութեան գործակալների վրայ, իսկ Դրոն, իր մտածելով, զուր ժամանակ էր վատնում Զանգեզուր-Նախիջեւանում թաթար մութ ամբոխին դէմ կըռուելով։ Նա երազում էր նետուել ռուսական յեղափոխութեան փոթորիկների մէջ շարունակելու համար Սազանով ու Կալեայեւ անվեհեր ահաբեկիչների գործը։ Նա կրկին ու կրկին ջանաց համոզել Նիկոլ Դումանին, որ իրեն յետ կանչէ եւ մարտական ձեռնարկների դնէ կառավարութեան դէմ։ Նիկոլ Դուման մնաց անդրդուելի, մինչեւ որ հայ-թաթարական պատերազմը փաստորէն վերջ գտաւ վարչաձեւի փոփոխութեամբ Հոկտեմբեր 17ի հրովարտակից յետոյ՝ Ռուսական Սահմանադրութեան հռչակումով։

Հայ-թաթարական պատերազմից հայերը հոգեբանօրէն դուրս եկան յաղթական, թէեւ երկու կողմերն էլ մարդկային ու նիւթական ծանր կորուստներ ունեցան, որոնց պատասխանատուութիւնը ձգեց Շէյթանի՝ արդէն իսկ ծունկի եկած ցարական վարչաձեւի վրայ։ ըմկըսուեց հայդուկների զօրացրումը, եւ Դրոն էլ, յաղթական, վերադարձաւ «խաղաղ գործունէութեան»։ Կարճ հանգստից յետոյ Դիլիջանի ամբրանոցում մարտական ընկերների հետ նա անց-

նում է Բագու, ուր նոր գործի է դրւում Ոսկանապատի կեդր. Կոմիտէի կողմից, այս անգամ իր մտերիմ ընկերոջ՝ Մարտիրոս Զարուխեանի հետ։

Մարտիրոսն էլ՝ Դրոյի խմորից, բիւրեղ հոգու եւ ադամանդեայ կամքի տէր դաշնակցական հայդուկ, անբաժան ընկերը Դրոյի, գտնւում էր Ոսկանապատի կեդր. Կոմիտէի տրամադրութեան տակ, որպէս գաղափարական քաջ դաւաճանների ու մատնիչների սարսափը։ Դրոն եկաւ միանալու նրան։

Այդ օրերին, մասնաւորապէս վրաց հասարակութեան մէջ, մեծ գրգռում կար ռուս բանակի զօրավար նախիջեւանցի Թաթար Ալիխանով Աւարսկու դէմ։ Այս հրէշին յանձնուած էր Վրաստանի Գուրիայի շրջանի գիւղացիական շարժումների զսպումը։ Դաժան միջոցներով եւ բազմաթիւ զոհեր խլելով Ալիխանովը արեան մէջ էր խեղդել Գուրիայի վրացի գիւղացիութիւնը։ Նա մեղսակից էր եւ Նախիջեւանի Թաթարների հակահայ յարձակումների կազմակերպութեան։

Հ.Յ.Դաշնակցութեան որոշումով զօրավար Ալիխանով Աւարսկին եւս չան սատակ պիտի լինէր, բայց վրաց յեղափոխականների դիմումի վրայ յետաձգել էր որոշման գործադրութիւնը. վրացիները ուզում էին սեփական ձեռքերով պատժել իրենց թշնամուն։ Սակայն, ամիսներ անցան, վրացիները մի քանի անյաջող փորձեր կատարեցին, բայց չկարողացան սպաննել Ալի-

խանովը։ Դաշնակցութիւնը ստիպուած եղաւ իր վրայ առնել վրացական Գուրիայի չար ոգուն։ «Այդ պատիւը վիճակուեց մեզ՝ Մարտիրոսին եւ ինձ»,— պատմում էր Դրոն։ Թոյլ տուէք, ուրեմն, դէպքի պատմութիւնն էլ Դրոյի խօսքերով առաջ բերել նրա բերանից մի քանի անգամներ լսելով Ալիխանովի մահապատժին պատմութիւնը։

«Աբրահամը եւ Գրիգոր Աղաճանեանը կանչեցին ինձ եւ կեդրը. կոմիտէի անունից հարցրին. «Ժամանակը եկել է Ալիխանովի արեւը մարելու։ Ուզո՞ւմ ես դու կատարես այդ պարտականութիւնը»։

—Ի հարկէ, ուզում եմ, այդ ինչ հարցնելու բան է։

—Ո՞ւմ հետ ես ուզում գնալ, երկու հոգով պէտք է անէք։

—Ի հարկէ Մարտիրոսի, այդ ի՞նչ հարցնելու բան է։

—Ուրեմն, գնացէք պատրաստուեցէք, որ չուտով ճանապարհ ընկնէք։

Ես չտապեցի Մարտիրոսի մօտ։ Մարտիրոսը պառկած էր մահճակալի վրայ եւ փորձում էր թուքը հասցնել առաստաղին։ Պատմեցի Աբրահամի եւ Աղաճանեանի ասածը։

Մարտիրոսը խենթի պէս թռաւ տեղից, փաթաթուեց վզիս եւ սկսեց քաշքշելով ինձ, վալս պարել։

—Թո՛ղ ինձ. վերջ տուր յիմարութեանդ, բարկացայ ես։

—Ուռա՛, կեցցէ՛ Հայաստան, պոռաց նա...

ժանգոտեցինք, վերջապէս կարող ենք չոչ չ քաշել...։

Պէտք է ասել, որ Մարտիրոսը վարակ-ուած էր անջատական շարժումով։ Նոյնիսկ խօսք կար, որ նա պատրաստ է հեռանալու Դաշնակցութեան շարքերից եւ միանալ էսէռնե-րին։ Ես նրան աշխատում էի պահել մեր մէջ։ Նա հոգեպէս տառապում էր, որովհետեւ մի կողմից տարուել էր համառուսական յեղափո-խութեամբ, միւս կողմից սիրում էր եւ չէր կարողանում բաժանուել դաշնակցական ընկեր-ներից։

Երբ հանգստացաւ նստեցինք խորհրդակ-ցութեան. Մարտիրոսը խնդրեց՝

—Նիկոլի կարծիքը ի՞նչ է, նա էլ համա-մի՞տ է Ալիխանովի գործին։

Պարզ էր, որ Նիկոլ Դումանը գլխաւոր դատախազն էր Ալիխանովի։ Մարտիրոսի հետ միասին կազմեցինք մահափորձի ծրագիրը եւ ներկայացրինք Կեդր. Կոմիտէին։ Ալիխանովը Ա-լեքսանդրապոլում էր, որպէս զօրամասի հրա-մանատար։ Ալեքսանդրապոլը ռուս բանակի կեդրոնացման գլխաւոր վայրերից մէկն էր, ա-մուր պաշտպանուած։ Դիւրին գործ չէր նրան ահաբեկելը, մանաւանդ, վրացիներից անյաջող փորձերից յետոյ՝ Ալիխանովը շատ զգոյշ էր եւ լաւ պաշտպանուած։

Մարտիրոսն ու ես որոշեցինք, Կեդր. Կո-միտէի հաւանութեամբ, ահաբեկումը կատարել կամ ռումբով եւ կամ ատրճանակով, ըստ

յարմարութեան։ Ուրեմն երկու ձեւի համար էլ պատրաստ լինել։ Մարտիրոսի հետ անցանք Դիլիջան, ուր այդ ժամանակ գտնուում էին Արմէն Գարոն, Սեւ Քարեցի Սաքոն եւ ուրիշներ մեր մարտիկ ընկերներից, այստեղից Ղարաքիլիսա, ուր ստացանք ատրճանակներ ու ռումբեր։ Բոլորը տեղաւորեցինք ճամբորդական մի զամբիւղի մէջ, վրան էլ լեցրինք խնձորներ, իբրեւ թէ խնձոր ենք նուէր տանում Ալեքսանդրապոլի մեր բարեկամներուն։ Եւ Ղարաքիլիսայից երկաթուղիով մեկնեցինք Ալեքսանդրապոլ։ Ալեքսանդրապոլում ունէինք Աւոյի հաստէն՝ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի, որ Հ.Յ.Դ. Քարի Կեդր. Կոմիտէի անդամ ու ներկայացուցիչ էր։ Մեզ որ տեսաւ, արդէն իսկ կակազ լեզուն կապուեց։

—Ի՞նչ էք ուզում ինձանից, ինչո՞ւ էք եկել, հարցրեց նա, երբ ներս մտանք նրա սենեակը։

Մենք յանձնեցինք նրան Ոսկանապատի կեդր. Կոմիտէի կարմիր կնիքով թուղթը, որ հրահանգում էր «ամէն աջակցութիւն ցոյց տալ» մեզ, եւ պատմեցինք Ալեքսանդրապոլ մեր գալու նպատակը։

Աւոն սարսափահար բացագանչեց.

—Ես ոչինչ չեմ կարող անել, հեռացէք այստեղից չո՛ւտ...

Մարտիրոսը բարկացած ասաց.

—Ո՞նց թէ հեռացէք... մենք Դաշնակցութեան գործով ենք եկել...

—Հեռացէ՛ք, կորէ՛ք, ես դաշնակցական չեմ... գործ չունեմ ձեզ հետ։ Ռադ եղէք։

Ես Աւոյին ծանօթ էի, գիտէի նրա վախկոտ բնաւորութիւնը։ Կէս-լուրջ, կէս-կատակով ասացի նրան.

—Ուրեմն, այդպէս, դաշնակցական չես... նշանակում է՝ սխալուել ենք յայտնելով ձեզ մեր գաղտնիքը... Ցեղափոխական օրէնքով պէտք է այժմ սպաննենք ձեզ, որպէսզի մեզ չմատնէք...։

—Կ՛անէք, կ՛անէք, չան տղերք, էդ էլ կ՛անէք, արտասանեց նա նոյնպէս կէս-լուրջ, կէս-կատակ...։

Բայց եւ այնպէս մերժեց մեզ օգնել եւ ջանաց համոզել, որ անմիջապէս հեռանանք, փորձանք չբերենք քաղաքի գլխին։ Եւ զամբիւղը մեր ձեռքը տալով՝ ճամբու դրեց, դուռը պինդ փակելով մեր յետեւից։

Մութ երեկոյ էր։ Մայթի վրայ մի պահ կանգնեցինք. ո՞ւր երթայինք, տեղ չգիտէինք։ Կարող էինք ոստիկանութեան ուշադրութիւնը գրաւել, մատնուել...։

Մէկ էլ մեր առջեւը ցցուեց, կարտուզը ծոծրակին, կուրծքը բաց, երգը բերնին, երեւի քիչ խմած մի երիտասարդ։ Ես ճանաչեցի նը-րան. Դաշնակցութիւնից հեռացուած էր ինչ որ մի յանցանքի համար։ Կանգ առաւ չուարած, մի պահ լռեց եւ մօտենալով ինձ՝ ժպտուն.

—Վա՛յ, քու հոգուն մատաղ... էտիկ դո՞ւ ես, էս էլ ես եմ... Հոգիդ ուտեմ, ի՞նչ էք ա-

նում էստեղ։

Մի միտք ծագեց մէջս։ Բացատրեցի, թէ Անի ուխտի ենք գնում, գիշերելու տեղ չունենք…

—Վա՛յ, ես ձեր հոգին ուտեմ, ահա մեր տունը, մեզի հիւր եղէք։ Ու սկսեց թեւից քաշել առաջ։

Կը լինի, չի լինի ուրիշ ճար չունէինք։ Համաձայնուեցինք։

Վերցնում ենք զամբիւղը եւ հետեւում գիշերաշրջիկ բարեկամին։

Տանը «Անիի ուխտաւորներին» ընդունում է մեծ եղբայրը նոյնպէս Ալեքսանդրապոլի լոթիներից։ Ամուսնացած եւ երեխաների տէր։ Օղի ծախող, Միկիտան էր պահում։ Զուարթ, թռուցիկ խօսքով մի տղամարդ։

Բացւում է գիւմրիցու չէն սեղանը։ Մէջտեղ են գալիս չիշ ու գաւաթներ։ Շուտով բացւում են եւ տանտէրների լեզուները։ Ասենք գիւմրիցու լեզուն, ինչպէս եւ սիրտը, միշտ բաց էր…։

Պարզւում է, որ երկու եղբայրներն էլ «թունդ դաշնակցական էին, միայն թէ… շարքերից արտաքսուած… անկարգ կեանքի պատճառով… Քանի, քանի անգամներ դիմել էին կոմիտէին, թախանձել, որ վերընդունեն կուսակցութեան մէջ, բայց մերժուել էին։ «Պէտք է փոխէք ձեր կեանքի ձեւը», պատասխանել էր կոմիտէն, բայց «միկիտանչին» ուրիշ ի՞նչ ձեւով կարող է ապրել…

Մի պահ մեր տղաների սիրտը վախ է ընկնում. չմնի սխալ տեղ էին ընկել։ Մանաւանդ որ, փոքր եղբայրը երկդիմի ակնարկներ էր անում եւ անվերջ բաժակ էր պարպում «Անիի ուխտաւորների» կենացը...

Մեծ եղբայրը, երեւի կռահելով հիւրերի հոգեկան վիճակը, աշխատում է փարատել նրանց մութ կասկածները։

—Ձեր հոգուն մեռնեմ, ախպրտիք, էս էլ, մեր ազգի կենացը... Մենք դաշնակցական ենք... դաշնակցական էլ կը մեռնենք...

Կէս գիշերի մօտ դուրսը ինչ որ իրարանցում է ընկնում։ Մարդկանց արագ վազք, սուլոցներ, աղմուկ։ Փոքր եղբայրը վազում է դուրս...

Մարտիրոսը ցատկում է տեղից եւ Դրոյին առաջարկում. «Հեռանանք»։

Մեծ եղբայրը յուզւում է։ Կինը լալիս է։ Վրայ է հասնում եւ փոքր եղբայրը։

—Ինչպէ՞ս թէ հեռանալ։ Անկարելի է։ Փողոցը բռնուած է ոստիկաններով... Դուք կը մնաք այստեղ... պէտք է մնաք... Մեր դիակների վրայով միայն ոստիկանները ներս կը մտնեն։

Մեծ եղբայրն ու կինն էլ աղաչում են, որ մնան։ Այժմ դուրսը վտանգաւոր է, կարող են ձերբակալուել... Այստեղ ձեր մազին դիպչող չի լինի...

Համակերպւում են եւ գիշերը ապահով անցնում են դաշնակցութիւնից վտարուած եր-

կու լոթի եղբայրների հսկողութեան ներքեւ։

Առաւօտ կանուխ Մարտիրոսն ու Դրոն ուզում են ձգել տունը, բայց եղբայրները թոյլ չեն տալիս։ Երեւի հասկացել էին, թէ ովքեր էին իրենց հիւրերը։

Ինդրում են, որ նախ՝ իրենք դուրս գան, տեսնեն, թէ ի՞նչ է կատարւում դուրսը, որքա՞ն ապահով է մեկնիլը։

—Մարտիրոսը վարանում էր, ասում էր Դրոն, բայց ես բոլորովին ապահովեցրի։ Հաւատացրի, որ երկու եղբայրները վստահելի մարդիկ էին եւ պատրաստ էին իրենց կեանքի գընով պաշտպանելու մեզ։

Քիչ վերջը վերադառնում է մեծ եղբայրը եւ յայտնում է, որ գիշերը ինչ որ դէպք է պատահել, զօրքը եւ ոստիկանները դեռ շրջում են փողոցներում, վտանգաւոր էր օտար մարդկանց երեւալը դուրսը...

«Անիի ուխտաւորները» համակերպւում են մնալու՝ երկու եղբայրներին յանձնարարելով, որոշ հետազօտութիւններ կատարելու քաղաքում։ Սրանք ուրախութեամբ դուրս են գալիս։

—Մարտիրոսը շատ ջղայնացած էր, ասում էր Դրոն։ Հապա եթէ մատնիչ դուրս գային այդ անծանօթ եղբայրները... Հերը անիծած թէ կը ձերբակալուենք, բայց ինչ պատասխան պիտի տանք Ոսկանապատի կեդր. Կոմիտէին, ինչ երեսով պիտի ներկայանանք Դումանին... Երեխայութիւն չէ՞ր յանձնուել անծանօթ մարդկանց վստահութեան... Դրոն հանաքներ էր անում եւ

ծիծաղում էր Մարտիրոսի փիլիսոփայութեան վրայ։

Կէսօրը անցնում է անորոշութեան եւ լարուած սպասումի մէջ։ Ճաշին վերադառնում են եղբայրները զուարթ ու տեղեկութիւններ են բերում դուրսի մասին։ Գիշերուայ դէպքը հասարակ բան է եղել. ոստիկաններ գողերի էին հետապնդել, որոնք ատրճանակով պաշտպանուելով՝ անհետացել էին։ Զօրավար Ալիխանովը, չափազանց կասկածամիտ, կարծել է, թէ դաւ է իր դէմ եւ զօրք է հանել փողոց... այժմ փողոցները մաքուր էին, զօրքն ու ոստիկանութիւնը քաշուել էին իրենց տեղերը... Միկիտանի յաճախորդ զինուորները ասել էին, թէ Ալիխանովը պատրաստւում է կարս մեկնելու...

—Ուրեմն, կարելի է Անի ուխտի գնալ, կատակում է փոքր եղբայրը։

Մարտիրոսը քիչ է մնում պայթի ծիծաղից։ Փաթաթւում է լոթու վզով եւ քաշքշելով սկսում է վալս պարել...

Ճաշում են հանդարտ՝ բաժակները չխկացընելով։ Ճաշից յետոյ, թողնում են խնձորներով լի զամբիւղը տանտիկնոջ հսկողութեան տակ եւ Մարտիրոսն ու Դրոն դուրս են գալիս քաղաքում օդ առնելու, որպէսզի յաջորդ առաւօտ մեկնին Անի...

Առանձին-առանձին պտըտում են քաղաքի զանազան մասերում, զօրանոցների շրջանում։ Հետազօտում են Ալիխանովի անցած ճանապարհները։ Գինետներում տեղեկութիւններ են

հաւաքում իրենց հետաքրքրող հարցերի մասին։

Աւոյի փորձից խրատուած՝ ոչ մի ընկերոջ չեն ներկայանում։ Որոշում են մինակ կազմակերպել ու գլուխ բերել գործը։ Դրոն, սակայն, փողոցում պատահաբար հանդիպում է իր մօտ բարեկամ մանկավարժ Տիգրան Ռաշմաճեանին, որ իբրեւ տեսուչ պաշտօնավարում էր Հայոց դպրոցում։ Ռաշմաճեանը տանում է նրան տուն եւ ուզում է մօտը պահել։ Վեց-եօթը ե-րեխայի տէր էր Ռաշմաճեանը, հեզահամբոյր եւ ամէնքից սիրուած մարդ, յայտնի դպրոցական գործիչ, համոզուած դաշնակցական։ Դրոն միշտ հիացումով էր լիշում նրա անունը։

Կատարուած հետազօտութիւնը պարզում է կացութիւնը։ Ճշդւում է, որ զօրավար Ալիխանովը պատրաստւում էր մեկնելու Կարս։ Ուրեմն, պէտք էր աճապարել...

Կարճ խորհրդակցութեան մէջ որոշւում է անմիջապէս ձեռնարկել գործի։ Մարտիրոսը պնդում է, որ ռումբը ինքը նետէ։ Նակաչիձէի վրայ Դրոն էր նետել, ուրեմն, այժմ առաջնութիւնը իրեն է պատկանում։ Դրոն տեղի է տալիս։ Ռումբը նետելուց յետոյ ատրճանակներով չփոթութիւն առաջ պիտի բերէին եւ պիտի ջանային անհետանալ...

«Անիի ուխտաւորները» առնում են իրենց խնձորները, մնաս բարով են ասում հիւրասիրող բարի եղբայրներին եւ մեկնում։

...Մանրամասնութիւնները թողնում եմ վիպագիրներին... Երեւում է Ալիխանովի կառքը՝

չրջապատուած զինուորներով։ Փողոցներում իրարանցում, սուլոց, ոստիկանների թոհ ու բոհ... անցորդները շտապում են հեռանալ կողքի փողոցները... Զօրավարը հպարտ բազմած է կառքում եւ խուզարկու աչքերով դիտում է չրջապատը։

Մէկ էլ, ստուերի միջից դուրս է թռչում Մարտիրոսը, բացագանչում է՝ «ա՛ռ քեզ» ու շպրտում ռումբը Ալիխանովի գլխին։ Ահռելի պայթիւն։ Կառքը եւ կառքի միջինները բզիկ-բզիկ են լինում։ Անդին՝ որոտում է Դրոյի մաուզերը։ Ընդհանուր խուճապի մէջ ահաբեկիչները անհետանում են։ Դէպքի բերումով Դրոն ընկնում է Տիգրան Ռաշմաճեանի տունը։

—Ես ապշած մնացի, պատմում էր ինքը Դրոն. ինչպէ՞ս ինկայ ես Տիգրանի երեխաներով լեցուն տունը։ Հապա եթէ ոստիկանութիւնը հասնէր, պիտի բնաջնջուէր Տիգրանի ընտանիքը։ Ես ի՞նչ իրաւունք ունէի նրան վտանգի ենթարկելու...

Հէնց մի քիչ հանգստանում է, Դրոն ուզում է հեռանալ։ Ռաշմաճեանը կանգնում է չէմքին եւ երկու ձեռքերով դուռը բռնելով՝ ասում է վրդովուած.

—Դու իմ դիակի վրայով միայն կարող ես անցնել... Ի՞նչ իրաւունքով ես ինձ վիրաւորում։ Ինչպէ՞ս կարող եմ ես թոյլ տալ, որ այսպիսի բոպէի հեռանաս։ Կը մնաս այստեղ. ինչ որ պատահելու լինի, բոլորիս միասին կը պատահի։

Դրոն թախանձում է, հաւատացնում է, թէ որեւէ վտանգ չկայ իրեն համար, ինքը ապահով տեղ ունի. անօգուտ, Ռաշմաճեանը մընում է անդրդուելի։

Գիշերը Դրոն անցկացնում է Ռաշմաճեանի մօտ։ Յաջորդ օր տեղական ընկերները անվրտանգ դուրս են բերում նրան Ալեքսանդրապոլից։ Մարտիրոսը արդէն հեռացել էր։

Ալիխանովի ահաբեկումը, ցնցող տպաւորութիւն գործեց Կովկասում եւ չփոթութեան մատնեց կառավարական շրջանակները։ Ամէնքը համոզուած էին, որ զօրավարի սպանութիւնը վրացիների գործն էր, իբրեւ փոխվրէժ Գուրայի բարբարոսութիւնների համար։ Տեղի ունեցան վրացիների ձերբակալութիւններ Ալեքսանդրապոլում եւ դուրսը։ Կայարաններում ծառայող վրացիներից շատերը բանտարկուեցին։

Վրացիները իրենք էլ չէին հերքում այդ փաստը եւ նոյնիսկ պարծենում էին, թէ իրենք լուծել են Գուրայի վրէժը։ Նոյնիսկ վրացական թռուցիկներ լոյս տեսան, որով Ալիխանովի սպանութիւնը վերագրւում էր վրաց յեղափոխականներին։

Շուտով, սակայն, յայտնի դարձաւ ճշմարտութիւնը. զօրավար Ալիխանովի ահաբեկումն էլ դաշնակցական մարտիկների գործն էր։ Յայտնի դարձան եւ ահաբեկիչների անունները — Դրօ եւ Մարտիրոս — լծակից զոյգ ընկերներ, որոնցմով հպարտ էր Հայ Մարտական կուսակցութիւնը։

Ե

ՔԱՐԻԻՂԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՍՈՒՐԷՆ ԷՖԷՆՏԻՆ

Սկսուած էր արդէն հալածանքը Հ.Յ.Դաշնակցութեան դէմ։ Հարիւրներով ձերբակալւում եւ բանտ էին նետւում դաշնակցական մտաւորական եւ մարտական գործիչները։ Ցարի կառավարութիւնը որոշել էր գլխատել հայ յեղափոխութիւնը։

Բարեբախտաբար վրայ հասաւ Օսմանեան Սահմանադրութիւնը եւ Ռուսաստանում վտանգուած ուժերը հետզհետէ փոխադրուեցան սահմանի միւս կողմը։ Կամ Պարսկաստան, ուր ծայր էր տուել յեղափոխութիւնը Շահի բռնակալութեան դէմ։

Մարտիրոսը անցաւ Ատրպատական Դումանի եւ Ռոստոմի հետ, ուր եւ նահատակուեց ճակատամարտում։ Դրոն, թէեւ վտանգուած, չարունակեց մնալ Բագւում։ Ընկերները պընդում էին, որ նա էլ հեռանայ, բայց նա յամառում էր մնալ։ Ինչպէ՞ս հեռանալ, սեփական կաշիի ապահովութեան մասին մտածել, երբ այնքա՜ն գործ կար անելիք, երբ բանտարկուած ընկերների տեղերը մնում էին պարապ...

Այդ օրերին էր, 1908 թուի ամառը, որ ես ծանօթացայ Դրոյի հետ։ Իսկապէս մեր

հանդիպումը առաջինը չէր։ Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, 1905ի վերջերին ես Նրան տեսել էի Էջմիածնում։ Դրոյի քոյրը ամուսնացած էր հայրենակից, Ճեմարանի հայերէն լեզուի ուսուցիչ Սեթ Ցարութիւնեանի հետ։ Ես յաճախ լինում էի նրա տունը։ Մի կիրակի, ճաշին, եկաւ զանազան ծարաներով բեռնաւորուած աղմկոտ մի երիտասարդ. խաղաց քրոջ երեխաների հետ, ճաշից առաջ խոհանոց մըտնել-ելնելով կշտացաւ եւ առանց սեղան նստելու հեռացաւ։ Իմ հայրենակից Սեթի աներձագն էր, որի հետ նոյնիսկ մէկ խօսք փոխանակելու առիթ չունեցայ։

1908ի ամառը Ռայոնական ժողով էր գումարուած Բագուում։ Դաշնակցութեան կարեւոր անձերից ով ազատ էր մնացել, այդտեղ էր։ Ինձ էր վիճակուեց ներկայ գտնուելու, իբրեւ Պետերբուրգի ուսանողութեան ներկայացուցիչ։ Եւ երբ ժողովից յետոյ, դիւանը զբաղուած էր արձանագրութիւնների եւ բանաձեւերի դասաւորութեամբ, Պապաշայի մօտ, վրայ հասան ոստիկանները խուզարկութեան համար։ Արձանագրութիւնների տրցակը ձեռքիս՝ ես դուրս ընկայ. դուրսը ընկերները կառք նստեցրին եւ ապահով թռցրին բժ. Զաւրեանի մօտ, հիւանդանոց։ Այստեղ բժիշկը ինձ ծանօթացրեց մի երիտասարդի հետ, որ դուրս եկաւ Սեթի կնոջ եղբայրը՝ Դրոն։ Կարելի է ասել, այդ օրուանից սկիզբ առաւ մեր մտերմութիւնն ու գործակցութիւնը եւ անստուեր շարունակուեց մինչեւ

վերջը։ Բժ. Զաւրեանից իմացայ նաեւ, որ այս երիտասարդն է եղել Նակաչիձէի ահաբեկիչը։ Հիւանդանոց պահուած մնացի մի քանի օր, եւ ամէն օր տեսնւում էի Դրոյի հետ։ Ճաշում էինք միասին բժիշկի մօտ։ Նրա բաց, զուարթ, կատակասէր բնաւորութիւնը շատ էի հաւանում։ Նրա կինն էլ՝ Նուարդը եւ երեխան՝ Լիւտիկը Բագւում էին։ (Ներողութիւն եմ խընդրում ընթերցողից. սրանից առաջ տպուած էր, որ Դրոյի կնոջ անունը Արծուիկ է։ Նուարդը չուրջ 6 տարի ապրեց Դրոյի հետ Իգդիրում, Բագւում եւ Բայազիտում։ Նուարդը նուրբ կազմով ու տժգոյն, եթերային դէմքով հեզահամբոյր մի գեղեցկուհի էր։ Անհուն սիրով կապուած էր Դրոյի հետ եւ անտրտունջ համակերպւում էր կեանքի դժուարութիւններին)։

Շուտով ես հեռացայ Բագուից։ Կուսակցութեան յանձնարարութեամբ մեկնեցի Երեւան, որտեղից գործիչ ուժեր էին պահանջում։ Ճանապարհին մի քանի օր մնացի Թիֆլիսում, ուր կազմակերպութիւնը նոյնպէս ծանր տագնապ էր ապրում եւ հազիւ կարելի եղաւ մի քանի երիտասարդ ընկերներ քով-քովի բերել։

Գնում էի երկաթուղու կայարան Երեւան մեկնելու համար, Երբ Վորոնցովի կամուրջի վրայ Դրոն ելաւ առջիս։

—Դու այստե՞ղ։

—Այո՛, ես այստեղ։

—Ո՞ւր։

—Երեւան։

—Ես էլ Երեւան։ Գնանք միասին։ Փող ունե՞ս մօտդ։

Ունէի 10 ռուբլի եւ երկաթուղու տոմսակ։ Դրոն էլ տոմսակ ունէր, բայց փող — գրպանները պարապ էին։

—Քանի որ փող ունես, երթանք ճաշենք, առաջարկեց նա։

Մտանք «Նադ Քուռոյ» ճաշարանը գետի ափին։ Իսկոյն վրայ թափուեցին սպասաւորները, որոնց անծանօթ չէր Դրոն։ Քիչ վերջը սեղանը լեցուեց ուտելիքներով եւ խմիչքներով։

Եւ երբ ճաշից յետոյ, տեղի ունեցաւ հաշուեյարդար, իմ խեղճ տասը ռուբլուց ողորմելի բեկորներ միայն մնացին։ Մինչդեռ առնուազն մէկ գիշեր եւ մէկ ցերեկ ունէինք մեր առջեւը։ Դրոյի գրպաններից էլ մի քանի կոպէկ դուրս եկաւ։ Ամբողջ գումարը ստիպուած եղայ առնել իմ հակակշռին տակ, որպէսզի ճանապարհին անօթի չմնայինք։

Մեկնեցինք։ Թէ ճաշի ժամանակ եւ թէ ճանապարհին ես աշխատեցի իմանալ, թէ ի՞նչ էր նրա ուղեւորութեան նպատակը։ Իմը պարզ էր. գնում էի գործիչ, կազմակերպական աշխատանքի համար։ Դրոն ի՞նչ գործ ունէր Երեւանում, այսպիսի անստոյգ եւ վտանգաւոր պայմաններին։ Իմ հարցումներին նա խօսքը կտուր էր գցում կամ կատակի էր տալիս եւ կամ առասպելական պատմութիւններով փորձում էր ինձ լոլոզել։

Ալեքսանդրապոլի կայարանում, ճաշին, մեր

հաւաքական դրամագլուխը համարեա սպառեցինք։ Երբ Երեւան հասանք, երեսիս մօտ 10 կոպէկ էր մնացել։ Կառքի բաւական չէր։ Հնգական կոպէկներով նստանք երեւանցիների նշանաւոր ձիաքարշը՝ ՔՈՆՔԱՆ եւ չախք-չուխք՝ հասանք քաղաքի կեդրոնի պարտէզը։ Պանդոկ չէինք կարող իջնել. երկուսս էլ անձագիր չունէինք։

—Երթանք Ամիրովի մօտ, առաջարկեց Դրոն։

Գէորգ Ամիրովը, երիտասարդ վաճառական, Երեւանի ականաւոր դէմքերից էր եւ Դաշնակցութեան բարեկամ։ Նրա մօտ կարող էինք պատսպարան գտնել. հաց ուտել եւ «փոխառութիւն» անել։ Հաճելի մարդ էր։

Գնացինք։ Աղստաֆեանի վրայի մեծ տան պատուհանները փակ էին։ Բարի նշան չէր։ Զանգը տուինք՝ մէկ, երկու, երեք։ Ներսը ո՛չ մէկ շարժում։

Քիչ վերը՝ նոյնպէս Դաշնակցութեան բարեկամ Արտուշ Աւետովի տունն էր՝

—Գնա՛նք Արտուշի մօտ, առաջարկեց Դրոնգնացինք։ Մէկ, երկու, երեք զանգ։ Դուրս եկաւ քնաթաթախ ծառան։

—Աղէն տանը չի՛, յայտարարեց նա արհամարհանքով։

—Ո՞ւր է հապա աղան։

—Ես ի՞մ... Եա՛ կլուբում քարտ ա խաղում, եա՛ զաւոտում փիվա ա խմում... Աղէյի բանը ո՞վ կ'իմանայ...

Արտուշը կլուբում քարտ չէր խաղում։ Նրան գտանք իր «Զանգա» գարեջրի գործարանում, «փիվա» էր խմում։

Արտուշը Դրոյի խաս բարեկամն էր։ Մեզ ընդունեց գրկաբաց։ Զանգուի ճիշդ եզերքին սեղան պատրաստել տուեց։ Կշտացրեց։ Հիւրասիրեց։ Զուարճալի պատմութիւններ արաւ։ Դրոյի հետ ականջ-ականջի ինչ որ խօսքեր փոխանակեցին։ Եւ քիչ վերջը երեւացին «մեր լոթիները» — մի քանի պատանի երիտասարդներ, Վաչոյի գլխաւորութեամբ։

Դրոն մի պահ առանձնացաւ նրանց հետ։ Ապա Վաչոն մնաց մեզ հետ, միւսները հեռացան։

Երբ խրախճանքը վերջանալու մօտ էր, Արտուշը հարցրեց Դրոյին.

—Փողի պէտք ունէ՞ք։

Ի հարկէ պէտք ունէինք։ Հանեց գրպանից 25 ռուբլինոց եւ մեկնեց ինձ։

—Դրոյին չտաք, ասաց նա կատակով, թէ չէ վաղը բան չի մնայ։

Ապահովուած էր եւ մեր բնակավայրը Վաչոյի մօտ։

Վաչոն — Վաչական Մելիքեանը — մեր երիտասարդ ընկերներից էր, դաշնակցական անձնուէր ընտանիքի զաւակ։ Իր եղբօր եւ քրոջ հետ անվախ շարունակում էր բանտարկեալ երէց ընկերների գործը։ Անդամ մարտական խմբի։ Հետագային բանտարկուեց եւ մեռաւ Օռլովի բանտում։

Տեղաւորուեցինք Վաչոյենց մօտ։ Ես անցայ իմ աշխատանքին։ Դրոն անհետանում էր չգիտեմ ուր եւ շարունակում էր իր խորհրդաւոր կեցուածքը։ Տանը Վաչոյի հետ գաղտնի բաներ էին անում։ Վաչոյին մեծ եղբայրը, որ անջատական հովերով էր ցոյց տալիս դէպի նրանց «դաւադիր փսփսուքները»…

Մի օր էլ յայտնեց, թէ պէտք է երթայ Իգդիր ծնողներին տեսնելու։ Ես էլ վերջացրել էի Երեւան գործս եւ պիտի անցնէի էջմիածին։ Ճանապարհուեցինք միասին։

Էջմիածնում բաժանուեցինք։ Ես, տեղական ընկերների հետ, զբաղուեցի կազմակերպական գործերով։ Դրոն, իր ասելով, երեկոյեան պիտի հասնէր Իգդիր։

Յետոյ իմացայ, սակայն, որ Իգդիրը իմ աչքին թոզ փչել է եղել։ Էջմիածնում ինչ որ անելիք ունէր եւ անմիջապէս վերադարձել էր Երեւան։ Իսկ մի քանի օր անցած՝ Երեւանից ստացուեց ցնցող մի լուր։

Օրը ցերեկին, քաղաքի կեդրոնում, Շահնազարովի դեղարանի առջեւ, մայթի վրայ, չանսատակ ընկել էր ոստիկանապետ Տէր-Սահակովը։ Ահաբեկիչը ազատ էր…

Այս, ինչպէս եւ նախորդ՝ ժանտարմական գնդապետ Բուրկացկու մահապատիժը դաշնակցական ահաբեկիչների ձեռքով զգալի չափով բարձրացրեց Արարատեան դաշտի հայութեան ընկճուած տրամադրութիւնը։ Ժողովուրդի մէջ ատելութիւն լեռնացած էր, մանաւանդ, Տէր-

Սահակովի դէմ, որ կոյր գործիք էր դարձել ռուս կառավարութեան ձեռքին։ Նահանգապետ Տիգենհաուզի հաւատարիմ շունը ամէն տեղ յայտարարում էր, թէ իր ջանքերով այլեւս Երեւանում ո՛չ մի յեղափոխական չէր մնացել...

Երեւանից մենք բաժանուեցինք։ Կուսակցութեան որոշումով, հակառակ իր կամքի, Դրոն հեռացաւ Կովկասից։ Մարտիրոսը արդէն Թաւրիզում էր։

Դրոն գաղտնի անցաւ ռուս-Թրքական սահմանը եւ հաստատուեց Հին Բայազիտում։ Հօր եւ Բագուի բարեկամների օժանդակութեամբ նա ձեռնարկեց առեւտրական գործի — քարիւղի եւ շաքարի մեծաքանակ վաճառականութեան եւ մսացու տաւարի հայթայթման։ Հայրը Իգդիրի ռուս զօրամասերին միս էր մատակարարում, Դրոն, Սուրէն էֆէնտի անունով, շուտով դարձաւ անուանի վաճառական, մինչեւ Վան ու Ալճաւազ եւ մինչեւ Կարին՝ գործի կապեր հաստատելով շրջանի առեւտրականների հետ կամ հիմնելով սեփական մասնաճիւղեր։ Կովկասից ու Սիբիրից փախստական յեղափոխականները հաւաքուեցին նրա շուրջ, իբրեւ Սուրէն էֆէնտիի գործակատարներ, ինչպէս Գալուստ Ալոյեանը, Վահան Մինախորեանը, Մակուեցի Մեսրոպը եւ շատ ուրիշներ։

Դրոյի համբաւը տարածուեց ամէն կողմ։ Նա գործի եւ բարեկամական կապեր հաստատեց քրտական ցեղապետների եւ Թուրք պաշտօնեաների ու զինուորականների հետ։ Իր

քաղցր բնաւորութեամբ, բայց մանաւանդ, ա-
ռատ ու հրապուրիչ հիւրասիրութեամբ գրաւեց
բոլորի սրտերը։ Ոչ չէր ճանաչում ու չէր
յարգում Բայազէտի քարիւղի վաճառականին,
որի հիւրասէր տունը, ինչպէս եւ հմայիչ սիր-
տը բաց էր ամէնքի առջեւ։

Բայց այս արտաքին երեւոյթն էր։ Ներք-
նապէս Սուրէն էջիէտին — դաշնակցական ան-
զուգական մարտիկը եւ Նակաշիձէի եւ Ալիխա-
նովի հոգեառ հրեշտակը — Հ.Յ.Դաշնակցութեան
ներկայացուցիչն էր Կովկասի սահմանագլխին,
հաղորդակցութեան կապը Մրգաստան-Ոսկեան-
պատի եւ Վասպուրական-Տարօն-Բարձր Հայքի
միջեւ եւ զէնքերու փոխադրութեան վարիչը։
Նա կենդանի յարաբերութեան մէջ էր Արամի
եւ Իշխանի հետ, Վան, Ալադի հետ, Բաղէշ,
Մուշի եւ Խնուսի հետ, Ռոստոմի եւ բժ. Յ.
Տէր Դաւթեանի հետ, Կարին։ Իր դիրքով ու
գործունէութեամբ Դրոն յիշեցնում էր Բաֆֆիի
վէպերի հերոսներին։ Նա յարաբերութեան մէջ
էր եւ ռուս յեղափոխականների հետ. սոցիա-
լիստ-յեղափոխականներին աջակցում էր գրակա-
նութիւն փոխադրել Ռուսաստան կամ Սիբիրից
փախչողներին օգնութիւն հասցնել։

1910–11ին, երբ ես ուսուցիչ էի Կարինում,
եւ «Ցառաջ»ի խմբագիր Կարինում, Դրոյից յա-
ճախ ստանում էի ռուսերէն գրքերի կապոցներ
եւ օգնում էի Ռոստոմին վերծանելու Դրոյի
նամակները։ Ռոստոմը, երբեմն, քիթը տրորե-
լով, քմծիծաղով ասում էր.

—Հեռագրենք Դրոյին, թող գայ ինքը կարդայ նամակը։

Բժ. Տէր Դաւթեանը առաջարկում էր.

—Անօգուտ է. ինքն էլ չի կարող կարդալ իր գրածը...

Դրոյի ազդեցութիւնը եւ հմայքը շատ մեծ էր չրջանի հայ եւ քիւրտ ժողովուրդների մէջ։ Առանձնապէս, հայ գիւղերի դաշնակցականները պաշտում էին «Ընկ. Դրոյին»։

Դրոն ջանք եւ նիւթական միջոցներ չէր խնայում եւ մշակութային գործերի համար — զարկ տալ կրթական գործին, տարածել հայերէն գիրքեր, խրախուսել մշակութային ձեռնարկներ...

Դերասան Ց. Զարիֆեանը պատմում էր, որ ինքը կազմակերպել է առաջին հայերէն ներկայացումը Հին Բայազէտում, Դրոյի տանը եւ Դրոյի նիւթական ու բարոյական քաջալերութեամբ։ Ասում էր.

—Դրոյին պէտք է համարել Հին Բայազէտի, հայ թատրոնի հիմնադիր...

Դրոյի ամենագլխաւոր գործը, սակայն, Հին Բայազէտում զէնքի փոխադրութիւնն էր եւ ժողովրդի զինումը։ Հայ-թաթարական կռիւների ընթացքում, Դաշնակցութեան կովկասեան պահեստներում մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք էր ամբարուել, որ այժմ անգործածելի էր եւ գրաւման ենթակայ ցարական իշխանութեան կողմից։ Կուսակցութեան որոշումով այդ զէնքն ու զինամթերքը, զանազան ճանա-

պարհներով, փոխադրում էր Արեւմտեան Հայաստան։ Ճանապարհներից մէկն էլ Սուրմալու-Բայազէտ գիծը։ Դրոյի ղեկավարութեամբ հաստատուած էին այլ եւ այլ կէտերում կայաններ ու ներկայացուցիչներ, եւ կայանից կայան տեղի էր ունենում զէնքի փոխադրութիւնը դէպի նշանակուած վայրերը՝ Վասպուրականի—Տարօն-Տուրուբերանի, Բարձր Հայքի ուղղութեամբ։

Դրոն ինքը կազմակերպել էր կայանները, գործի դրել երիտասարդ կամ հին փորձուած հայդուկներ եւ անձամբ հետեւում էր նրանց գործունէութեան։ Պարբերաբար զեկուցումներ էր ուղարկում Կարին, Հայաստանի Բիւրոյի հատուածին, Ռոստոմի միջոցով։ Ամէն անգամ, զեկուցումը ստանալիս, Ռոստոմը սիրով խօսում էր Դրոյի մասին, որին շատ բարձր էր գնահատում։

Ռոստոմը զարմանալի բնազդ ունէր մարդ ճանաչելու։ Առաջին տեսութիւնից իսկ — թափանցիկ հայեացքով — նա իրեն համար որոշում էր մարդու նկարագիրն ու արժէքը, թէեւ գործի մէջ Ռոստոմի համար գոյութիւն չունէին լաւ եւ վատ մարդիկ, ինչպէս եւ գոյութիւն չունէր մեծ կամ փոքր գործ։ Ամէն գործ նա համարում էր կարեւոր եւ կատարում էր անտրտունջ։ Ամէն մարդ նրա համար կարեւոր էր, եթէ ընդունակ էր տուեալ գործը կատարելու։ Բայց կային անհատներ, որոնց հանդէպ նա սէր ու գուրգուրանք ունէր։ Քեռին՝ օրինակ, կամ բժ. Տէր Դաւթեանը, Ցո-

նան Դաւթեանը, Արամը, Արմէն Գարոն ու շատ ուրիշներ։ Եւ դրանց թւում, առաջին գծի վրայ, Դրոն։ Դրոյին Ռոստոմը վերաբերւում էր անսահման սիրով ու վստահութեամբ։

1914 թուի Օգոստոս ամիսն էր։ Եւրոպան արդէն պատերազմի մէջ էր։ Թուրքիայում յայտարարուած էր սէֆէր-բէյլիքը։ Հ.Յ.Դաշնակցութեան 8րդ Ընդհանուր ժողովի պատգամաւորների մեծ մասը հեռացել էր Կարինից։ Մընացածները, Ռոստոմի եւ Վռամեանի գլխաւորութեամբ, բանակցում էին Իթթիհատի ներկայացուցիչներ Նաջի Բէյի եւ Պէհաէտտին Շաքիրի հետ, որ քիչ վերջը հայկական ջարդերի կազմակերպիչը պիտի լինէր։

Հայկական գաւառներից մռայլ լուրեր էին ստացւում։ Իթթիհատը պարտաւորւում էր Թուրքիան պատերազմի մէջ նետելու, վստահութիւն չունէր հայերի վրայ եւ աշխատում էր չէզոքացնել հայերի ուժը՝ առաջին հերթին գրաւելով Դաշնակցութիւնը, որի ղեկավարները հսկողութեան տակ էին առնւում կամ բնաջնջւում։

Վտանգը ակներեւ էր եւ Հին Բայազէտի քարիւղի վաճառական Սուրէն էֆէնտիի համար։ Նա տեսնում էր, որ իր բարեկամ գաւառական պաշտօնեաներն ու սպաները խէթ աչքով էին նայում վրան։ Նկատում էր, որ իր բոլոր շարժումներին գաղտնի հետեւողներ կային։ Մի թուրք սպայ, որին առանձնապէս մեծ ծառա-

յութիւն էր մատուցել փրկելով նրա կնոջ մահից, լուր է տալիս Դրոյին, թէ Պոլսից գաղտնի հեռագիր է ստացուել խիստ հսկողութեան տակ առնելու նրան, անշուշտ, վերջը ձերբակալելու նպատակով։ Սպան խորհուրդ էր տալիս շուտով գլխի ճարը տեսնել։

Դրոն նախատեսել էր նման հնարաւորութիւն։ Ընտանիքը փոխադրել էր Կովկաս։ Իսկոյն լուր է տալիս Զինգիլի լանջին իր բարեկամ քիւրտերին, որ նշանակուած ժամին սպասեն իրեն այսինչ ձորում Բայազէտ-Զինգիլ ճանապարհի վրայ։ Եւ յաջորդ առաւօտ, սովորականի պէս, հեծնում է ձին եւ դուրս է գալիս զբօսանքի։ Կառավարական չէնքի եւ զօրանոցի առջեւից անցնելիս պաշտօնեաներն ու զինուորականները յարգանքով ոտքի են կանգնում ու բարեւ տալիս։ Կատակով խօսքեր են փոխանակում։ Դրոն կատակով պատասխանում է եւ նախաճաշի է հրաւիրում նրանց իր վերադարձից յետոյ։ Ի՜նչ կայ որ, մարդը ելեր է զբօսանքի, շուտով կը վերադառնայ...

Հանդարտ դուրս է գալիս քաղաքից։ Դիտում է շուրջը։ Հետեւող չի երեւում։ Իջնում է հովիտը — մարդ չկայ։ Նորածագ արեւի ճառագայթները խաղում են շրջակայ բարձունքների կատարին։ Թռչունների ճռուողիւնը լեցրել է օդը։ Բոյս ու ծաղիկ, աղբիւրների կարկաչիւն, բնութիւնը հրճւում է ուրախութիւնից, բայց Դրոյի սիրտը լալիս է։ «Կարծես յուղարկաւորութիւն լինէր, պատմում էր։ Անորոշ մի

ցաւ կրծում էր կուրծքս...»։

Ի հարկէ նիւթական կորուստը չէր նրան ցաւ պատճառողը։ Տարիների ամբողջ վաստակը — ապրանքներով լեցուն պահեստներ, անասունների հօտեր, մեծաքանակ առնելիքներ վաճառականների վրայ, տուն տեղ, ահագին հարստութիւն — «Հէրը անիծած», այդ չէր նրան մտա- հոգողը։ Ինչպէս շատերին, նրան էլ պաշարել էր բնազդական ենթագիտակցական մի վախ հայի ապագայ ճակատագրի համար...

Նժոյգը զուարթ խաղում էր իր տակ։ Արդէն բաւական հեռացել է քաղաքից։ Զարմանում է, որ լրտեսող կամ գոնէ հեռուից հետեւող չկայ։ Դրոն սուր հայեացք է նետում շուրջը, «Եա՛ Փուքի Սուրս Գէորգ»՝ ամուր խթանում է ձիան եւ սրարշաւ, նետի արագութեամբ առաջ է սլանում։ Քամին վրժժում է ականջներում, ձին քափու քրտինքով է ծածկուում — քաղաքից հետապնդող չի նշմարուում։

Արեւը արդէն հասել է զենիթին։ Դրոն քաշում է սանձը եւ թռչում գետին ի մեծ ցնծութիւն քիւրտ բարեկամների, որոնք հաց ու խորովածով սպասում էին նրան աղբիւրի մօտ։

Կարճ հանգիստ, մի պատառ հաց, եւ Դրոն շարունակում է ճանապարհը քիւրտերով շրջապատուած մինչեւ Բարթողեան բարձունքը, Գայլատուայ լիճը, որտեղ արդէն անհասանելի էր դաւադիր թուրքի ձեռքը։ Իգդիր, ծնողական յարկ, ծնողական կարօտ ու սէր...

Դրոյի կեանքում բացուում է մի նոր էջ։

Զ

ԵՐԿՐՈՐԴ ԳՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Իգդիրում Դրոն երկար չի մնում։ Շտապում է Թիֆլիս, ուր ինչ որ բաներ էին կատարւում այդ օրերին։

Տեղի ունեցածը լուրջ բաներ էին։ Պատերազմը լարել էր Կովկասի հայերի ջղերը։ Ժամը հասած էր համարւում Թուրքահայաստանի ազատութեան։ Նախապատրաստւում էր համաւորական շարժումը։ Հայոց Ազգային Բիւրոն, որ կազմուել էր Հայ Դատի հետապնդման համար, իբրեւ Պողոս Նուպարի գործակից մարմին՝ այժմ բանակցութեան մէջ էր Կովկասի փոխարքայ եւ զինուորական սպայակոյտի հետ։ Հեռագրով կանչուած էին անուանի խմբապետները։ Արդէն Թիֆլիսում էին Անդրանիկը, Համազասպը։ Պարսկաստանից չուտով պիտի գար Քեռին։ Սպասւում էր Վարդանը, Սեպուհը եւ ուրիշներ։ Դրոն միանում էր շարժման։

Սեպտեմբերի առաջին օրերին էր, գիշերով, ես Կարինից հասայ Թիֆլիս։ Յաջորդ առաւօտ կանուխ մօտս եկան Անդրանիկը, Համազասպը եւ Դրոն։ Անհամբեր էին իմանալու, թէ ի՞նչ է եղել Ընդհ. Ժողովի որոշումը պատերազմի կապակցութեամբ։ Կարինից վերադարձողները հակասական բաներ էին պատմել։ Երեւի, գոհ չէր

թողել եւ Ընդհ. Ժողովի մասնակից Համազասպի զեկուցումը։

Ես մանրամասն պատմեցի Ընդհ. Ժողովի որոշումների, պատգամաւոր ընկերների տրամադրութիւնների եւ բանակցութիւնների մասին Իթթիհատի ներկայացուցիչների հետ։ Համազասպը յաճախ ընդհատում էր եւ ուղղումներ մտցնում իմ ասածների մէջ։ Երբեմն վէճի էինք բռնւում։ Համազասպը խանդավառ պաշտպան էր կամաւորական շարժման եւ իմ վերապահ արտայայտութիւնները չէին գոհացում նրան։ Անդրանիկը հեգնօրէն ժպտում էր, մերթ ընդ մերթ հարցումներ էր տալիս, եւ ուշադրութիւնը կարծես աւելի զբաղուած էր սեղանի վրայի Շուստով կոնեակի չիչով։

Երբ Անդրանիկն ու Համազասպը մեկնեցին, Դրոն դարձաւ ինձ, թէ՝

—Ի՞նչ է Ռոստոմի կարծիքը։

Ես պատասխանեցի, թէ Կարինում ռուս բանակի կողքին կամաւորական գնդեր կազմելու մասին յատուկ որոշում չի եղել. բայց համոզուած եմ, որ եթէ այդպիսի հարց դրուէր, Ռոստոմը հակառակ պիտի արտայայտուէր։

Դրոն մտախոհ՝ մի պահ լռեց։ Եւ վերջը ռուսերէն.

—Բեզ դուռակով, տի չտո դումայեշ — առանց յիմարութեան, դո՞ւ ինչ ես մտածում։

Ամէն անգամ, երբ մի դժուար լուծելի միտք է զբաղեցնում ուղեղը, Դրոն ռուսերէն

էր արտայայտում։

—Ե՞ս ինչ եմ մտածում... Ես հակառակ եմ Կովկասեան կամաւորական խմբեր կազմելուն, ինչպէս հակառակ էի Նոյն առաջարկին եւ Թուրքիայում։ Մեզ կը շահագործեն եւ վերջը կը լքեն...

—Դու ոչինչ չես հասկանում, բարկացաւ նա։ Արդէն որոշուած է. մինչեւ Նոր Տարի մենք կը լինենք Էրզրում։

Կովկասում — եւ միայն Կովկասում — այն օրերին գրեթէ ամէնքը այդպէս էին մտածում։

—Տղաներին կը հագցնեմ տրեխներ, գրպանները կը լեցնեմ հալաւ — մի չաբաթից Սալմաստից Վան կը հասնեմ, ասում էր Անդրանիկը...

Ի վերջոյ կամաւորական գնդերը կազմուեցին։ Դրոն ստանձնեց երկրորդ գնդի հրամանատարութիւնը եւ իրեն յատուկ եռանդով ու ոգեւորութեամբ անցաւ գործի։

Արտակարգ կազմակերպական շնորհք ունէր եւ զարմանալի կարողութիւն մարդկանց սրտերը գրաւելու։ Մինչ միւս խմբապետները տնտնում էին, մարդ էին փնտռում հրամանատար դիրքերի համար, Դրոն արագ կերպով իր շուրջը հաւաքեց դաշնակցական մարտիկներից լաւագոյն տարրը, հիանալի հիմքերի վրայ դրեց վարչական եւ պարենաւորման գործը, կապեր հաստատեց ռուս բանակի հրամանատարութեան հետ, ապահովեց նիւթական, զէնք ու պարէնի

պահանջը։ Հոկտեմբերի սկիզբը երկրորդ գունդը արդէն պատրաստ էր։

Վարչական մասի օգնական ուզում էր ինձ նշանակել։ Երկար ջանաց համոզել, բայց ոչ ես ինձ յարմար էի նկատում այդ պաշտօնին, ոչ էլ Ազգային Բիւրոն համաձայնւում էր, որ դուրս գամ կամաւորական Գնդի կարգադրիչ Մարմնի կազմից։ Խնդիրը լուծուեց, երբ Արմէն Գարոն Թիֆլիս հասաւ Պոլսից կարին անցնելու նպատակով։ Նա գերադասեց հայ կամաւորների գլուխը անցած մտնել Կարին եւ դարձաւ Դրոյի քաղաքական-վարչական մասի օգնականը։

Այսօրուայ պէս յիշում եմ մեր ընթրիքը «Անոնա» ճաշարանում Դրոյի ճակատ մեկնելու առթիւ։ Ներկաներից մտքումս մնացել են Յովհաննէս Թումանեանը, Խաչիկ Կարճիկեանը, բժ. Յ. Ջաւրեանը, Նիկոլ Աղբալեանը, Յովսէփ Արղութեանը։ Վերջինս, օրինակ բերելով Ներսէս Աշտարակեցուն, ճառ խօսեց թունդ ռուսասիրական ոգիով եւ յայտնութիւն մաղթեց «մեր հերոսների զէնքին»։ Նոյն ոգիով արտայայտուեցին եւ միւսներ։ Դրոն, որ միշտ նման հաւաքոյթների ոգին էր կազմում, ամբողջ ժամանակը նստած էր լուռ։ Անսովոր մի բան։ Ամէնքը ուշադրութիւն դարձրին եւ հարցնում էին, թէ ինչ է պատահել։ Ինչո՞ւ է տխուր։

Իր վերջին կարճ խօսքում Դրոն ասաց.

—Ես զինուոր եմ։ Քաղաքականութիւնից բան չեմ հասկանում։ Բայց զգում եմ եւ հա-

մոզուած եմ՝ «էտօ բուդէտ պոսլեդնիյ ի ուշիցելնիոյ պոյ» սա կը լինի վերջին եւ վճռական ճակատամարտը... կա՛մ ազատութիւն, կա՛մ մահ... Եւ զգում եմ նոյնպէս, որ ով գիտէ քանիսը մեզանից չեն վերադառնայ կռուի դաշտից... Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում... Տղերք ջան, ցտեսութիւն էրզրում...

Ամէնքը յուզուած էին։ Թումանեանը ոտքի ելաւ՝ երկար վզի վրայ գեղեցիկ գլուխը վեր.

—Դրօ ջա՛ն, էս օր հայոց ազգն է խօսում քո բերնով... Շէն մնաս, ի՞նչ մեծ խօսք էր ասացիր. «Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում»... Թոյլ տուր համբուրեմ քո այդ հերոսի ճակատի...

Ու համբուրեց։

Ցաջորդ երեկոյեան Դրոն մեկնեց Երեւան՝ պատրաստ խմբի գլուխը անցնելու համար։

* * *

1914 թուի Հոկտեմբեր 27ին սկսուեց ռուս-թրքական պատերազմը։ Ճակատի ամբողջ երկայնքին, Օլթիից մինչեւ Սալմաստ, դասաւորուած էին չորս հայկական գնդերը, իբրեւ յառաջապահներ։ Դրոն Վանի գծի վրայ էր։ Իր զօրամասը, մօտ 400 կամաւորից բաղկացած, աչքի էր զարնում հրամանատարական ընտիր կազմով, պարենաւորման մասով եւ ընդհանուր կարգ ու սարքով։ Օգնական էր Արմէն Գարոն։ Ձիաւորների հրամանատարը՝ դաշնակցա-

կան Խէչօն։ Վաչտապետները՝ անուանի հայ-դուկներ Ղազարը, Օնէն…

Զինգիլը անցան ուրախ երգերով։ Աբաղայի չհասած հանդիպեցին Թշնամու դիմադրութեան։ Աբաղայի քուերում կռիւը սաստկացաւ։ Քրտական հրոսախմբերն էին աջից ու ձախից յարձակում գործողը։ Կամաւորների համար դժուար չէր այդ անկանոն կռուողներին ցրուելը։

Գիաւուէ Շամիի մօտ, Աբաղայում, կամաւորները ենթարկուեցին առանձնապէս կատաղի յարձակման։ Տաք ընդհարումից յետոյ, Թշնամին փախաւ։ Կռիւը վերջացած էր։ Դրոն առաջաւոր դիրքերում հրամաններ էր տալիս։ Մէկ էլ, ժայռերի յետեւից, որոտաց հրացանը։ Թշնամու դաւադիր գնդակը հարուածեց Դրոյի կրծքից…

Մահը անխուսափելի էր, եթէ չլինէր ընկերների անձնուիրութիւնը։ Գնդի հրամանատարութիւնը անցաւ Արմէն Գարոյին։ Վիրաւոր Դրոյին, անասելի դժուարութիւններով ու տանջանքներով հասցրին Իգդիր։ Այնտեղից՝ Թիֆլիս, Արամեան հիւանդանոցը, ուր ենթարկուեց վիրաբուժական գործողութեան ու դարմանումի։ Գնդակը մնաց թոքերի մէջ եւ ընկերացաւ նրան ամբողջ կեանքում։

Միայն Դրոյի երկաթէ մարմինը կարող էր դիմանալ անպատում չարչարանքին Գիաւուէ Շամիից մինչեւ Թիֆլիս, հայկական բարձրաւանդակի սառնամանիքներին, հայկական լեռնային ճանապարհներով։ Եւ չնորհիւ բժիշկների եւ

քոյրերի բացառիկ խնամքին ու հոգածութեան՝ հետզհետէ սկսեց առողջանալ...

Վիրաբուժական գործողութեան ընթացքին ես հիւանդանոցն էի Խաչիկ Կարճիկեանի հետ։ Երկար տեւեց գործողութիւնը, եւ երբ դուրս բերին սենեակից, ճերմակով ծածկուած, մեզ թոյլ չտուին վրան նայելու։ Մանօթ բժիշկը ձեռքի շարժումով բարեւեց եւ անխօս անցաւ։ Գթութեան քոյրերը՝ մեր աղջիկները, սահում էին ստուերի պէս մեր մօտից. երեսներին գոյն չկար։ «Վերջացած է», չչնչաց Խաչիկը...

Երբ յաջորդ օր, նշանակուած ժամին, ըշտապեցի հիւանդանոց, քոյր Աշխէնը ուրախ մտաւ թեւս եւ առաջնորդեց հիւանդի սենեակը։ Ո՛չ մէկ վտանգ չէր մնացել այլեւս։ Բժիշկները դարմանում էին. ինչպէ՛ս ապրեց, ինչպէ՛ս կարելի է ողջ մնալ այդքան տանջանքից եւ ապրիւն կորանցնելուց յետոյ...

Եւ այնուհետեւ օրը օրի վրայ, Դրոյի - առողջութիւնն ու տրամադրութիւնը բարելաւուեց։ Եւ Դեկտեմբերի սկիզբը այլեւս, թէեւ դեռ անկողնում, կարողանում էր շարժուել եւ հետաքրքրուում էր ամէն բանով։

Այդ օրերին էր, Դեկտեմբերի սկիզբը, Թիֆլիս եկաւ ցար Նիկոլայը։ Նա այցելեց եւ զինուորական հիւանդանոցները։ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի եւ բժիշկների եւ քոյրերի ուղեկցութեամբ մտնում է Դրոյի պառկած սենեակը։

Խատիսեանը ծանօթութիւններ է տալիս

Դրոյի անձի եւ վիրաւորուելու պարագաների մասին։ Ցարը ուրախ՝ շնորհաւորում է Դրոյին, շնորհակալութիւն է յայտնում եւ պարգեւելով Գէորգեան քաջութեան պատուանշան խաչը՝ հարցնում է.

—Մ՞ւր էք սովորել զինուորական արուեստը։

—Յեղափոխութեան մէջ, Ձերդ մեծութիւն, համարձակ պատասխանում է Դրոն։

Յեղափոխութեան մէջ — ռուսերէն «ռեւոլիւցիի» աւելի ուժեղ է հնչում։ Ցարը, որ բընականից վախկոտ եւ յեղափոխականներին ատող փոքրոգի մարդ էր, ցնցւում է եւ ուզում է դուրս գալ։ Խատիսեանը չտապում է նրան հանգստացնել, թէ խօսքը Թուրքիոյ հայոց յեղափոխութեան մասին է...

Յաջորդ օրը ամբողջ Թիֆլիսը հիացումով էր խօսում Դրոյի եւ Ցարի հանդիպման մասին։

Դրոյի հիւանդութեան ամիսներին մեծ դէպքեր էին տեղի ունեցել ռազմաճակատի վրայ։ Ռուս բանակը նահանջել էր ամբողջ ռազմագծի վրայ։ Հայ գաղթականներ էին հասնում Թուրքիոյ զանազան կողմերից։ Ջղային վիճակ էր տիրում Կովկասում, մասնաւորապէս հայկական շրջաններում։ Նահանջել եւ վերակազմւում էին նաեւ հայ կամաւորական գնդերը։ Ազգային Բիւրոն հեւ ի հեւ պատրաստւում էր օգնութեան հասնելու օրհասական ինքնապաշտպանութեան դիմած Վասպուրակա-

նին։ Սարսափ ազդող լուրեր էին ստացւում եւ Տարօնի, Բարձր Հայքի ու միւս շրջանների հայութեան մասին։

Ազգային Բիւրոյի դիմումի վրայ՝ ռուս կառավարութիւնը համաձայնուեց, որ հայ կամաւորական գնդերը միացուին մէկ ճակատի մէջ, իբրեւ յառաջապահ մաս դէպի Վան արշաւելու պատրաստուող զօրախմբի՝ «Արարատեան Զոկատ» անունով, որի ընդհանուր հրամանատար նշանակուեց Խանասորի Վարդանը։

1915 թուի Ապրիլին կամաւորական բոլոր գնդերը արդէն վերակազմուած էին։ Առաջին գունդը Անդրանիկի հրամանատարութեան տակ, շուրջ 1000 հոգի, Սալմաստից պիտի շարժուէր Վանի ուղղութեամբ։ Երկրորդ, երրորդ եւ չորրորդ գնդերը — Դրօ, Համազասպ ու Քեռի — եւ հեծելագունդը — Դաշնակցական Խեչօ — Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ պիտի կազմէր Զօր. Նիկոլայեւի առաջապահ գունդը Երեւան-Վան գծով, Ջինգիլ-Աբաղայի վրայով։

Դրոն արդէն առողջ՝ ոտքի վրայ էր եւ զօրագնդի գլուխ։ Թիֆլիսից նրան ցնծութեամբ եւ մեծ յուզումով ճանապարհ դրինք։ Արշաւանքը դէպի Վան անցաւ փայլուն կերպով։ Դրոն իր զօրամասով միշտ առաջն էր եւ առաջինը եղաւ Վան մտնողներից։ Վանի ազատութիւնը խելայեղ ոգեւորութիւն առաջ բերեց Կովկասի հայութեան մէջ...

Կարճ ժամանակ մնալով Վանում, Դրոն

իր խմբով շտապեց օգնութեան հասնել լճի հարաւակողմի հայերին։ Նրա գնդի մէկ մասը հասաւ մինչեւ Մոկս։ Հետզհետէ Վասպուրականի բոլոր մասերը մաքրուեցին Թշնամուց։ Ռուս բանակը, Զօր. Տրուխինի հրամանատարութեան տակ, լճի հարաւային ափերով յառաջացաւ դէպի Ոստան, Աղթամար, մինչեւ Ուրթապ, Թուխի հովտում։

1915 թուի Յուլիսին, Նիկոլ Աղբալեանի հետ, ես այցելեցի մեր կամաւորական գնդերի հաւաքատեղին, Աղթամարում, ուր գտնուում էին Զօր. Տխուրինի սպայակոյտը եւ հայ կամաւորական գնդերի հրամանատարական կազմը՝ Վարդան, Անդրանիկ, Քեռի, Համազասպ, Դրօ, Խեչօ...։ Զինուորական խորհրդակցութիւն տեղի պիտի ունենար, բայց, յանկարծ, ճակատից լուր ստացուեց, թէ Թշնամին յարձակուել եւ սպառնում է գրաւել մեր առաջաւոր դիրքերը։ Դրոն թռաւ տեղից եւ անհետացաւ։ Միւսները հետեւեցին նրան։ Զօրամասերը առաջ շարժուեցին եւ տաք ընդհարումով՝ յետ շպրտեցին Թուրքերին։ Խորհրդակցութիւնը, փոխանակ Աղթամարի, տեղի ունեցաւ Խնձորկին գիւղում, լճափի այգիներում։

Աղբալեանն ու ես, Ազգային Բիւրոյի կողմից, առաջարկ էինք տարել կամաւորական Գնդերի հրամանատարներին՝ փութացնելու արշաւանքը դէպի Մուշ՝ օգնութեան հասնելու համար Տարօնի հայութեան։

Մի ուրիշ անգամ, Թերեւս, առիթ կ'ունե-

նամ պատմելու այս խորհրդակցութեան մասին։ Այս անգամուայ համար հետաքրքրական է լիշել Դրոյի վերաբերումը։ Մինչ միւս խմբապետները գրեթէ բոլորը վարանում էին ցոյց տալիս, մանաւանդ, Անդրանիկը խելագարութիւն էր համարում միայն հայ կամաւորներով դէպի Մուշ արշաւելու գաղափարը, Դրոն համարձակ ու վճռական, պարզեց հետեւեալ յստակ ռազմական խնդիրը։

Դիմել Զօր. Տրուխինին եւ արտօնութիւն խնդրել համախմբելու բոլոր հայ կամաւորական գնդերը մէկ հրամանատարութեան տակ, օրինակ՝ Անդրանիկին։ Խնդրել Տրուխինից, որ հայ կամաւորական ջոկատին միացնէ երկու հարիւր կոզակներ եւ թնդանօթային մարտկոց։ Տրուխինը անյապաղ հրաման արձակէ, որ հայկական ջոկատը առաջ շարժուի Տարօնի ուղղութեամբ։ Դրոն համոզուած էր, որ կամաւորները յաջողութեամբ կը հասնեն Տարօն եւ կ՚ազատեն այնտեղի հայութիւնը։ Նա վստահ էր, որ Զօր. Տրուխինը կը տայ իր համաձայնութիւնը, քանի որ նման մի ձեռնարկ, յաջողութեան դէպքում, ո՛չ միայն կը փրկէ հայերին, այլ հարուածելով թշնամուն թիկունքից՝ մեծ ծառայութիւն կը հասցնէ եւ ռուս բանակին։ Մրագիրը յանդուգն էր։ Անյաջողութեան դէպքում կարող էին զոհուել կամաւորները, բայց յաջողութեան պարագային կը փրկուէր Տարօնի հայութիւնը, որ դեռ կանգուն էր եւ յուսահատօրէն պաշտպանւում էր թշնամու դէմ։ Մեծ նպատակը կ՚ար-

դարացնէր ամէն զոհողութիւն։

Դրոյի ծրագրին առանձնապէս առարկում էր Անդրանիկը, որ «վարժապետական» կոչեց Ազգ. Բիւրոյի առաջարկը։ «Լեւի Ֆլանգ, փրաւի Ֆլանգ» եւ նման զինուորական խօսքերով։ Հեգնութեամբ ու կրքոտ, նա աշխատում էր ցոյց տալ, թէ Թիֆլիսի «Թիկունքի հերոս» վարժապետները ոչինչ չեն հասկանում ռազմագիտութիւնից եւ ուզում են խաղալ կամաւորների կեանքի հետ...

Ցաւալի էր լսել Սասունի հերոսի այդ տարօրինակ խօսքերը։ Անդրանիկը, այդ օրերին, առհասարակ, սաստիկ ջղայնացած էր. նա չէր կարող ներել Ազգ. Բիւրոյին՝ որ Վարդանին էր նշանակել Արարատեան ջոկատի հրամանատար եւ ոչ թէ իրեն։ Չէր հաշտւում եւ այն փաստի հետ, որ ինքը չեղաւ առաջին Վան մտնողը։ Նա նոյնիսկ մերժեց վանեցիների հրաւէրը հիւրասիրուելու քաղաքում։

Դրոն սիրում էր Անդրանիկին։ Նա կը գերադասէր, որ Անդրանիկը լինէր Արարատեան Ջոկատի հրամանատար Վարդանի տեղը, բայց չէր կարողանում ըմբռնել Անդրանիկի բռնած դիրքը։ Տարօրինակ էր եւ այն, որ միւս հրամանատարներից միայն Քեռին եւ Խեչոն ձայնակցեցին Դրոյին։ Երբ Անդրանիկը վերջացրեց իր տաք հակաճառութիւնը Դրոյին, Քեռին բարձրացրեց իր կախ գլուխը եւ լուրջ ասաց.

—Ես քեզ հետ եմ, Դրո։

Խեչոն աւելացրեց.

—Ես էլ։

Միւսները լուռ մնացին։

Ժողովը բանաձեւ չհանեց։ Որոշումը յետաձգուեց վաղուան։

Ժողովին յայտնեցեց ընթրիք, որ պատրաստել էր տուել Դրոն Վարդանի պահեստից թոցրած ուտելիքներով ու խմիչքով։ Այդ ընթրիքի մասին ես խօսել եմ մի ուրիշ տեղ — անցնենք։

Շուտով սկսուեց թրքական ընդհանուր յարձակումը։ Ռահվայի կուռում սպանուեց Խեչօն։ Տեղի ունեցաւ ընդհանուր նահանջը, Վանի պարպումը, գաղթը։ Տարօնի ծրագիրը ջուրը ընկաւ։

Դրոն կամաւորներով իր պաշտպանութեան տակ առաւ Վանից փախչող կամաւորներին Բերկրիի ձորում եւ ճանապարհին։

Իգդիրում կամաւորական գնդերի հրամանատարները եւ Ազգ. Բիւրոյի ներկայացուցիչները խորհրդակցութիւն ունեցան ստեղծուած կացութեան եւ Տարօնի օգնութեան հասնելու մասին։ Դրոն նորից պնդում էր իր առաջարկի վրայ՝ դնելով իր թեկնածութիւնը, բայց այս անգամ Անդրանիկի առարկութիւնները աւելի հիմնաւոր էին եւ ցոյց տուած դժուարութիւնները՝ աւելի ակնյայտ։ Անդրանիկը վճռական կերպով մերժեց մասնակցել նման «խելագար» ծրագրի եւ հեռացաւ Իգդիրից։ Խորհրդակցութիւնը յանձնարարեց Դրոյին իր գնդից եւ ուրիշ մասերից չտապով կազմել մի ջոկատ եւ

փութով շարժուել դէպի Տարօն։ Աւա՛ղ, այլեւս ուշ էր։ Ռուբէնը եւ Կոմսը, մի փոքր խմբով, կարողացել էին Սասունից անցնել ռուսների կողմը եւ բերել Տարօնի հայութեան բնաջնջման գոյժը…

Դրոն իր զօրամասով անցաւ դէպի Զիլան, որտեղի քիւրտերը մեծ չարիք էին գործել հայերի գլխին։ Գրաւեց Զիլանը, չարաչար պատժեց քիւրտերին, որոնց տաւարի եւ ոչխարի մեծաքանակ հօտերը քշել տուեց Կովկաս հայ գաղթականներին բաժանելու համար։

Զիլանի արշաւանքից յետոյ ամառը, երբ գունդը հանգստեան եւ վերակազմութեան համար թիկունք էր քաշուած, Դրոն երկրորդ անգամ ամուսնացաւ Երեւանում, Գալուստ Ալոյեանի եղբօր աղջկայ՝ Արփենիկի հետ։ Դրոյի առաջին կինը՝ մեռել էր մի քանի տարի առաջ՝ թողնելով մէկ մանչ զաւակ։ Արփենիկից Դրոն ունեցաւ երկու տղայ։

* * *

Հայկական նահանգների գրաւումով եւ փոխարքայ Վորոնցով-Դաշկովի յետս կոչումով նոր փոխարքայ Նիկոլայ-Նիկոլայեւիչի օրով, ռուսների, այսպէս կոչուած, «հայասիրական» քաղաքականութիւնը վերջ գտաւ։ Այլեւս չէր խօսւում Հայաստանի բարենորոգումների մասին։ Հայկական նահանգները, Վասպուրականից մինչեւ Երզնկա, պէտք է միացուէին Ռուսաս-

տանին, պիտի կազմուէին Եփրատեան եւ Տիգրիսեան կուսակալութիւններ։ Հայ կամաւորական գունդերը այլեւս աւելորդ էին. Մաւրը կատարեց իր գործը, մաւրը կարող է երթալ...։ Փոխարքայի հրամանով կամաւորական գնդերը լուծուեցին եւ նրանց փոխարէն կազմուեցին հայկական հրացանակիր գնդեր։ Փակւում էր Հայոց Պատմութեան մէկ հերոսական էջը։ Վերհատուածեան սեւ քող էր իջնում հայ երկնակամարի վրայ...

Դրոյին էլ առաջարկեցին մտնել հրացանաձիգ գնդի մէջ սպայի պաշտօնով։ Մերժեց։ Նա իրեն զգում էր ճակատամարտը կորցրած զօրավարի հոգեբանութեան մէջ։ Այնքա՛ն մեծ յոյսեր էր կապել ռուս զէնքի յաղթանակի հետ եւ ի՜նչ դուրս եկաւ...

Արմէն Գարոն, յուսաբեկ ու վհատուած, քաշուել էր ազարակը Գանձակում՝ մռայլ խոհերով։ Դրոն տարբեր խմորից էր — կենսալի եւ ուժական։ Վիշտը չէր կարող մոռանալ մեկնաբանութեան մէջ, խոհերով։ Աւելի զօրեղ ազդակների պէտք ունէր։ Եւ մի պահ անձնատուր եղաւ գինուն եւ բախտախաղին՝ մերթ Թիֆլիսում, մերթ Երեւանում, մերթ Իգդիրում։ Ամբողջ գիշերներ լուսացնում էր թղթի սեղանի գլուխը կամ քէֆերի մէջ։ Բայց ցաւը մնում էր ցաւ. չէր ամոքում։ Ընկերների յորդորները չէին օգնում։ Մենք վախենում էինք, որ այսպիսի անկանոն կեանքը կարող էր մնասել թոքերին։ Խնդրում էինք խնայել իրեն։ Նա պա-

տասխանում էր անհոգ.

—Որտեղ կտրաւ կապը...

Թւում էր, թէ կեանքը այլեւս կորցրել էր արժէքը նրա աչքում։

Մի երեկոյ, Երեւանում, բռնեց ինձ թէ՝ երթանք Իգդիր։ Ի՞նչ կար։ Ոչի՛նչ։ Հէնց այնպէս՝ երթայինք։

Գնացինք։

Հայրը գոհ չէր նրա ընթացքից։ Հազիւ բարեւեց ու դուրս եկաւ։ Տունը շուտով լեցուեց մեծով ու փոքրով։ Եկան ընկերները։ Դրոն քաշուեց մի սենեակ ու քնեց։

Երեկոյեան սեղան բացուեց։ Հազիւ մի պատառ հաց կերած՝ Դրոն ոտքի ելաւ՝ «երթանք»։

—Ո՞ւր երթանք, կեցիր, առարկեցի ես՝ տեղի տալով ներկաների թախանձանքին։

—Ե՛լ երթանք, բարկացաւ Դրոն։

Ելայ։ Գնացինք։ Ինձ անծանօթ մի մեծ տուն էր, ընդարձակ այգում։ Վառ լուսամուտներից երեւում էր մեծ բազմութիւն ներսը սեղանների շուրջ։ Կոչունք կար։ Դրոյին ընդունեցին ուրախ աղմուկով։ Թամատան աւելի ժըրացաւ։ Քէֆը բորբոքուեց...

Ճաշը հազիւ վերջացած, կոչունքի սենեակում բացուեցին թղթախաղի կանաչ սեղանները։ Դրոն նստեց սեղանի գլուխ։ Ես տեղաւորուեցի մօտը։ Խաղը սկզբում ընթանում էր անաղմուկ։ Մերթ ընդ մերթ լսւում էին խաղացողների ուրախ կամ զայրացկոտ բացական-

չութիւնները։ Դրոն խաղում էր լուռ, կեդրոնացած։ Ջէր սիրում, որ իրեն խանգարեն նկատողութիւններով։ Անվերջ ծխում էր ու գաւաթից կոնեակ քաշում։ Ես անհանգիստ դիտում էի նրան, բայց վախենում էի միջամտել։ Սկիզբը տարուեց չատ։ Եւ որքան կորցնում էր, կարծես հաճոյք էր զգում։ Ինչքան չատ էր տանում, այնքան ջղայնանում եւ աղմկոտ էր դառնում...

Լուսաբաց էր արդէն։ Տանտիկինը աւետեց, որ ընթրիքը պատրաստ է։ Խաղացողները աղմուկով սկսեցին հաշուել չահ ու զէնը։ Դրոն տարել էր 3600 ռուբլի — ահարկու մի գումար այն օրերի համար...

Նա բաժանեց թղթադրամները երեք մասի։

—Էս մէկը քեզ, կարմիր Խաչի համար, եւ յանձնեց տանտիկնոջ, որ Հ.Ց.Դ. տեղական մասնաճիւղի նախագահն էր։

—Էս մէկն էլ քեզ կազմակերպութեան համար, տուեց Թոփալ Եղոյին։

—Էս մէկն էլ — դարձաւ ինձ — առ, կը տաս Ռոստոմին, նա գիտէ գործածելու ձեւը։

Եւ ձեռքերը կրծքին խաչաձեւած, խղճալի տեսք առնելով՝ կատակեց.

—Էլ պրծաւ... Էս վերջինն է։ Էլ ձեռքս թուղթ չեմ առնելու...

Եւ աղմուկով հետեւեց տանտիկնոջ սեղանատուն։

Ըստ երեւոյթին, հոգեկան վերջին տագնապն էր այս։ Այնուհետեւ երկար ժամանակ

թղթի ձեռք չտուեց։ Խմելն էլ հասցրեց սովորական աստիճանի։ Եւ անցաւ գործի։

Շնորհիւ իր լայն կապերի՝ դիւրութեամբ ստացաւ զինուորական ճանապարհի չինութեան կապալը Կազդուան-Կողբ գծի վրայ եւ եռանդով անցաւ գործի — դրամ չահելու։ Ըստ սովորութեան գործի դրեց իր գնդի մարտիկ տղաներից չատերին, որոնք մի կողմից աչխատանք ունեցան, միւս կողմից զերծ մնացին բարոյական արատներից, որոնց ենթակայ են զօրացումի ենթակաները։

Մի տարուց աւելի Դրոն կապալառու էր, գործի վրայ։ Մերթ ընդ մերթ, կարճ ժամանակով, երեւում էր Թիֆլիսում ընկերների հետ չփման մէջ մտնելու համար եւ նորից անհետանում։ Գորչ օրեր էին։ Յուսալքուած էր հայկական իրականութիւնը։ Սահմանի միւս կողմից սարսափելի լուրեր էին հասնում։ Ցարական կառավարութիւնը աչխատում էր սեփական միջոցներով լուծել հայկական հարցը՝ հայերին չնորհելով «Եկեղեցական ինքնավարութիւն»։ Փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը վերադառնում էր հակահայ քաղաքականութեան։ Եւրոպան լուռ էր։ Թւում էր, թէ՝ հայերի համար ոչ մի յոյս չէր մնացել։ Եւ յանկարծ...

1917 թուի Փետրուար 28ին ըմբոստացաւ Բետերպուրգի ժողովուրդն ու զօրքը եւ անխորտակելի համարուած Ռոմանովների գահը փուլ եկաւ խաւաքարտէ չէնքի պէս։ Ցարը լքեց գահը։ Կովկասի փոխարքան փախուստով

ազատեց իր կաշին։ Ամէն ինչ տակն ու վրայ եղաւ։ Ցոյսի նոր դռներ բացուեցին...

Դրոն փութաց Թիֆլիս եւ նորից ոտքովգլխով նետուեց ազգային կեանքի ջրապտոյտին մէջ։ Կովկասեան ճակատը սկսեց ճարճատել։ Առաջաւոր դիրքերում եւ թիկունքում առաջ եկան խառնակութիւններ։ Նորից գործի անցաւ «Շէյթանը»։ Երկրի զանազան մասերում ծագեցին ազգամիջեան ընդհարումներ։ Ազգային Բիւրոն մտահոգուած էր ռազմաճակատի պաշտպանութեամբ եւ հայաբնակ վայրերի ապահովութեամբ։ Վտանգուած էր առանձնապէս Արարատեան դաշտը։ Ազգային Խորհուրդը Երեւան ուղարկեց Արամին, իբրեւ լիազօր ներկայացուցիչ տեղական իշխանութեան կազմակերպութեան համար։ Դրոյին նշանակեց Արարատեան Աշխարհի զինուած ուժերի կոմիսար։ Այնուհետեւ Երեւանեան ընդարձակ նահանգը փաստօրէն անցաւ Երեւանի Հայոց Ազգային Խորհուրդի իշխանութեան Արամի եւ Դրոյի ղեկավարութեան տակ։

Դաշնակցական ահաբեկիչ Դրոն դարձաւ քարիւղի եւ շաքարի վաճառական՝ Սուրէն էֆէնտի։ Սուրէն էֆէնտի եղաւ Կամաւորական Գնդի հրամանատար։ Գնդի հրամանատարը փոխուեց խճուղի չինող կապալառուի։ Կապալառուն դարձաւ զինուորական կոմիսար, փաստօրէն զինուորական գերագոյն պետ Արարատեան Աշխարհի։ Մրրկայոյզ օրեր էին։ Փոթորիկի էր բռնուած հայոց նաւը։ Երկաթէ բազուկ-

ներ էին պէտք ամուր պահելու համար ղեկը։ Դրոն պատրաստում էր դառնալ հայութեան հզօր նաւավարներից մէկը — առաջինը առաջիններից։

Է

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

1917 թուականը յոյսի եւ յոյզի տարի եղաւ հայերի համար։

Ցարական բռնապետութեան անկումից յետոյ, Փետրուար-Հոկտեմբեր, հաշուեյարդար էր փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչի մտցրած կարգերի, վերարծարծում Հայկական Հարցի, վերաբնակեցում Թրքահայ հողերի, ազգահաւաքում, ազգային ուժերի կազմակերպում, համապետական ընդհանուր ճակատի յարդարում, ազգային իրաւունքների ձեւակերպում ու պաշտպանութիւն կովկասում, մի խօսքով՝ ազգային կեանքի վերելք ամէն տեսակէտից։

Դրոյի մէկ ոտքը Երեւանում էր, մէկ ոտքը՝ Թիֆլիսում։ Երեւանի նահանգը — ռուսահայութեան սիրտը, գրեթէ կէս առ կէս հայ եւ մահմետական — չատ կարեւոր ազգային-քաղաքական տեսակէտից, խոցելի էր ազգային ապահովութեան նկատարումներով։ Մահմետական զանգուածները ենթակայ էին համիսլամական քարոզիչների գրգռումին, պատրաստ ազգամիջեան ընդհարումների համար։ Անհրաժեշտ էր պահել անդորրութիւնը ինչ գնով էլ լինի, մանաւանդ որ ռազմաճակատը տկարանում, հետզհետէ մերկանում էր ռուս զօրամասերից,

որոնք թիկունք անցնելով՝ քաղաքական բարդութիւններ էին առաջ բերում։ Արամի խոհեմ դիւանագիտութիւնը եւ Դրոյի երկաթէ բազուկը, ինչպէս եւ տեղական գործիչների խմաստուն եւ անձնուէր ճիգերը երկար ժամանակ, համեմատաբար, խաղաղ պահեցին Արարատեան դաշտը։

Թիֆլիսում Դրոյի ներկայութիւնը անհրաժեշտ էր լինում յատկապէս զինուորական եւ ռազմաճակատի հետ կապուած հարցերի լուծման համար։ Ազգային Խորհրդի զինուորական մասի վարիչն էր Մոսկուայի Հայկական Կոմիտէի նախագահ՝ Ստեփան Մամիկոնեանը — մի լրջամիտ ու պատուական հայ — օգնական ունենալով Ռուբէն Տէր Մինասեանը։ Թէ վարիչը եւ թէ օգնականը չունէին պահանջուած ծանօթութիւնը բանակի գործերում եւ հեղինակութիւնը զինուորականութեան աչքին. այդ պատճառով յաճախ բարդութիւններ էին ստեղծւում, մանաւանդ, Անդրանիկի եւ իր կողակիցների եւ Ազգային Խորհրդի վարիչների միջեւ։ Դրոն հակակշռող ուժ էր, իբրեւ բոլորի վստահութիւնն ու համակրանքը վայելող անձնաւորութիւն։ Հակառակ իր տաքարիւն բնաւորութեան նա զարմանալի նրբամիտ վերաբերում էր ցոյց տալիս եւ դիւրութեամբ գտնում էր ձեւ եւ միջոց մարդկանց յուզումները հանդարտեցնելու համար։ Մանաւանդ զինուորականները նրան յարգում ու սիրում էին։

Ես յիշում եմ մէկից աւելի դէպքեր, երբ

Դրոն, մի տեսակ, գազանազուսպի դեր էր կատարում կռուի փոխուած սուր վէճերը հանդարտեցնելու համար, մանաւանդ, Անդրանիկի եւ Ռուբէն Տէր Մինասեանի միջեւ, որին Անդրանիկը, չգիտեմ ինչո՞ւ, տանել չէր կարողանում։ Դրոյի իրեն համար ամենաանընդունելի մտքերը նա լսում էր անվրդով։

Այսպէս, Ազգային Խորհրդի մի նիստում, որին նախագահում էր Ա. Ահարոնեանը, ռազմաճակատի տագնապալից օրերին, քննութեան առարկայ էր ճակատի պաշտպանութեան հարցը։ Անդրանիկը պատրաստւում էր մեկնելու էրզրում եւ Ապահովութեան անդամների հետ եկել էր խորհրդակցելու Ազգային Խորհրդի հետ։ Ներկայ էր եւ Դրոն, որ նոր էր հասել Երեւանից։

Իրար յետեւից խօսեցին ճառեր — լաւ եմ յիշում — Տիգրան Բէգզատեանց, Ստեփան Մամիկոնեանը, Անդրանիկը, Խ. Կարճիկեանը, Ռուբէնը... Ամէնքը միաբերան միեւնոյն տեսակէտն էին պաշտպանում — ուժեղ զօրակոչ անել, օգ- նական ուժեր հասցնել, դասալքութեան դէմ խիստ միջոցներ ձեռք առնել, եւայլն։ Սովորա- կան, արդէն փորձուած եւ արդիւնք չտուող միջոցներ։

Դրոն խօսք առաւ եւ այն օրերի համար սարսափելի խօսքեր ասաց.

—Ձեր այդ առաջարկները բոլորն էլ փորձուած են։ Անօգուտ է դրանց վրայ յոյս դնել։ Իրողութիւնը այն է, որ ռուս զօրքերը հեռա-

նում են ճակատից եւ մենք անզօր ենք նրանց պահելու։ Փաստը այն է, որ մենք ի վիճակի չենք, բաւարար զօրք չունինք նրա լքած բոլոր դիրքերը գրաւելու։ Որոշ ժամանակ էլ եթէ այսպէս շարունակուի, ռազմաճակատը պիտի մերկանայ, եւ թշնամին առանց դիմադրութեան առաջ պիտի շարժուի։ Հետեւաբար, ի՞նչ պէտք է անել։

Եւ պատից կախուած գինուորական քարտէսի առջեւ անցնելով շարունակեց.

—Տեսնո՞ւմ էք այս տարածութիւնը. ահա Վանը, ա՛յս Պիթլիսն է, այս Մուշը, այս Երզընկան... Այս ամբողջ տարածութիւնը մենք պէտք է պաշտպանենք, մե՛նք հայերս մի բուռը ուժերով։ Հնարաւո՞ր բան է։

—Հնարաւոր է, լսուեց մի ձայն։

—Ո՛չ, հնարաւոր չէ։

—Ապա ուրեմն, ի՞նչ անել, հարցրեց նոյն ձայնը, որ եթէ չեմ սխալւում, Աղբալեանինն էր։

—Շատ պարզ է՝ ինչ անել, շարունակեց Դրոն։ Պէտք է կարճեցնել ռազմաճակատը։ Վան-Երզնկա գիծը չենք կարող պաշտպանել, բայց Բայազէտ-Բասէն, գուցէ կարողանանք...

Սենեակում լսուեց վրդովուած բացագանչութիւններ։ Անդրանիկը պեխերն էր կրծում։

—Մի վրդովուէք, ձայնը բարձրացրեց Դրոն, հաշիւը պարզ է...

Ու սկսեց զօրամասերի անուններ յիշել, վայրերի տարածութիւնները ներկայացնել, մեր

ուժերը համրել։

—Հաշիւը պարզ է. միայն մեր ուժերով չենք կարող Վան-Երզնկա-Տրապիզոն գիծը պաշտպանել։ Դա աբսուրդ է։ Պէտք է քաշենք մեր ուժերը Բայազէտ-Բասէն գծի վրայ... Պէտք է Վանի, Մուշի, Էրզրումի, Երզնկայի շրջանի բոլոր պահեստները ոչնչացնենք... Պէտք է մեր ուժերը, պաշտպանութեան բոլոր միջոցները, մեր բոլոր յոյսերը կեդրոնացնենք ռուս-թաթարական սահմանագծի վրայ, այլապէս...

—Այլապէս ի՞նչ, լսուեց մի խեղդուկ ձայն։

—Այլապէս, Թրքահայաստանը կորցնելուց յետոյ Ռուսահայաստանն էլ կը կորցնենք...

Սենեակում տիրեց խորին լռութիւն։ Անդրանիկը, որ նստած էր մօտս, դրան մօտ, գըլուխը կախ, ցնցւում էր ներքին յուզումից՝ սեւ ամպի պէս պատրաստ պայթելու։

—Ես համաձայն եմ Դրոյին, բայց... չկարողացաւ շարունակել Ռուբէն Տէր Մինասեանը։ Սեւ ամպը պայթեց ահռելի որոտով...

Անդրանիկը, վագրի կատաղի ոստիւնով, ցատկեց տեղից եւ բռունցքները ճօճելով խոյացաւ Ռուբէնի վրայ, որ յանկարծակիի եկած, մի պահ սմքեց, ապա, անցնելով սեղանի միւս կողմը, նոյնպէս բռունցքները ճօճելով՝ սկսեց պոռալ Անդրանիկի երեսին։ Ժողովը խանգարուեց։

Ռուբէնը մեղք չունէր. Անդրանիկի զայրոյթի առարկան Դրոն էր, բայց Դրոյի վրայ չէր կարող պոռալ, ինչպէս չէր կարող պոռալ

Քեռիի կամ Ռոստոմի վրայ։ Անդրանիկը սիրում էր Դրոյին եւ մի քիչ էր պատկառում էր, հակառակ տարիքի տարբերութեան։

Պէյրութից վերջին անգամ Ամերիկա մեկնելիս՝ Դրոն, կրկին ու կրկին անգամներ, մանրամասնօրէն յիշեց այս միջադէպը։ Նա համոզուած էր, որ եթէ այն ժամանակ իր առաջարկը ընդունուէր, շատ դժբախտութիւններ տեղի չէին ունենայ։ Եւ, զուտ ռազմագիտական տեսակէտից, թերեւս իրաւունք էլ ունէր, բայց այն օրերի հոգեբանական պայմաններում հնարաւո՞ր էր նման ծրագիր իրագործել։ Կարելի՞ էր առանց կռուի, թշնամուն յանձնել Վան, Մուշ, Կարին ու հեռանալ։ Անդրանիկի զայրոյթը բնական էր եւ արդար…

Ըստ էութեան Ստ. Մամիկոնեանն էլ, Ռուբէնն էլ, իբրեւ երկրի պաշտպանութեան հետ անմիջապէս գործ ունեցողներ, ըմբռնում էին կացութեան անյուսութիւնը եւ սրտի խորքում համաձայն էին Դրոյին, բայց քաջութիւնը չունէին — ո՞վ այդքան քաջ էր — համապատասխան եզրակացութիւններ հանելու։ Դրոն այդ քաջութիւնը ունեցաւ։ Պատմութիւնը պէտք է արձանագրէ այս փաստը։

Պատմութիւնը պէտք է արձանագրէ մի ուրիշ փաստ։

Զարմանալի չէ՞ք գտնում. գործեր կան — պատմական մեծարժէք գործեր — որոնց բուն հեղինակները մնացել են անյայտութեան մէջ եւ որոնք կապուած այս կամ այն, յաճախ կապ-

ւած աննչան անուան հետ։ Շէքսպիրի պարագան, օրինակ։ Ամբողջ աշխարհ Շէքսպիր դերասանին է վերագրում Համլէթի եւ միւս հռչակաւոր երկերի հեղինակութիւնը։ Նա՞ է արդեօք։

Սակաւ չեն մարդիկ, որոնք, համեստութեան քղամիտ հագած, իբր թէ կարեւորութիւն չեն տալիս արտաքին փառքին, բայց ձեռքի տակից, ո՛չ մի միջոց չեն խնայում իրենց անունը յաւերժացնելու համար՝ դիւրասահ գրիչներին ու երգիչներին իրենց փառքը հիւսել տալով, իրաւ կամ անիրաւ պատմութիւնների հատորներով, ամէն միջոցով, միայն թէ «անմահանան»։ Մարդիկ էլ կան, որոնց գործն է միայն հետաքրքրում, գաղափարը եւ գործը։

Դրոն վերջիններից էր։ Նա իր մասին չէր ուզում խօսել եւ եթէ խօսում էլ էր, հերոսական ոչինչ չէր վերագրում իրեն։

Պարտականութիւնը կատարողի համեստութիւնը ունէր միայն։ Նա կարող էր հատորներ գրել իր մասին — իր մասին համարեա ոչ մի յուշ չթողեց։ Յուշերի այն հատուածները, որ մնացել են նրանից, անձնական գրեթէ ոչինչ չեն պարունակում, այլ նուիրուած են իր գործակից ընկերներին։ Անշուշտ, միայն հոգեկան ազնուութեամբ կարելի է բացատրել այն իրողութիւնը, որ Դրոյի կեանքն ու գործը դարուս մեծագոյն հայերից մէկի — մնացել է անծանօթ լայն հասարակութիւնից։

Արձանագրենք միայն մէկ փաստ։ Հար-

ցըրէք ոեւէ հայի՝ ո՞ւմ ենք պարտական առաւելապէս Արարատեան դաշտի հայացումը։ Այլ եւ այլ — իրական կամ շինծու — անուններ պիտի լսէք ի պատասխան, բայց քչերը հաւանաբար, պիտի տան Դրոյի անունը։ Մինչդեռ եթէ այսօր Հայաստանը — անկախ վարչաձեւից — ազգային պետութիւն է, եթէ հայերը կազմում են Հայաստանի բնակչութեան 80–85 տոկոսը, այդ պարտական ենք Դրոյին եւ ի հարկէ Արամին իրենց գործակիցներով։

1918 թուականը ճակատագրական տարի եղաւ Արարատեան Աշխարհի համար։

Տեղական թրքութիւնը, Թուրքիայի եւ Ազրպէյճանի դրդումով գլուխ էր բարձրացրել հայութեան դէմ նպատակ ունենալով Սուլթանի տիրապետութիւնը տարածել Վոսփորից մինչեւ Բաքու եւ Թաշքէնտ։ Հայաստանը սեպ էր խրուած իսլամութեան կուրծքը. պէտք է դուրս հանել այդ սեպը։ Երեւանեան նահանգի, Գանձակի, Բաքուի ամբողջ տարածութեան վրայ եւ հայկական զօրամասերի թիկունքում, ամէն կողմ, մահմետական խռովութիւններ էին տեղի ունենում, յարձակումներ հայերի վրայ, հայկական ջարդեր ու տեղահանութիւններ։ Օրհասական ժամանակ էր հայերի համար, լինել-չլինելու հարց։ Գոյութեան պայքար։

Եւ պէտք էր ասել, որ մօտաւորապէս Արարատեան դաշտում, հայութիւնը այդ պայքարից դուրս եկաւ յաղթանակով ու պատուով, մեծ չափով, շնորհիւ քաղաքացիական եւ զին-

ւորական աշխուրջ ղեկավարութեան Արամի եւ Դրոյի առաջնորդութեամբ։

Երբ 1918 թուի Յուլիսին Հայոց Ազգային Խորհուրդը եւ կառավարութիւնը Թիֆլիսից փոխադրուեցին Երեւան, Հայաստանի հայացման հիմնական աշխատանքը փաստօրէն արդէն կատարուած էր։ Զանգեզուրը մեծ չափով մաքրագործուած էր Անդրանիկի ուժերով, Դալարագեռս-Միլի ձորը՝ առաւելապէս սասունցիների ձեռքով, որոնք վերջը տեղաւորուեցին Արագածի լանջերին։ Ղարաքիլիսա-Դիլիջան-Երեւան գիծը դարձել էր հայկական ապահով ճանապարհ։ Հետզհետէ հայացման քաղաքականութիւնը տարածուեց եւ միւս վայրերի վրայ։ Զինադադարից եւ Թուրք զօրամասերից քաշուելուց յետոյ, նոյն գործողութիւնը ընթացաւ աւելի արագ կերպով, Արամի եւ Դրոյի նախագծած ուղղութեամբ, թէեւ երբեմն պետութեան արտաքին վարկին մնասող ոչ դիւանագիտական ձեւերով։

Ցիշենք միշտ, որ եթէ այսօր Հայաստանը Հայաստան է իր ազգագրական կազմով եւ ազգային պետական կառոյցով, հայութիւնը այդ բանի համար երախտագէտ պէտք է լինի առաւելապէս Արամին եւ Դրոյին եւ, ի հարկէ, Արարատեան Աշխարհի հայ ժողովրդին ու գործիչներին։ Թո՛ղ Հայաստանի այսօրուայ վարիչները որքան ուզում են մրոտեն Դրոյի — Դրոների — անունը, ճշմարտութիւնը կարելի չէ մուրով ծածկել։ Հայ ժողովրդի արտում յաւէտ վառ պիտի մնայ Դրոյի անունը, իբրեւ Հա-

յաստանի Հանրապետութեան իրական կերտողներից մէկը, որպէս Հայկական Ազատամարտի Մրրկածին Ոգին։

Մինչեւ 1918 թուի Օգոստոս ամիսը Դրոն անուանապէս զինուորական կոմիսար էր Արարատեան դաշտի ռազմական ուժերի. փաստօրէն նա զինուորական դիկտադոր էր, ինչպէս Արամը՝ քաղաքացիական դիկտադոր։ Արարատեան դաշտի ներքին եւ արտաքին պաշտպանութեան գործը գերազանցապէս ծանրացեր էր Դրոյի վրայ։ 1918ի Մայիսեան հրեղէն օրերին, երբ որոշւում էր հայ հայրենիքի եւ հայ ժողովուրդի գոյութեան հարցը, Դրոն իր քաջերով վարեց Բաշ Ապարանի հերոսական ճակատամարտը, որ բախտորոշ նշանակութիւն ունեցաւ մարտնչող հայութեան յաղթանակի ապահովութեան տեսակէտից։ Սարդարապատ-Բաշ Ապարան-Ղարաքիլիսա — նոր օրերի Աւարայրը — անմոռանալի աշխարհագրական անուններ, որոնց հետ անխըզելի կապերով կապուած են Արամ եւ Դրօ նոյնպէս անմոռանալի անունները։

1918 թուի Օգոստոս 1ին, Երեւանում, բացուեց Հայաստանի նորածին Հանրապետութեան օրէնսդիր ժողովը։ Հայաստանի առջեւ բացուեց պատմական նոր դարաշրջան։ Երեւանի Ազգային Խորհուրդը իր իրաւունքները փոխանցեց Հայաստանի Խորհրդին։ Արամը դարձաւ նախարար Հայաստանի առաջին կառավարութեան մէջ։ Դրոն դարձաւ մայրաքաղաքի զինուած ուժերի պետ։

Նոր ժամանակներ, նոր պայմաններ, նոր գործ ու գործելակերպ։ Երկուայ վարժապետներն ու խմբապետները այժմ պէտք է դառնային պետական մարդիկ…

Ը

ԵՐԵՒԱՆԻ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Հայաստանի Հանրապետութեան ստեղծումով Դրոն կառավարութեան կողմից նշանակուեց Երեւանի մայրաքաղաքի զինեալ ուժերի հրամանատար։ Նա ով ծանօթ է հանրապետութեան ծնունդին եւ առաջին օրերին պատմութեան, կը համաձայնի ինձ հետ, որ Դրոն Արամի հետ գլխաւոր կերտիչն ու ոգին էր նորածնունդ պետութեան։

Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, ոչ մի ժողովուրդ այնպիսի դժուարին պայմաններում անկախութեան չտիրացաւ, որքան հայ ժողովուրդը։ Ոչ հոգեբանօրէն, ոչ եւս առաւել առարկայօրէն հայութիւնը անկախութեան պատրաստ չէր։ Հոգեբանօրէն՝ տիրական էր 1915թ. Մեծ Եղեռնի ահաւոր ազդեցութիւնը բոլորի մտքերի վրայ։ Առարկայօրէն Եղեռնը, պատերազմը եւ Ռուսաստանի յեղափոխութիւնը քայքայել, ցրել, տկարացրել էր հայութեան ուժերը՝ «անձեւ քաոսի» վերածելով հայ իրականութիւնը։

Թրքական թնդանօթները ուղղուած էին Հայաստանի մայրաքաղաքի վրայ հազիւ 6–7 քիլոմեթր հեռաւորութիւնից։ Վրաստանը կտրել

էր Հայաստանի ճանապարհը դէպի Սեւ Ծով։ Ազրպէյճանը, Նուրի Փաշայի տիրապետութեան տակ թշնամի էր Հայաստանի։ Պաթումի դաշնագրով հազիւ 11.000 քառ. քմ. հող էր մնացած Հայաստանի Հանրապետութեան՝ լեցուն տնազուրկ եւ սովհար գաղթականներով։ Կարելի՞ է պատկերացնել, թէ ինչ սարսափելի պայմաններում կեանքի կոչուեց մանուկ Հանրապետութիւնը եւ ինչ գերագոյն ուժի պէտք կար «անձեւ քաոս»ից ազգ եւ պետութիւն ըստեղծելու համար։

Այս ուժերը, բարեբախտաբար, գտնուեցին։ Հայ հանճարեղ ժողովուրդի ծոցից դուրս եկան հանճարեղ տիտաններ, աննման հայրենասիրութեամբ, անձնուէր ու անձնազոհ, որոնք ընդունակ եղան ձեռք առնելու նմանը չտեսնուած փոթորիկի մատնուած հայկական նաւի ղեկը եւ առաջնորդելու դէպի փրկարար նաւահանգիստը։

Արամը՝ առաջին որմադիրը Հայաստանի նոր պետականութեան։ Պատմութիւնը ի՞նչ կ'ասի նրա կարողութիւնների ու կատարած դերի մասին, թողնենք պատմութեան։ Մեզ, ժամանակակիցներիս համար, Արամը իր անձով խորհրդանիշ է Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան եւ իրաւամբ կարող է կոչուել Հայաստանի հայր, ինչպէս օրինակ, Ճորճ Ուաշինկթընը Ամերիկայում, Մասարիկը՝ Չեխոսլովաքիայում, եւայլն։ Եւ լաւ է, որ հայ նոր սերունդը Հայկ Նահապետների եւ Արտաշէսների շարքին, իբրեւ մեր վերջին նահապետը դնէ

եւ Արամի անունը — հիմնադիր Հայաստանի Հանրապետութեան։ Որքան ուզում են, թող ուրանան Հայաստանի ներկայ վարիչները, Արամը եւ իրենց նահապետն է, որովհետեւ առանց Հայաստանի Հանրապետութեան չէր կարող գոյութիւն ունենալ եւ Սովետական Հայաստան այսօր։

Եւ Արամի կողքին՝ Դրոն։ Սարդարապատի եւ Բաշ Ապարանի թնդանոթների որոտով ծընունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը, ասկէ եւ Սովետական Հայաստանը, եւ Բաշ Ապարանի Սպիտակ Ձիաւորը՝ Դրոն է խորհրդանշում Վեհիպ Փաշայի բանակին ջախջախիչ հարուած հասցնող հայկական բազուկը։ Սովետական գրիչները, անհամարձակ ու վախով, արդէն յիշում են Սարդարապատի ու Բաշ Ապարանի պատմական ճակատամարտերը. վաղը պարտաւորուած պիտի լինեն ճանաչելու եւ Դրոնների ու Սիլիկեանների պատմական գործը։

Արամ եւ Դրո՝ անխզելի զոյգ անուններ՝ պաշտամունքի եւ ոգեւորութեան անսպառ աղբիւրներ հայ սերունդի համար։ Արամի պետական կեանքը կարճ տեւեց. Դրոն սկիզբից մինչեւ վերջ, մնաց կենդանի մարմնացում հայ անկախ պետականութեան, որպէս մղիչ ուժ։

Երեւանի զինեալ ուժերի հրամանատար — պաշտօնը անուն էր լոկ, փաստօրէն Դրոն ամէն ինչ էր կազմակերպուող հայ բանակում։ Հայաստանը ունէր զինուորական նախարար՝ զօր. Յ. Հախվերտեանը, ունէր սպարա-

պետ՝ Նազարբէկեանը։ Երկու քաջ, ռազմագէտ եւ հմուտ զինուորականներ՝ ռուսական քաջաբաշխած բանակից մնացած։ Երկուսն էլ անպայման հայ ու հայրենասէր, բայց ոչ հայերէն լեզու գիտէին, ոչ հայութիւնն ու հայ իրականութիւնն էին ճանաչում բաւարար չափով։ Ոչ էլ իրենց անուններով ու հեղինակութեամբ դեռ ընդունակ էին ոգեւորելու եւ բարձր հեղինակութիւն դառնալու հայ ժողովուրդի աչքին։ Դրոյի ներկայութիւնը նրանց կողքին լրացնում էր այդ պակասը։

Դրոն անունով խմբապետ էր, կոչումով՝ յեղափոխական, հմտութեամբ եւ փորձառութեամբ՝ զինուորական։ Այն անձը, որ իր բարոյական հեղինակութեամբ կարող էր ներքին չաղախը դառնալ նորակազմ բանակի եւ կամաւորական խմբերի միջեւ։ Զօր. Նազարբէկեանն ու Հախվերտեանը այդ լաւ հասկացան եւ շատ բարձր էին գնահատում Դրոյի ներկայութիւնը բանակում։ Կառավարութիւնն եւս, Քաջազնունիի գլխաւորութեամբ, չուտով համոզուեց, թէ ինչ անփոխարինելի ուժ է իրեն համար Դրոն, որպէս անվիճելի հեղինակութիւն մարտական տարրերի աչքին։ Կառավարութիւնը կամեցաւ զինուորական աստիճան եւ ուսադիրներ չնորհել նրան — գնդապետ — բայց Դրոն կտրուկ կեր- պով մերժեց։ Մինչ ուրիշներ գլուխ էին կոտ- ռում աստիճանի եւ տիտղոսի համար, Դրոն մինչեւ վերջ էլ մնաց անտիտղոս, պարզ հրա- մանատարի վիճակում, ինչպէս եւ

մի քանի ուրիշներ։ Նրան ոյժ ու հեղինակութիւն տուողը ուսադիրները չէին, այլ իր անհատականութիւնն ու գործը։

Հայաստանի Հանրապետութեան առաջին օրերի կեանքից մի քանի դէպքեր յիշեմ, որոնք ապացոյց են Դրոյի բարձր անհատականութեան։

Այնպէս պատահեց, որ Անդրանիկը փոխանակ Զանգեզուրից Ղարաբաղ արշաւելու, անգլիացիներու ստիպումով անցաւ Էջմիածին եւ բանակ դրեց Ներսիսեան լճի ափին։ Նա մերժում էր ճանաչել «թուրքերի ստեղծած» Հայաստանի Հանրապետութիւնը, հրաժարւում էր գործ ունենալ հանրապետական կառավարութեան հետ, չանսաց եւ Դրոյի խնդրանքին, որ Հայաստանի կառավարութեան կողմից գնացել էր հրաւիրելու նրան մայրաքաղաք։ Եւ Երեւանի շուկայում պատահած մի աննշան դէպք պատճառ դարձաւ, որ Անդրանիկը իր զօրամասով քայլէր Երեւանի վրայ։ Ուրիշ պայմաններում արիւնահեղութիւնը անխուսափելի կը դառնար՝ անջնջելի արատ թողնելով նորածին ունդ պետութեան անուան վրայ։ Առաւելապէս Դրոյի աչալրջութեան, բացառիկ վարուելակերպին պէտք է վերագրել, որ Անդրանիկը հաւաքեց մայրաքաղաքի գլխին աբուած զինուորները եւ քաշուեց — հեռացաւ Էջմիածին։

Միայն Դրոյի աչալրջութեամբ եւ վայելած բարձր հեղինակութեամբ կարելի է բացատրել այն փաստը, որ պարենաւորման նախարար Խաչ. Կաճիկեանի սպաննութիւնը առիթ չդար-

ձաւ քաղաքացիական կռուի։ Տգէտ ու չարամիտ մարդիկ այսօր էլ դեռ խծբծում են Դրոյի անունը, որ իբր թէ հովանաւորել է ըսպաննիչ Եգոր Տէր Մինասեանին։ Բացարձակ անմտութիւն։ Դրոն, ինչպէս եւ մեզանից շատերը — եւ ինքը Ռոստոմը — Եգոր Տէր Մինասեանին համարել են քաջ եւ հայրենասէր մարտիկ։ Նրա արարքը, սակայն, արդիւնք է հոգեբանական այն պայմանների, որոնք Երեւան էին փոխադրուել Թիֆլիսի Սէյմի պալատից։ Եթէ Եգորին «հովանաւորներ» կային, յամենայնդէպս, Դրոն դրանց շարքում չէր։ Դրոն Կարճիկեանի մտերիմ եւ ճշմարտապէս սիրող ընկերներից մէկն էր։ Սիրում էր եւ Եգորին։ Այդ է պատճառը, որ վերջինս անձնատուր եղաւ Դրոյին։

Մեծ, չասելու համար նախախնամական եղաւ Դրոյի դերը եւ հայ-վրացական պատերազմում։

Անմիտ էր այդ պատերազմը, խելացնոր, բայց անխուսափելի։ Իմ «Հայաստանի Հանրապետութիւնը» հատորում կարելի է ասել սպառիչ կերպով ներկայացուած է այդ պատերազմի պատմութիւնը եւ Դրոյի խաղացած դերը։ Վրացիները պատճառ դարձան այդ պատերազմին՝ գրաւելով հայկական հողերը, փակելով երկաթուղին արտասահմանից Հայաստան բերուող պարէնի առջեւ, սովամահութեան մատնելով հայ ժողովուրդը։ Հայերին ոչինչ չէր մնում անել, բայց եթէ զէնքի դիմել։ Եւ Հայաստանի խոհե-

մագոյն վարչապետը՝ Քաջազնունին, բոլոր խաղաղ միջոցները սպասելուց յետոյ, Հայաստանի Խորհրդի միաձայն հաւանութեամբ, հարցի լուծումը յանձնեց հայկական բանակին՝ Դրոյի գլխաւորութեամբ, եւ Դրոն հայ տրեխաւոր զինուորութեան գլուխը անցած, յաղթանակից յաղթանակ, առաջ արշաւեց դէպի Թիֆլիս։ Եւ միայն անգլիական միջամտութիւնը փրկեց վրաց մայրաքաղաքը հայերի գրաւումից։

Դրոն այդ օրերին իսկապէս հանճարեղ ռազմագէտի հմտութիւն երեւան բերեց, որ յարգանք պարտադրեց նոյնիսկ թշնամի կողմին։ Ես յիշում եմ Երեւան բերուած մի քանի տասնեակ վրացի սպաներին եւ բարձրաստիճան զինուորականներին ի պատիւ տրուած մի ճաշկերոյթ Հայաստանի սպարապետութեան կողմից։ Այդպէս բաներ էլ հնարաւոր էին դեռ, որ պատերազմի միջոցին, գերի զինուորականութեան ի պատիւ ճաշկերոյթ տրուի։ Իրենց բարքին յատուկ՝ վրացի գերիների լեզուները արագ բացուեցին եւ գինու հետ միասին, ըսկըսեցին հոսել նաեւ բաժակաճառեր։ Պերճախօս զինուորականներից մէկը բաժակ պարզեց.

—Ես առաջարկում եմ խմել տաղանդաւոր եւ վեհանձն զօրահրամանատար Դրոյի կենացը։ Ես առաջարկում եմ խմել հայ եւ վրացի եղբայրական ժողովուրդների կենացը։ Ուռռա՛։

Եւ գրեթէ նոյն ժամանակ, վրաց հանրապետութեան հայր Նոյ Ժորդանիան չանթեր էր տեղում հայ «նենգամիտ» եւ «դաւադիր» ժողո-

վրդի գլխին, իսկ վրացիների Դրոն՝ Վալիկօ Ջուղելին յոխորտում էր «վախկոտ» հայերի հասցէին։

Հայ-վրացական պատերազմը վերջացաւ հայերի յաղթանակով, որ նոր կացութիւն ըստեղծեց Հայաստանի համար Կովկասում Դրոն վերադարձաւ իր ընթացիկ աշխատանքին — հայկական բանակի կազմակերպութեան Զօր. Նազարբէկեանի եւ Հախվերտեանի հետ, եւ երկրի արտաքին ու ներքին ապահովութեան։

Գրել այդ ժամանակաշրջանի Դրոյի կենսագրութիւնը՝ նշանակում է գրել Հայաստանի Հանրապետութեան պատմութիւնը։ Ես գերադասում եմ ընթերցողին յանձնարարել կարդալու իմ «Հայաստանի Հանրապետութիւնը» հատորը։

Դրոն ամէն տեղ էր եւ պետական բոլոր գործերի մէջ։ Նրա անմիջական մասնակցութեամբ կազմակերպուեց Հայաստանի բանակը։ Իբրեւ Հայաստանի Խորհուրդի, ապա՝ Խորհրդարանի պատգամաւոր, նա, զինուորական յանձնախմբում, գործօն դեր էր կատարում բանակի օրէնքների եւ ելեւմուտքի օրինագծերի պատրաստութեան մէջ։ Նրա առաջարկով եւ անմիջական գործակցութեամբ հիմնուեց Քանաքեռում սպայական դպրոց։ Ամէն անգամ, երբ բանակում ծագում էին դժուարութիւններ, ըսպարապետ Նազարբէկեանը դիմում էր Նրա խորհրդին եւ աջակցութեան։ Ամէն անգամ, երբ երկրի այս կամ այն մասում առաջ էին գալիս բարդութիւններ, կառավարութիւնը օգ-

տրւում էր նրա հեղինակութիւնից եւ պատրաստակամութիւնից։ Բանակի լաւագոյն սպայութիւնը մտերիմ կապերով կապուած էր նրա հետ։ Երկրի երիտասարդութեան շրջանակում նա մեծ հմայք էր վայելում։ Բացառիկ ազդեցութիւն ունէր եւ նախկին կամաւորների ու մարտիկների վրայ։ Իր չէն ու կենցաղագէտ բնաւորութեամբ նա սիրուած էր ամէն տեղ եւ բոլորի կողմից։

Ջարամիտ ու նեղսիրտ մարդիկ այսօր էլ դեռ հոլովում են Դրոյի եւ այսպէս կոչուած «մաուզերիստ»ների անունը, իբր թէ Դրոն հովանաւորում էր մի ժամանակ հասարակական չարիք դարձած այդ տարրերին։ «Մաուզերիզմ»ը ամէն տեղ սովորական երեւոյթ է պատերազմներից յետոյ կամ յեղափոխութիւնների շրջանում։ Անաշխատ կեանքի եւ մարդ սպաննելու վարժուած տկարակազմ եւ բարոյական զսպանակներից զուրկ մարդիկ յաճախ դիմում են «մաուզերի» օգնութեան իրենց գոյութիւնը ապահովելու համար։ Որոշ ժամանակ նման երեւոյթներ տեղի ունեցան եւ Հայաստանում, ինչպէս տեղի ունեցաւ Ամերիկայում էլ, երբ պատերազմը վերջացաւ, եւ Սովետական Միութեան մէջ մինչեւ այժմ։ Եւ անբնական չէ, որ «մաուզերիստ»ներից ոմանք օգտագործէին հեղինակութիւնը իրենց վատ նպատակների համար։ Դրոն, ի հարկէ, ոչ մէկ մեղք չունէր այդ գործում, ինչպէս մեղք չունէին Արամը կամ

Ռուբէնը, երբ նրանց անունով ժողովրդից դը-
րամ էին շորթում աւազակները։ Դրոն, ընդհա-
կառակը, զսպիչ եւ պատժող բազուկ էր այդ-
պիսիների համար։ Պատմական ճշմարտութիւն
չդաւաճանելու համար այն էլ պէտք է ասել,
որ «մաուզերիզմ»ը Հայաստանում աւելի չէր,
քան նոյն երեւոյթը, պատերազմի հաշուեյար-
դարի ընթացքում, Ամերիկայում կամ Եւրոպա-
յում։ Բոլշեւիկեան «մաուզերիզմ»ի համեմատու-
թեամբ հայկականը խաղալիք կարելի է համա-
րել։

Ասացինք, որ Դրոն մեծ հմայք էր վայե-
լում եւ երիտասարդութեան մէջ։ Նրա գաղա-
փարական եւ ընկերական կապերի թիֆլիսի
«աշխատաւորական» խմբակի հետ ծանօթ են։
Նշանակալից էր, որ Հայաստանի արեւմտահայ
երիտասարդութիւնն էլ, մանաւանդ, «Աշխա-
տանքի» բովից անցած տղաները մտերիմ կա-
պերով կապուած էին նրա հետ։ Բացատրու-
թիւնը միայն Դրոյի աննենգ մարդկային բնա-
ւորութեան մէջ չէր՝ Բարունակ կապուտիկեան-
ները, Հմայեակ Մանուկեանները — ամէնքը —
գաղափարական տեսակէտից անվերապահ հա-
մակրում եւ վստահում էին նրան։

Իսկ սպայութիւնը ուղղակի պաշտում էր
Դրոյին։ Եւ դարձեալ պատճառը Դրոյի չէն
մարդկայնական բնաւորութիւնը չէր, այլ, ամե-
նից առաջ, գաղափարական հայրենասիրութիւնը,
անձնուիրութիւնը եւ զոհաբերութեան ոգին։

Դրոյի հետ — այո, եւ Դրոյի համար — մեռ-
նելն էլ պատիւ էր համարւում։

Ես չեմ ճանաչում ուրիշ ոեւէ մէկը, որ
Հայաստանում, այդ օրերին աւելի ժողովրդա-
կան լինէր, աւելի համակրանք վայելէր, աւելի
սիրուէր ժողովուրդի բոլոր խաւերի կողմից,
քան Դրոն — ընկեր Դրոն։

Տիտղոս չունէր նա։ Տիտղոսը երեք տա-
ռից էր բաղկացած — ԴՐՕ, կամ շատ-շատ
ԸՆԿԵՐ ԴՐՕ։ «ԸՆԿԵՐ» բառի ամենամտերիմ եւ
հարազատ իմաստով։

Կարող եմ համարձակ վկայել, Դրոն մէկն
էր այն սակաւութիւններից, որոնք աստիճանի,
տիտղոսի եւ փառքի յետեւից չէին վազում։
Փառքը ինքը վազում էր Դրոյի յետեւից։

Թ

ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Հայաստանի Հանրապետութեան կեանքում 1919թ. աշունը կարեւոր շրջան եղաւ։ Պետութիւնը այլեւս հաստատուած ամրապնդուած էր համարւում։ Թուրքիան հեռացել էր Կովկասից՝ վերականգնելով նախապատերազմեան սահմանագիծը. Կարս եւ Սարըղամիշ Հայաստանի ներսում էին արդէն։ Բարելաւուել էին որոշ չափով, եւ յարաբերութիւնների դրացի պետութիւնների հետ։ Գաղթականութիւնը հնարաւորութիւն էր ստացել վերատեղաւորուել։ Երկրի վարչական մեքենան օրէցօր կանոնաւորւում էր։ Տեղի էր ունենում շինարարական եռուն աշխատանք։ Միջազգային յարաբերութիւններն էլ լաւատեսութիւն էին ներշնչում, մեր բարեկամ Ուիլսընը տրամադիր էր ընդունելու Հայաստանի հոգատարութիւնը։ Եւ Հ.Յ.Դաշնակցութեան 9րդ Ընդհանուր ժողովը, աշնան, տեղի ունեցաւ յոյզերի եւ յոյսերի բարձր մթնոլորտում՝ որոշելով հայկական պետութեան ապագայ ուղիները։

Դրոն Երեւանի զինեալ ուժերի հրամանատար չէր. Հայաստանի վերաբաժանուել էր նոր վարչական մասերի, եւ Երեւանը դառնում էր

առանձին մի միաւոր՝ հանրապետական վարչակազմով։ Դրոն առանձին զօրամասի հրամանատար էր եւ Խորհրդարանի անդամ։ Նա կենդանի կերպով ապրում էր այն հարցերով, որոնք քննութեան առնուեցին Ընդհանուր Ժողովում։

Ընդհանուր Ժողովում բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան մասնաւորապէս Հ.Յ. Դաշնակցութեան նոր կանոնագրի եւ Հայաստանի Հանրապետութեան ապագայ վարչակազմի մասին։ Երկու հարցերի մասին էլ, Բիւրոյի կողմից, ինձ էր յանձնուած զեկուցում ներկայացնելը։ Երկու զեկուցումների առթիւ էլ երկրորդ խօսքը պատկանում էր Ռուբէնին։ Եւ երկու հարցերի շուրջ էլ մեր տեսակէտները հիմնովին բաժանուեցին իրարից անհաշտ կերպով։

Ռուբէնը մեկնում էր Թուրքիայի օրինակից եւ գտնում էր, որ Հայաստանը դեռ հասունցած չէ ազատ ժողովրդապետութեան համար։ Անկախութեան պայմաններում պէտք է վերջ տրուի Հ.Յ.Դաշնակցութեան լայն ապակեդրոնական դրութեան յօգուտ կեդրոնացման։ Եւ Հ.Յ.Դ. Բիւրոն պէտք է դառնայ կեդրոնական Կոմիտէ, որին պէտք է ենթարկուին կուսակցութեան բոլոր կեդրոնական կոմիտէները, ինչպէս եւ Հայաստանի խորհրդարանի «Ֆրակցիան»։

Մի տեսակ «Իթթիհատականութիւն» էր բուրում այս տեսութիւնից, որ արմատական

հերքումն էր Դաշնակցութեան մինչեւ այդ որդեգրած ուղղութեան։

Իմ զեկուցումները կուսակցութեան եւ պետութեան կազմակերպական ձեւերի մասին, վաւերացուած Բիւրոյի կողմից բխում էին Հ.Յ. Դաշնակցութեան հիմնական աշխարհայեացքից, գաղափարաբանութիւնից եւ աւանդական սկզբունքներից եւ ձեւերից։ Ես էլ ընդունում էի, որ Հայաստանի պետականութեան պայմաններում այլեւս օգտակար չէ կուսակցութեան բացարձակ ապակերդոնացումը եւ Բիւրոն եւ կեդրոնական կոմիտէները պէտք է օժտուէին աւելի լայն վարչական իրաւունքներով, բայց պետութիւնը պէտք է լինէր պետութիւն՝ ժողովրդավար խորհրդարանով եւ խորհրդարանի առջեւ պատասխանատու կառավարութեամբ, որոնց գործելու ազատութիւնը պէտք չէ կաշկանդուէր կուսակցական մեծամասնութեամբ։ Կուսակցութիւնը պէտք է մնար նախաձեռնողի, հսկողի, հակակշռողի սահմաններում խորհրդարանական իրաւակարգի սկզբունքներով։ Ուրիշ խօսքով՝ Հայաստանի Հանրապետութեան վարչաձեւը պէտք է լինէր իրաւական պետութեան վարչաձեւը։

Այս երկու ներհակ տեսակէտների շուրջ տեղի ունեցան բուռն, մերթ ծայրայեղութեան հասնող վիճաբանութիւններ։ Եւ ինչպէս յաճախ պատահում է Դաշնակցութեան մէջ, երբ հնարաւոր չի լինում միաձայնութեան հասնել, որդեգրուեց միջին ուղին երկու կողմին էլ

տուրք տալով։ Ըստ այնմ էլ վերախմբագրուեց Հ.Յ.Դաշնակցութեան կանոնագիրը։

Այս վէճերը, բնականաբար, արձագանգ էին գտնում զանազան կողմերը, հասարակութեան այլազան խաւերում։ Իմ պաշտպանած տեսակէտին յարեց երիտասարդութիւնը, մասնաւորապէս Թիֆլիսի «Աշխատանք»ի շուրջ հաւաքուած ընկերները։ Այստեղից՝ առասպելը իմ «ձախ դաշնակցական»ութեան մասին։

Այստեղից նոյն առասպելը եւ Դրոյի «ձախութեան» մասին, որովհետեւ նա էլ, ըստ ամենայնի համաձայն էր իմ ներկայացրած տեսակէտին եւ ամէն գնով պայքարում էր «Իթթիհատական քոմիտաճիութեան» դէմ, որով Կորիւն Ղազարեանը որակել էր Ռուբէնի ջատագոված կեդրոնացման տեսութիւնը։ Ասել, թէ Դրոն լրիւ կերպով մարսել էր տեսական այդ հարցը, ի հարկէ, ճիշդ չի լինի, բայց, իբրեւ գործի մարդ նա շատ լաւ էր ըմբռնել հայկական միջավայրի պահանջները, քաջ ծանօթ էր հայ ժողովուրդի հոգեբանութեան, եւ կարելի է ասել, բնազդօրէն արտայայտում էր իրականութեան թելադրութիւնները եւ յետոյ իբրեւ ուղեցոյց-աստղ, նրա առջեւ կանգնած էր միշտ Ռոստոմը։ Նա իրաւամբ համոզուած էր, որ եթէ Ռոստոմը ողջ լինէր, պիտի պաշտպանէր «ապակեդրոնացումը», «Ռոստոմիզմ» էր կոչում։

Դրոյին հետ «աշխատաւորականներին» միանում էր եւ ռուսական հարցը։ Դրոն ռուսասէր էր բառի լաւ իմաստով։ Գուցէ պատ-

ճառը այն էր, որ նա Եւրոպայի հետ չատ գործ չէր ունեցեր։ Եւրոպական դիւանագիտութեան նա չէր հաւատում, ոչ էլ անկեղծութիւն էր տեսնում հարեւանների մէջ. նա համոզուած էր, որ Հայաստանի եւ հայ ժողովուրդի չահը պահանջում էր բարեկամ մնալ Ռուսաստանին, փոյթ չէ, կարմիր թէ ճերմակ։

Այդ օրերին չատերը համոզուած էին այդպէս, այդ պատճառով այնպէս ցաւագին եղաւ անջատումը Ռուսաստանից։ Ռուսաստանը ինքը նպաստեց, որ ռուսասիրութիւնը հայերի մէջ չուտով ցնդի։

Հ.Յ.Դաշնակցութեան 9րդ Ընդհանուր Ժողովից յետոյ, հերթի դրուեց Ղարաբաղի հարցը։ Այս հարցը եւս սպառիչ կերպով ներկայացուած է իմ «Հայաստանի Հանրապետութիւն» հատորում — Ղարաբաղի հայութեան ճիգերը միանալու Հայաստանի Հանրապետութեան։ Դրոյին վիճակուեց կարեւոր դեր Ղարաբաղի հարցում։ Կառավարութեան որոշումով նա իր զօրամասով անցաւ Զանգեզուր ու Ղարաբաղ, ուր Ազրպէյճանի կառավարութիւնը նահանգապետ էր նշանակել յայտնի Դոկտ. Սուլթանովին եւ իր ամբողջ բանակը չարժման մէջ էր դրել կոտրելու համար Ղարաբաղի հայերի յամառութիւնը։ Ղարաբաղը ապստամբում էր Սուլթանովի բռնութիւնների դէմ եւ պատերազմի մէջ էր Ազրպէյճանի կանոնաւոր զօրքերի դէմ։ Ղարաբաղցիներին օգնութեան հասաւ Դրոն։ Ազրպէյճանի ամբողջ բանակը, հրամանատար Զօր-

Շիխլինսկիի գլխաւորութեամբ, գրաւուեց Ղարաբաղի կռիւներով։ Առիթից օգտուելով՝ բոլշեւիկները հիւսիսից, Թուրքերի օգնութեամբ, մըտան Բաքու եւ տեղի ունեցաւ Ազրպէյճանի խորհրդայնացումը, 1920 թուի Ապրիլի վերջը։ Կարմիր Ազրպէյճանն էլ չարունակեց մուսաւաթականների քաղաքականութիւնը Ղարաբաղի վերաբերմամբ։ 11րդ կարմիր բանակի հրամանատարութեան վերջնագրի վրայ, որի կազմին մէջ էր գտնուում եւ հայ Միկոյեանը, Ղարաբաղի հայերը ստիպուած եղան անձնատուր լինել։ Դրոն էլ իր ուժերով հեռացաւ Ղարաբաղից։ Դեռ նա Զանգեզուրում էր, երբ կարմիր բանակի աջակցութեամբ Գորիսի վրայով, Թուրքիա անցաւ Խալիլ Փաշան Ռուսաստանում մարզուած կարմիր ասկեարներով եւ ռուսական ոսկիով ու ռազմամթերքով բեռնաւորուած ինքնաշարժներով՝ հրաշքով միայն ազատուելով Դրոյի զօրամասի ձեռքից։

Դրոն դեռ Ղարաբաղում էր, երբ Ազրպէյճանի խորհրդայնացման յաջորդեց Մայիսեան բոլշեւիկեան ապստամբութիւնը Հայաստանում։ Դրոն միայն մասնակի կռիւներ ունեցաւ բոլշեւիկների հետ Զանգեզուրում ու Դալարագեազում։ Երբ Երեւան հասաւ, ապստամբութիւնը գրեթէ հաշուեյարդարի էր ենթարկուած արդէն։ Բոլշեւիզմի ճնշման պատիւը պատկանում էր առաւելապէս Սեպուհին եւ ընկերներին։

Մայիսեան հաշուեյարդարին յաջորդեց Զանգեզուրի մաքրագործումը։ Զանգիբազարի շուրջ

20 մահմետական գիւղերը գործիք դարձած թուրք գործակալների ձեռքին, մերժում էին ճանաչել Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը։ Բոլշեւիկներին ճնշելուց յետոյ, Բիւրո-կառավարութիւնը որոշեց զսպել եւ Զանգիբազարցիներին՝ կանոնաւոր զօրամասերի միջոցով։ Դրոն բուռն կերպով բողոքեց այդ որոշման դէմ։ Զանգիբազարի նուաճման նա, ի հարկէ, հակառակ չէր եւ համոզուած էր, որ բոլշեւիկները սանձահարելուց յետոյ աւելի դիւրին կը լինի Զանգիբազարի մաքրագործումը, բայց, անընդունելի, վնասակար էր համարում կանոնաւոր զօրքի մասնակցութիւնը Զանգիբազարի գրաւման։ Նա անվիճելի փաստերով եւ իրատեսութեամբ աշխատում էր համոզել, որ բանակի մասնակցութիւնը քաղաքացիական կռիւներում, անխուսափելի կերպով կը խախտէ զինուորութեան կարգապահական ոգին, կը բարոյալքէ ու կը տկարացնէ մարտունակութիւնը։

Այդպէս էլ տեղի ունեցաւ։ Զանգիբազարը նուաճեց, ճիշդ է, բայց մահմետական գիւղերի մաքրագործման մասնակցող զօրամասերն էլ բարոյալքուեցին ու գրեթէ կազմալուծուեցին։ Մաքրագործումը անխուսափելի կերպով կապուած էր թալանի եւ հարստահարութիւնների հետ...

Դրոն գիտէր այս եւ թոյլ չտուեց, որ իրեն ենթակայ զօրամասերը մասնակցին Զանգիբազարի գործողութեան։ Եւ հետագայ դէպքերը ցոյց տուին, թէ որքան իրաւացի էր Դրոն,

երբ միայն Սուրմալուի ճակատի վրայ, ուր գործում էին Դրոյի զօրամասերը, հայ բանակը ընդունակ եղաւ վճռական հակահարուած հասցընելու թշնամուն։

Մայիսեան ապստամբութիւնը եւ Զանգիբազարի «օպերացիան» ներսից եւ կարմիր բանակի ճնշումները հիւսիսից ու ռուս-թրքական գործակցութիւնը Հայաստանի դէմ նախապատրաստեցին հայ-թրքական պատերազմն ու Հայաստանի խորհրդայնացումը, որոնց մէջ Դրոյին վիճակուեց առաջնակարգ դեր խաղալու։

Պէտք չէ մոռնալ, թէ ինչ ժամանակաշրջան էր 1920 թուականի ամառը։ Հայաստան արդէն կազմակերպուած եւ միջազգային ճանաչում ստացած պետութիւն էր։ Օգոստոս 10ին, Սեւրում, մեծ պետութիւնների շարքում, Հայաստանի պատուիրակն էլ ստորագրեց Խաղաղութեան Դաշնագիրը Թուրքիայի հետ, որով Հայաստանի Հանրապետութիւնը ամբողջացած՝ դառնում էր անկախ ազգերի համակեցութեան անդամ։ Թւում էր, թէ հայ ժողովրդի դարաւոր իղձերը իրականանում էին։

Միաժամանակ, սակայն, նիւթւում էր մեծ դաւը Հայաստանի եւ հայ ժողովրդի դէմ։ Քրեմլինի իշխանաւորները մի կողմից յոյսերով էին օրօրում հայերին՝ ճանաչելով Հայաստանի անկախութիւնը, միւս կողմից գաղտնի դաշինք էին կնքում Թուրքիայի հետ, որի մէկ սլաքը ուղղուած էր Հայաստանի դէմ։

Սեւրի խորհրդաժողովին անմիջապէս յա-

ջորդեց Արեւելեան Ժողովուրդների համագումարը Բաքուում, Երրորդ Միջազգայնական պետ Զինովիեւի նախագահութեամբ եւ Ինվեր ու Խալիլ փաշաների նման ճիւաղանուն «համայնավար պրոլետարների» մասնակցութեամբ։ Այդ համագումարում վճռուեց եւ Հայաստանի բախտը, ճակատ յարդարուեց նաեւ Սեւրի դաշնագրի ու Հայաստանի Հանրապետութեան դէմ։ Հայաստանի «փրկութեան» գործը առաւել ինքը Ստալինը եւ Մոսկուայի անմիջական հաւանութեամբ եւ դրամական ու ռազմական աջակցութեամբ Քեազիմ Կարապէքիրի բանակը ազատութիւն ստացաւ յարձակուելու անպաշտպան Հայաստանի վրայ։

Շատերի նման Դրոն էլ աչք-բացօք տեսնում էր Հայաստանի գլխին կուտակուող սեւ ամպերը։ Ոմանց նման, նա չէր օրօրւում զուր յոյսերով, չէր հաւատում դաշնակիցների խոստումներին։ Եւ տառապում էր՝ տեսնելով, թէ ինչպէս հայ բանակը տկարանում է Զանգիբազարի նման ձեռնարկներով։ Բանակը պէտք էր, նրա համոզումով, հեռու պահել քաղաքացիական կռիւներից։ Բանակը զէնք է արտաքին թշնամու դէմ։ Այդ տեսակէտից սուր տարակարծութիւն կար նրա եւ Բիւրօ-կառավարութեան անդամների մի մասի միջեւ։

Տարբերութիւն կար եւ արտաքին քաղաքականութեան նկատմամբ։ Ինչպէս ասացինք, Դրոն չէր հաւատում դաշնակից ներկայացուցիչների խոստումներին։ Եւրոպան կամ Ամերիկան

չատ հեռու էին հայութիւնից եւ չէին կարող օգնութեան հասնիլ։ Փոխանակ հեռաւոր սուրբից փրկութիւն սպասելու, աւելի խելացութիւն էր մօտաւոր սուրբին ապաւինելու։ Մօտաւոր սուրբը ռուսն էր ու Ռուսաստանը՝ ճերմակ թէ կարմիր՝ միեւնոյնն է։ Որոշ ժամանակ պէտք է անցնէր, որպէսզի այդ սուրբից էլ հիասթափուէր ու հրաժարուէր...

Ժ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ

Սեւրի դաշնագրի ստորագրութիւնից յետոյ, Հայաստանում եւ բովանդակ հայութեան մէջ տիրում էր արտասովոր խանդավառութիւն Մայիսեան հակապետական ընդվզումները հաշուեյարդարի ենթարկուեցին եւ Զանգեզուրի ձեռնարկի առթիւ հասարակութեան որոշ խաւերում եւ Բիւրօ-կառավարութիւնից ներս ծագած դժգոհութիւնները մոռացութեան տրուեցին։ Ամէնքը ոգեւորուած էին ապագայ լաւատեսութեամբ։ Կարծես ամէն վտանգ արդէն անցած էր։

Զարմանալի չէ, ուրեմն, որ թրքական ու բոլշեւիկեան գործօնը, Անգարայից ու Բաքուից հասնող սպառնալիքները այն տպաւորութիւնը չգործեցին՝ ինչ որ պիտի գործէին ուրիշ պայմաններում։ Զինուորական նախարար Ռուբէն Տէր Մինասեանը բարձրաձայն խօսում էր էրզրումը գրաւելու մասին, իսկ զինուորական նախարարը պէտք է ծանօթ լինէր թշնամու ուժերին եւ Հայաստանի բանակի մարտունակութեան։ Այսպէս էր դատում հասարակութիւնը՝ վարակուած կառավարութեան լաւատեսութիւնից։

Դրոն այդպէս չէր դատում։ Նա սարսա-

փով էր դիտում վերահաս պատերազմի ուրուականը։ Ծերունի սպարապետը թէեւ ենթարկըւում էր զինուորական նախարարի հրահանգներին, բայց սրտով ու գիտակցութեամբ Դրոյի հետ էր, նոյնպէս Զօր. Սիլիկեանը եւ բանակի բարձր հրամանատարութեան լուրջ մասը, պատերազմը աղէտ էր նրանց աչքին. ամէն գնով պէտք էր խուսափել պատերազմից, որ անհրաժեշտօրէն լինելու էր երկու ճակատի վրայ — հարաւից ու հիւսիսից — եւ գերազանց ուժերի դէմ։

Պատերազմը, սակայն, պայթեց Սեպտեմբերի վերջերը, երբ Քեազիմ Կարապէքիրի զօրամասերը, առանց յայտարարութեան, յարձակուեցին Հայաստանի վրայ՝ հիւսիսում գործակից ունենալով Կարմիր Բանակը եւ համայնավար կուսակցութիւնը։

Զօր. Նազարբէկեանը առաջարկեց Դրոյին ստանձնել Սարըղամիշի ճակատի հրամանատարութիւնը, Դրոն գերադասեց ընդունել Սուրմալուի ճակատի պաշտպանութիւնը։ Իրաւամբ նա գտնում էր այս ճակատը աւելի կարեւոր։ Իր հոգու խորքում ունէր անշուշտ եւ ուրիշ նկատում. նրան ծանօթ էին զինուորական նախարարութեան տրամադրութիւնները. Կարսի շրջանի ընդհանուր վիճակը, ինչո՞ւ առողջ գլուխը դնել Աւետարանի տակ, երբ անզօր ես որեւէ բան անելու։ Սուրմալուի ճակատը Դրոյի հրամանատարութեան ներքոյ հանդիսացաւ պատերազմի միակ լուսաւոր մասը, ուր հայ բանակը

հերոսական դիմադրութիւն ցոյց տուեց եւ թոյլ չտուեց, որ թշնամին մօտակայ մայրաքաղաքին։

Պատերազմի սկիզբին, վարչապետի եւ զինուորական նախարարի պնդումով որոշուեց, որ կառավարութեան անդամները ցրուեն գաւառները եւ ռազմաճակատ՝ աջակցելու համար երկրի պաշտպանութեան։ Մայրաքաղաքում մնացին միայն վարչապետ Համօ Օհանջանեանը եւ զինուորական նախարար Ռուբէն Տէր Մինասեանը։ Ինձ եւ բժ. Ա. Բաբալեանին բաժին ինկաւ Կարս-Սարըղամիշ ռազմաճակատը։ Ռուբէնը մեզ ճանապարհ ձգեց ճառով Աբովեան պողոտայի վրայ. «Ծտեսութիւն կարինում» եղաւ մեզ նրա վերջին խօսքը — այնքան վստահ էր թէ պիտի յաղթենք։

Երեւանից մեկնելուց առաջ ես տեսնուեցի Դրոյի հետ։ Նա մռայլ գոյներով նկարագրեց կացութիւնը եւ ցաւ յայտնեց, որ ես հեռանում եմ մայրաքաղաքից։ Նա լաւատեղեակ էր Կարսի զօրամասերի հոգեբանական վիճակին, մանաւանդ, հրամանատարական կազմի թուլութեան։ Վրդովուած էր, որ զինուորական նախարարութիւնը հրամայել էր Սուրմալուի ճակատի լաւագոյն զօրաբաժինների մէկ մասը փոխադրել Կարսի շրջանը։ Նա չէր ժխտում Կարսի ճակատը ուժեղացնելու անհրաժեշտութիւնը, բայց ոչ Սուրմալուի տկարացման գնով։ Սուրմալուն կորցնել, նրա կարծիքով, նշանակում էր Հայաստանը կորցնել։

Երբ Ա. Բաբալեանի հետ միասին մենք

հասանք Կարս եւ սկսեցինք ծանօթանալ բանակի վիճակին ու ռազմաճակատի պահանջներին, ես համոզուեցի, որ Դրոյի յոռետեսութիւնը շատ մեղմ էր իրականութեան հետ համեմատած։ Մեր բոլոր զեկուցումները զինուորական նախարարին եւ հեռագրական պահանջները մընացին անարձագանգ. բաւարարութիւն չէին գտնում. չէին կարող բաւարարութիւն գտնել։ Ճակատագիրը կարծես նախորոշել էր պատերազմի վախճանը։

Ընկաւ Սարիղամիշը։ Ընկաւ Կարսը։ Ընկաւ Ալեքսանդրապոլը։ Թշնամին անպատիժ թափանցեց աւելի խորերը։ Հայկական բանակի դիմադրական ոգին խորտակուած էր։ Սակայն կանգուն եւ ամուր մնաց Սուրմալուի բանակը Դրոյի հրամանատարութեան տակ։

Եւ բնական էր, որ երբ Բիւրօ-կառավարութիւնը պարտուած՝ հրաժարական տուեց եւ նրան յաջորդեց մի նոր կառավարութիւն հաշուեյարդարի ենթարկելու համար չարաղէտ պատերազմը, առաջին տեղերից մէկը այդ նոր կառավարութեան մէջ գրաւեց Դրոն, իբրեւ զինուորական նախարար։ Թուրքերի ճնշման տակ՝ պատերազմի հաշուեյարդարը վերջացաւ անկախութեան կորուստով անբնական չէր, որ Դրոյին վիճակուեց Հայաստանի խորհրդայնացման դառնութեան բաժակը պարպել ցմրուր։ Նա էր օրուայ հերոսը եւ աչք ամենեցուն իրան էին յառած փրկութեան յուսով։

Կառավարութեան յանձնարարութեամբ Դր-

րոն վարեց բանակցութիւնները Համբարձում Տէրտէրեանի ընկերակցութեամբ, Խորհրդային ներկայացուցիչ Լէգրանի հետ եւ Տէրտէրեանի հետ ստորագրեց համաձայնագիրը։ Իրբեւ Հայաստանի առժամեայ վարիչ, մինչեւ Ցեղկոմի հասնիլը, Դրոն թոյլ տուեց, որ Ա. Խատիսեանը ստորագրէ թուրքերու հետ հաշտութեան դաշնագիրը Ալեքսանդրապոլում։ Դրոն թոյլ տուեց, անշուշտ, նախօրօք ունենալով Դաշնակցութեան հաւանութիւնը։ Ուրիշ ելք չկար. կամ պէտք է ընդունուէր Քեազիմ Կարաբէքիրի վերջնագիրը, կամ Երեւանն էլ պիտի գրաւուէր թուրքերու կողմից. կարմիր բանակը հեռու էր եւ անզօր թուրքերու յառաջխաղացումը արգիլելու։

Դրոն դարձաւ քաւութեան նոխազ ուրիշի մեղքերի համար։ Ի հարկէ նա կարող էր խուսափիլ այդ պարտականութիւնից, թողնել ու հեռանալ Հայաստանից, ինչպէս ուրիշներն արին, բայց հայրենասիրութեան եւ պարտականութեան զգացումը նրա մէջ այնքան ուժեղ էին, որ նա չէր կարող այդպէս վարուել։ Մընաց երկրում, ժողովուրդի մէջ ու չվախցաւ պատասխանատուութիւնից յանուն հայ հայրենիքի եւ հայ ժողովրդի փրկութեան։

Ես մօտից ծանօթ եմ այդ օրերի նրա ապրումներին։ Օրուայ գրեթէ բոլոր հրատապ հարցերը մենք միասին էինք քննում յաճախակի մեր հանդիպումների ընթացքին։ Նա հաւատում էր եւ վրդովումով յետ էր մղում իմ կաս-

կածները — հաւատում էր, որ կարմիր բանակը շուտով կը հասնի եւ կը վերացնէ Հայաստանի գլխից թրքական դեմոկլեան սուրը։ Հաւատում էր, որ «ռուսական օրիէնտացիան» փրկութիւն կը լինի հայ ժողովրդի համար։ Աշխատում էր միայն ժամանակ շահել, որպէսզի ռուս զօրքը հասնի Երեւան։

Լէգրանի հետ ստորագրուած համաձայնութեամբ Հայաստանը պիտի դառնար սովետական անկախ հանրապետութիւն եւ պիտի կազմուէր բոլշեւիկներից եւ «ձախ դաշնակցականներից» բաղկացած յեղափոխական կառավարութիւն՝ Ցեղկոմ։ Դրոն եւ Տէրտէրեանը պիտի մտնէին Ցեղկոմի մէջ, իբրեւ «ձախ դաշնակցականներ»։ Բանակի եւ կառավարութեան անդամները, պաշտօնեաներն ու քաղաքական կուսակցութեանց անդամները պիտի չհետապնդուէին իրենց նախկին գործունէութեան համար։ Մինչեւ Ցեղկոմի Երեւան հասնելը երկրի իշխանութիւնը պիտի վարէր Դրոն, իբրեւ բանակի հրամանատար, Սիլինի ընկերակցութեամբ։ Դեկտեմբեր 2ի կէս գիշերին իշխանութիւնը պիտի անցնէր բոլշեւիկներին խաղաղ կերպով։ Այդպէս էր Հայաստանի Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի եւ կառավարութեան որոշումը։ Այդ իմաստով յայտարարութիւն արուեց հրապարակով եւ հրահանգ տրուեց բանակին ու պետական պաշտօնէութեան մայրաքաղաքում եւ գաւառներում։

Դրոն սակայն — եւ մենք ամէնքս — ըզ-

գում էինք, որ ամէն ինչ հարթ պիտի չանցնի եւ որոշ անհատներ զոհ պիտի դառնան բոլշեւիկեան վրէժխնդրութեան։ Այդ է պատճառը, որ Դաշնակցութիւնը որոշեց, որպէսզի կառավարութեան անդամների մէկ մասը եւ մի շարք պատասխանատու գործիչներ հեռանան արտասահման։ Դրոն ամէն միջոց ի գործ դրեց, ամէն աջակցութիւն ցոյց տուեց, որպէսզի բոլշեւիկների աչքին առանձնապէս թշնամանքի առարկայ նկատուող անձերը ժամ առաջ հեռանան երկրից, ինչպէս բժ. Համօ Օհանջանեանը, Ռուբէն Տէր Մինասեանը, Արա Զիլինգիրեանը, Բաշխի Իշխանեանը, Լեւոն Քալանթարեանը եւ ուրիշներ։ Դրանից ոմանց հետ նա գաղափարական բախումներ էր ունեցել, եւ առաջին հերթին հէնց դրանց ապահովութեան մասին հոգաց՝ գիտնալով հանդերձ, որ վերջը կարող է մեղադրուել այդ բանի համար։

Երկիրը առանց ցնցումի եւ բանակն ու պաշտպանութիւնը կարգապահ ու խաղաղ ենթարկուեցին իշխանութեան փոխանցման Դրոյի ուժեղ բազուկի ներքոյ։ Թրքական անմիջական սպառնալիքն էլ անցաւ հաշտութեան դաշնագրի ստորագրութեամբ։ Փաստօրէն Դրոն եւ Սիլինը արդէն իշխանութիւն էին եւ կարող էին արգելք լինել դաշնագրի ստորագրութեան, երբ Ալ. Խատիսեանը ուղիղ հեռագրաթելով նոր կառավարութիւնից հրահանգ ուղեց Ալեքսանդրապոլից Քեազիմ Կարաբեքիրի վերջնագրի մասին։ Դրոն գիտակցում էր, որ եթէ ասէր

«ստորագրեցէք», պատասխանատու պիտի մնար սովետական կառավարութեան առջեւ. եթէ արգիլէր, թուրքերը անմիջապէս պիտի խախտէին զինադադարը եւ Մարգարայի կամուրջով շարժուէին դէպի Երեւան. ռուսները անզօր էին նրանց առաջն առնելու, Դրոյի պատասխանը եղաւ «դիւանագիտական». եւ Խատիսեանը հասկցաւ, թէ ինչ էր ուզում ասել նա։ Ալեքսանդրապոլի դաշնագիրը սարսափելի էր եւ բոլշեւիկեան տեսակէտից՝ ապօրինի, բայց այդ օրերի պայմաններում անհրաժեշտ էր եւ անխուսափելի։ Ահա թէ ինչու բոլշեւիկները քաջութիւնը չունեցան մերժելու եւ պատասխանատուութեան ենթարկելու Դրոյին կամ նախորդ կառավարութեան պատուիրակութեան անդամներին։ Եւ մինչեւ այսօր էլ հայ բոլշեւիկները հաշտուում են միայն, բայց համարձակութիւն չունին մարդկային լեզուով, ըստ էութեան, ներկայացնելու Ալեքսանդրապոլի դաշնագրի իրական պատմութիւնը։

Դրոն երկու օր եղաւ Հայաստանի ժողովրդական ինքնակալը եւ հասարակութեան պաշտամունքի առարկան։ Երեւան հասան կարմիր բանակի առաջաւոր մասերը՝ նիհար ձիերի վրայ, վատ հագնուած, ողորմելի տեսքով, ճրուճրուան մառուչկաներով շրջապատուած, Դրոն ընդունեց նրանց զինուորական պատիւներով։ Եկան Ազրպէյճանից Ցեղկոմի անդամները. Դրոն հիանալի հագնուած եւ գեղեցիկ ձիաւորների գլուխն անցած՝ ընդառաջ գնաց մինչեւ

Քանաքեռ եւ պատիւներով բերեց Երեւան։ Ցեղկոմի անդամները երկար ժողով ունեցան եւ Դրոն սպասեց կողքի սենեակում...։

Մի քանի օրից Ցեղկոմը անցաւ գործի։ Լէգրանի ստորագրած համաձայնագիրը պատուբերեց։ Տէրտէրեան եւ Դրոն մնացին Ցեղկոմից դուրս. առաջինը նշանակուեց պետական դրամատան կոմիսար. Դրոն պահուեց իբրեւ Երեւանի զօրամասի հրամանատար. նա դեռ պէտք էր բոլշեւիկներին։ Կազմուեց Զեկան տխրահռչակ Աթարբէգովի գլխաւորութեամբ։ Եւ սկսուեց կատաղի խաչակրութիւն Դաշնակցութեան դէմ։ «Արեան ծովում պէտք է խեղդել դաշնակներին», «առանց բուրժուազիայի արիւնը թափելու չի կարող յաղթանակել պրոլետարիատի դիկտատուրան», ճւում էին ջղագար Աւիսները բեմերից եւ «Կոմունիստ» պաշտօնաթերթի էջերից։ Մթնոլորտը հետզհետէ անչնչելի էր դառնում Հայաստանում։

Դրոն յաճախ այցելում էր ինձ։ Դուրսը նա դեռ պահում էր պաղարիւնութիւնը, նոյնիսկ մասնակցում էր բոլշեւիկ կոմիսարների քէֆերին. բայց իրապէս ընկճուած էր յուսահատ լինելու աստիճան։ Դեռ կարծում էր, որ տեղական թափթփուկների գործն էր վայրենութիւնը Հայաստանում եւ կենտրոնից չի քաջալերուի, բայց այլեւս առաջուայ Դրոն չէր։ Նա մի քանի անգամ մօտս բերեց Սիլինին եւ Զօր. Բոբրիշչեւին։ Այս վերջինը կարմիր բանակի հետախուզական մասի վարիչն էր եւ այդ օրերին

առանձնապէս հետաքրքրուում էր Լոռիի չէզոք գօտիով։ Ակներեւ էր, որ բոլշեւիկներին Լոռին զբաղեցնում էր ոչ թէ իբրեւ Հայաստանի մաս, այլ Վրաստանի խորհրդայնացումը փութացնելու մի միջոց։

Դրոյի ներկայութիւնը, սակայն, Հայաստանում, կարծես նեղութիւն էր պատճառում հայ բոլշեւիկներին։ Ժողովրդի աչքին Դրոն էր իշխանութիւնը. Յեղկոմին բանի տեղ դնող չկար։ Ամէն դժուարութեան պարագային մարդիկ Դրոյին էին դիմում։ Ժամանակ էր վերջ տալու այդ «դաշնակ խմբապետի միջամտութիւններին։ Մաւրը կատարել էր իր գործը։ Մաւրը պէտք է երթար...

Եւ կայծակի արագութեամբ լուր տարածուեց Երեւանում, թէ Դրոն կանչուած է Մոսկուա։ Հակառակ որ մշտական հսկողութեան տակ էի մօտս տեղաւորուած երկու չեկիստների կողմից, ես չտապեցի տեսնել Դրոյին իր բնակարանում։

Դուրսը սաստիկ ձիւն էր գալիս։ Դրոյի տան դուռը բաց էր։ Ներսը ինձ դիմաւորեց, արցունքը աչքերին, կնոջ՝ Արփենիկի ստուերը։ Դահլիճի անկիւնում նստած էր հայրը եւ թաշկինակով աչքերը սրբում։ Դրոն հագուստով պառկած էր ննջարանում՝ մենակ եւ անվերջ ծխում էր։

—Ուրեմն ճի՞շդ է, հարցրի ես։

—Ճիշդ, ինձ Մոսկուա են կանչում, պատասխանեց նա, կարծես ակամայ։

—Կանչո՞ւմ են, թէ տանում...

—Միեւնոյնը չէ՞. որտեղ կտրուեց կապը...

Ի հարկէ միեւնոյնը չէր։ Նա չէր կարող չզգալ որ իրեն աքսորում են Հայաստանից, բայց դեռ համոզուած էր, որ Մոսկուայում իրեն կը յաջողուի փոխել կենտրոնական կառավարութեան քաղաքականութիւնը Հայաստանի վերաբերմամբ։ Նա իր օգնականներին պատրաստել էր տուել մի շարք տեղեկագրեր Հայաստանի մասին, որ պիտի տանէր հետը ներկայացնելու համար սովետական կեդր. իշխանութեան։ Նա պաշտպանում էր այն միտքը, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը, բոլոր պայմաններում, հաւատարիմ բարեկամ են ու բարեկամ էլ պիտի մնան Ռուսաստանին եւ որ Ռուսաստանի համար Հայաստանը կարեւոր է, իբրեւ կամուրջ եւ որպէս պլայդարմ Միջերկրական ծովի ուղղութեամբ։

Քաղաքական ծանօթ փիլիսոփայութիւն էր այս, որով մեզ կերակրել էին ռուս դիւանագէտները՝ Պետրոս Մեծից սկսած մինչեւ Միւլիքով։ Բոլշեւիզմը պիտի գար հայ մարդու մտքից վերջնականապէս արմատախիլ անելու այդ փիլիսոփայութիւնը։

Կացութիւնը թեր ու դէմ երկար քննելուց յետոյ, Դրոյի հետ յանգեցինք հետեւեալ եզրակացութեան.— Նա պիտի գնար Մոսկուա։ Ապա ես եւս պիտի երթայի մօտը։ Եւ միասին պիտի աշխատէինք օգտակար լինել Հայաստանին։ Ինչո՞վ — դժուար էր պատասխանել։ Ինչով որ

հնարաւոր լինել։ Դրոն գտնում էր, որ իմ ներկայութիւնն էլ Հայաստանում այլեւս անօգուտ էր...

Օրը տարաժամ էր։ Ներս մտաւ Բոբրիչչեւը։ Պիտի գայլին եւ ուրիշ ականաւոր բոլշեւիկներ՝ «ողջերթ»ի։ Իմ ներկայութիւնը դառնում էր աւելորդ։

Դահլիճի անկիւնում դեռ կծկուած էր Դրոյի հայրը՝ թաշկինակը ձեռքին։ Արփենիկի ստուերը կողքի սենեակում սեղան էր պատրաստում — ողջերթի ընթրիք Ցեղկոմի անդամների եւ կոմիսարների համար։ Վերջը խօսում էր, որ մինչեւ լոյս քէֆ էր տեղի ունեցել...

Դուրսը կը ձիւնէր, բայց չեմ կարող ասել թէ հոգիս ցնծում էր։

Ամբողջ գիշերը անկարելի եղաւ քնել։ Դուրսը սաստիկ բուք ու բորան էր, ահարկու փոթորիկ։ Կատաղի քամին ոռնոցով, սանձարձակ վիշապի պէս, ծեծում էր պատուհանները։ Կարծես դժոխքի բոլոր ոգիները դուրս էին պրծել։ Կարծես երկրաշարժ կար դուրսը...

Երբ յաջորդ առաւօտ մօտեցայ Դրոյի բընակարանին, փողոցը արդէն բռնուած էր սահնակներով եւ մայթերի վրայ լուռ կանգնած էին տժգոյն մարդիկ։ Կարծես եկել էին յուղարկաւորութեան։

Տան դուռը բաց էր, եւ ելեւմուտ էին անում ծանօթ եւ անծանօթ մարդիկ։ Հայրը, թաշկինակը ձեռքին, լուռ շրջում էր դահլիճում։ Արփենիկի ստուերը ինչ որ բանի վրայ

էր սեղանատանը։ Պայուսակներն ու մաֆրաշտ-
ները կապուած չարուած էին պատերի տակ։
Դրոն հագնուած՝ պատրաստ էր ննջարանում,
ուր վերջին տեսակցութիւնը ունեցանք եւ կարճ
խօսակցութիւնից յետոյ, դուրս եկանք բազմու-
թեամբ լեցուած դահլիճը։ Պայուսակները արդէն
դուրս էին բերուած եւ տեղաւորուած սահնակ-
ներում։

—Նստեցէ՛ք մի րոպէ։

Ամէնքը տեղաւորուեցին ով ուր կարող
էր։ Մի պահ տիրեց լռութիւն։ Արփենիկը կողքի
սենեակում հեկեկում էր։ Հայրը աչքերն էր
սրբում թաց թաշկինակով։ Բոլորի աչքերը թաց
էին։

Ընդոստ Դրոն ոտքի ելաւ։ Տաք համբոյր-
ներ։ Դուրսը, փողոցում, խռնուած էր բազմու-
թիւն, մինչեւ Աբովեան պողոտայ եւ աւելի
վեր, մայթերի վրայ։ Ամբողջ Երեւանը սգաւոր,
հաւաքուել էր ճանապարհ դնելու իր սիրելի
հերոսին, որի մեկնելով քաղաքը կարծես սա-
յանում էր...

Սահնակները շարժուեցին. «Բարի ճանա-
պարհ», «Աստուած քեզ հետ լինի», «Բարի վե-
րադարձ»... Եւ սէր ու պաշտամունք կար
բազմութեան այս խօսքերում։ Եւ ջերմ աղօթք։
Եւ վախ...

—Հիմի մենք ի՞նչ պիտի էնենք, ճչաց
բազմութեան միջից մի պառաւ կին...

Այո՛, ինչ պիտի անէինք։ Սահնակները ան-
հետացան աչքից։ Բազմութիւնը միշտ լուռ,

գլխահակ, չէր ուզում ցրուել։

Վերադարձանք տուն։ Ինքնաեռը սեղանի վրայ մարել էր։ Բաժակները լեցուն էին պաղ թէյով։ Արփենիկի ստուերը չէր երեւում։

Այստեղ էր, որ Դրոյի հայրը պատմեց իր զաւկի ծննդեան գիշերը Իգդիրում պատահած ահաւոր երկրաշարժի մասին։ Եւ միթէ պակա՞ս ահաւոր էր երէկուայ գիշերը՝ վիշապաձայն բուք ու բորանով...։

Մեր պայմանի համաձայն Դրոն Բաքուից կանչեց ինձ ուղիղ հեռագրաթելի մօտ։ Սովետական ներկայացուցիչը հետս էր։ Դրոն յայտնեց, որ հանգիստ եւ ապահով հասել էր Բաքու եւ շուտով պիտի մեկնի Մոսկուա։ Ինչ որ բաներ ասաց Զանգեզուրի մասին, ուր Նժդեհը մերժում էր ենթարկուել բոլշեւիկներին։ Իմաստը այն էր, որ պէտք չէ դժուարութիւններ ստեղծել սովետական իշխանութեան համար։ Ինձ խորհուրդ էր տալիս պատրաստ լինել մեկնելու իրեն հետ։

Եւ այնուհետեւ լուր չեկաւ Դրոյից։ Քաղաքում զանազան շշուկներ էր պտրտում նրա մասին. ոմանք ասում էին թէ աքսորուել է Սիբիր. ոմանք հաւատացնում էին, թէ Ստալինը նրան ընդունել է պատիւներով եւ բարձր պաշտօն է տուել կարմիր բանակում։ Հասարակ ժողովուրդը հաւատում էր, թէ Դրոն, ճանապարհին, փախել է չեկիստների ձեռքից, պահուել է հայ գիւղացիների մօտ եւ մի օր հրապարակ դուրս պիտի գայ ղեկավարելու

համար ապստամբությունը բոլշևիկեան բռնակալութեան դէմ։

ԺԱ

ԴՐՈՆ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Ի՞նչ էր անում Դրոն Մոսկուայում, ինչպէ՞ս էր ապրում, Հայաստանում մարդ չգիտէր։

Ես Դրոյի մասին տեղեկութիւններ էի ստանում սովետական ներկայացուցիչներից, որոնք մեծ մասամբ անձիւդ էին։ Ստոյգ լուրեր ինձ բերում էր Երեւանի ռատիոկայանի վարիչ ինժինէր Իսահակեանը։

Քաջասիրտ եւ հայրենասէր էր այս երիտասարդ ինժինէր զինուորականը։ Իսահակեանը եկել էր Փարիզից մասնակցելու Հայաստանի Հանրապետութեան վերաշինութեան, ինչպէս շատերը գալիս էին այդ օրերին։ Մտել էր Հայաստանի բանակը որպէս ճարտարագէտ եւ նշանակուել Երեւանի ռատիոյի վարիչ։ Հաւատարմօրէն եւ մեծ հմտութեամբ կատարում էր նա այդ պարտականութիւնը։

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ նա պահուեց նոյն պաշտօնում. բոլշեւիկները մարդ չունէին նրան փոխարինելու։ Միայն ռատիոկայանի վրայ նշանակեցին հսկիչ մի կոմիսար։ Այս բոլշեւիկ կոմիսարը, որի անունը դժբախտաբար մոռացել եմ, նոյնպէս հայրենասէր տղայ էր եւ աւելի մեզ էր համակրում։ Հաւա-

նաբար, նրա թոյլտուութեամբ էր, որ Իսահակեանը հասկցնում էր ինձ հետաքրքրող տեղեկութիւնները, որոնք ռատիոյով հաղորդւում էին Մոսկուայից։

Իսահակեանից իմացայ ես, որ Դրոն Մոսկուայում էր, ապրում էր կիսաքսորական կեանքով եւ մտիկ յարաբերութեան մէջ էր հայ բոլշեւիկների, մասնաւորաբար Սահակ Տէր Գաբրիէլեանի հետ։

Փետրուարեան ապստամբութիւնը մենք վարեցինք մենակ։ Դրոն մեզ հետ չէր։ Նրա բացակայութիւնը զգում էին ամէնքը։

Հետաքրքրական է, որ Փետրուար 18ի առաւօտ, երբ ես հանդիպեցի Յովհաննէս Քաջազնունուն իր եղբօր գիւղատնտես Վարդգէսի տանը, ջերմ ողջագուրումից յետոյ, Քաջազնունու առաջին խօսքը եղաւ.

—Դրոն ո՞ւր է։

Նա էլ հաւատում էր, որ Դրոն պահուած էր հայ գիւղերում եւ շատ զարմացաւ ու ցաւեց, երբ իմացաւ ճշմարտութիւնը։ Փետրուարեան ապստամբութիւնը պէտք է Դրոն գլխաւորէր։ Այդ նրան էր յարմար։

Ինչպէս հետագային ինքն էր պատմում, Դրոն Սահակ Տէր Գաբրիէլեանի եւ ուրիշների միջոցով օրը օրին ստոյգ տեղեկութիւններ էր ստանում Հայաստանի իրականութեան մասին։ Փետրուարեան ապստամբութիւնը նրան ե՛ւ ոգեւորել էր եւ սարսափեցրել։ Նա վախենում էր, որ ցաւագար Աւիան ու Աթաբէգեանը

արեան մէջ կը խեղդէին Հայաստանը եւ հեւ ի հեւ անձկանօք հետեւում էր Հայաստանից ըստացուող լուրերին։

Մարմնով աքսորական՝ հոգեպէս նա Հայաստանում էր, ինչպէս մինչեւ այժմ մենք ամէնքս տարագրութեան մէջ...

Մոսկուայում Դրոն մնաց մօտ հինգ տարի Զեկայի հսկողութեան ներքեւ։ Իր դիւրահաղորդ ու համարձակ բնաւորութեան շնորհիւ նա կարողացաւ բարեկամների լայն շրջանակ ձեռք բերել թէ հայերի ու կովկասահայերի եւ թէ ռուս զինուորականների եւ իշխանաւորների մէջ։

Մոսկուայում կեանքը համեմատաբար աւելի ազատ էր եւ պայմանները՝ աւելի տանելի։ Դրոն շուտով կարողացաւ ոչ միայն իրեն համար ապրուստի միջոցներ ապահովել, այլ եւ ուրիշ տարագիրների համար։ Այստեղ էին Հայաստանից աքսորուած զինուորականներից սպարապետ Նազարբէգեանը, Զօր. Հախվերտեանը, Արսէն Շահմազեանը, Սմբատ Խաչատուրեանը եւ ուրիշ տարագիր դաշնակցականներ եւ հանրային գործիչներ, որոնք անօթի կեանք էին քարշ տալիս։ Դրոյի ներկայութիւնը փրկութիւն եղաւ նրանց համար։

Մոսկուայում գտնուող հայ եւ վրացի համայնավարներից չատերը, ինչպէս Սահակ Տէր Գաբրիէլեան, Սերգօ Օրջոնիկիձէ, Քամօ, Տէր Վահանեան, Լուկաչին, Միասնիկեան եւ ուրիշներ, նրա լաւ ծանօթներն էին առաջուայ, Բա-

քուից եւ այլ վայրերից։ Նա յարաբերութիւններ հաստատեց նրանց հետ եւ աւելի եւս ընդարձակեց բարեկամների շրջանակը։

Մոսկուայից Դրոն կապեր հաստատեց եւ Վրաստանի աշխատաւորական խմբակի եւ Դոնբասի ու Խարքովի դաշնակցականների հետ ի շահ Հայաստանի եւ հայ ժողովրդի։

Հ.Յ.Դաշնակցութեան Վրաստանի կեդր. կոմիտէի նախաձեռնութեամբ, 1922 թ. Յուլիս 21ին, Թիֆլիսում, օրը ցերեկով, ահաբեկուեց Իթթիհատական եռապետութեան վերջին ողջ մնացած անդամ, բոլշեւիկների բարեկամ ու գործակից Ջեմալ փաշան։ Դէպքը ցնցող տպաւորութիւն գործեց ամէնքի վրայ։ Ջեկան անհաշիւ բանտարկութիւններ արաւ, բայց չէր համարձակւում սուր միջոցների դիմել՝ վախենալով փոխադարձութիւնից։ Դրոն իրաւունք ստացաւ Մոսկուայից եւ շտապով մեկնեց Թիֆլիս, ուր բոլոր յայտնի դաշնակցականները ձերբակալուած էին։ Դրոյի հեղինակութիւնը թէ դաշնակցական ընկերների եւ թէ բոլշեւիկների աչքին այնքան բարձր էր, որ նրան յաջողուեց երկու կողմի համար ընդունելի պայմաններով բանտից ազատ արձակել կեդր. կոմիտէի անդամներին եւ ձերբակալուածների մեծ մասին։ Այդ առթիւ Վրաստանի կեդր. կոմիտէի անդամները եւ Դրոն հրատարակեցին մի «դեկլարացիա», որով ճանաչում էին սովետական իշխանութիւնը եւ կոչ էին անում բոլոր դաշնակցականներին հետեւելու իրենց օրինակին։

Արտասահմանում մեզ, որ անհաշտ պայքարի մէջ էինք սովետական բռնակալութեան դէմ, որոշ էին այդ «դեկլարացիա»յի դրդապատճառները եւ իմաստը, բայց եւ այնպէս անթոյլատրելի էինք համարում Դրոյի եւ ընկերների ընթացքը։ Ես նոյնիսկ ստիպուած եղայ հրապարակով, մամուլի միջոցով, դատապարտել «դեկլարացիա»ն եւ զգուշացնել ընկերներին, որ չընկնեն բոլշեւիկեան ծուղակը։ Հետագային մենք իմացանք, որ «դեկլարացիա»ն մնացել էր սոսկ թուղթի վրայ եւ ոչ մի հետեւանք չէր ունեցել, բացի այն, որ Չեկան արդարացուցիչ փաստ էր ձեռք բերել արդարացնելու համար իր մեղմ վարմունքը դաշնակցականների նկատմամբ։

Ոմանց աչքին արտասահմանում Դրոյի եւ ընկերների ընթացքը նկատուեց կասկածելի։ Եւ երբ 1925ին Դրոյին յաջողուեց անցնիլ արտասահման եւ հասնիլ Փարիզ, ուր գումարւում էր Հ.Յ.Դաշնակցութեան 10դ Ընդհանուր Ժողովը, գտնուեցան պատասխանատու ընկերներ, որոնք հակառակեցան Դրոյի մասնակցութեան Ընդհանուր Ժողովին։ Այնքա՛ն անհեթեթ էր այս կասկածը, որ շատ քիչ հետեւողներ ունեցաւ, եւ Դրոն հրաւիրուեց մասնակցել ժողովին լիակատար ձայնի իրաւունքով։ Պէտք չկայ ասելու, որ թէ ժողովում եւ թէ այնուհետեւ նա իր գործունէութեամբ ամօթահար արաւ կասկածամիտներին։

Մոսկուայում Դրոն օգտուելով ազատ ժա-

մանակից, աշխատեց լրացնել իր զինուորական կրթութիւնը հմուտ մասնագէտների ղեկավարութեան տակ։ Մի քանի տարի նա հետեւեց ռազմամասնագիտական դասախօսութիւնների, այլ եւ քաղաքական ուսմանց։ Նա առանձնապէս ուսումնասիրել էր Ռուսաստանի քաղաքացիական կռիւների եղանակները եւ կարմիր բանակի կիրառած ձեւերը, ինչպէս նաեւ ռուսական յեղափոխութեան պատմութիւնը։

Տեսական հարցերը նրան շատ չէին հետաքրքրում. դրա համար բաւարար պատրաստութիւն էլ չունէր։ Իր միտքը փիլիսոփայական չէր։ Գործնական հարցերն էին նրա համար կեանքից բխող փիլիսոփայութիւնը։ Սուր եւ արագ մտածելակերպի տէր էր՝ գործնական հակումներով։ Մինչ ուրիշներ երկար մտածում ու փիլիսոփայում էին որեւէ հարցի մասին, Դրոն արագ կերպով գործի էր անցնում եւ շնորհիւ իր տարապայմանօրէն առողջ բնազդի, սովորաբար յաջողում էր իր ինչպէս հասարակական, այնպէս եւ անհատական ձեռնարկներում։

Գործնական հիմնաւորումներ ունէր եւ նրա քաղաքական տեսութիւնը։ Եթէ սէրը տեղ կարող է գտնել քաղաքականութեան մէջ, Դրոն ռուսասէր էր, ինչպէս սովորութիւն էր ասել, ռուսական օրիէնդայի հետեւող մարդ։ Ռուսաստանը նա ըմբռնում էր երկու իմաստով, նախ՝ իբրեւ Հայաստանի մօտիկ մեծ պետութիւն եւ երկրորդ՝ որպէս ժողովուրդ։ Նրա տրամաբանութիւնը պարզ էր եւ, եթէ ուզում էք, տար-

ական. մէկ կողմից մահմետական թրքութիւն, որ պատմականօրէն թշնամի էր քրիստոնէութեան ու հայութեան, միւս կողմից ծովածաւալ քրիստոնեայ կայսրութիւն, որ պատմականօրէն թշնամի էր մահմետականութեան։ Փոքրիկ Հայաստանը ու փոքրաթիւ հայ քրիստոնեայ ժողովուրդը երկընտրանք չունէր, պէտք է յենուէր քրիստոնեայ Ռուսաստանի վրայ ընդդէմ հակահայ Թուրքիոյ։ Սա այն քաղաքական փիլիսոփայութիւնն է, որին, ժամանակավրէպ յետադարձութեամբ, այսօր հետեւում են արտասահմանի հայ քաղքենիները։

Մոսկուայում մօտիկ հետեւելով ռուսական արեւելեան քաղաքականութեան եւ աւելի խորը ծանօթանալով պատմութեան եւ հետագային արտասահմանում աւելի մօտից տեղեակ դառնալով աշխարհի գործերին, Դրոն հետզհետէ ազատագրուեց քաղաքական հմայքից Ռուսաստանի հետ, ռուսական օրիէնդացիան այլեւս փրկարար դեղ ու դարման չէր նրա աչքում։

Բայց ռուսասիրութիւնից ժողովրդական իմաստով նա երբեք չհրաժարուեց։ Մեր մէջ այժըմ սակաւաթիւ չեն մարդիկ, որոնք Ռուսաստանից հիասթափուած՝ իրենց բացասական ըզգացումները երբեմն կոյր ատելութեան հասնող, փոխադրուին եւ ռուս ժողովրդի ու ռուսական մշակոյթի վրայ։ Դրոն մինչեւ վերջ էլ վառ պահեց իր հոգում սէրը դէպի մեծ ու բազմաչարչար ռուս ժողովուրդը։ Եւ յիրաւի, ինչպէ՞ս կարելի է չսիրել եւ ատել մի ժողովուրդ որ

Տոլստոյներ, Դոստոյեւսկիներ, Չեխովներ է տը-
ւել մարդկութեան, որ մշակոյթի սքանչելի կո-
թողներ է կերտել, որ պակաս չի տառապել եւ
այսօր էլ պակաս չի պառապում բռնակալու-
թիւնից, քան բոլշեւիկեան վարչաձեւին ենթա-
կայ ուրիշ ժողովուրդները։ Ոչ միայն գիտակ-
ցութեան, այլ ենթագիտակցութեան մէջ Դրոյի
մէջ այս ըմբռնումը շատ ուժով էր։ Թերեւս
դրա պատճառներից մէկն էլ այն էր, որ
մանկութիւնից սկսած Դրոն ապրել եւ սնուել
էր ռուսական միջավայրում, շնչել էր ռուսա-
կան մթնոլորտի օդը։

Այս հարցերի մասին թէ ներսը, երկրում,
եւ թէ արտասահմանում մեր մտածելակերպի
մէջ տարբերութիւն չկար, թէեւ, երբ 1925ին
նա եկաւ Փարիզ կարճ ժամանակի համար, ո-
րոշ անհասկացողութիւններ ունեցանք. նա դեռ
ամուր կեցած էր «ռուսական օրիէնդացիա»յի
վրայ, իմ մէջ սովետական տիրապետութիւնը
եւ չփումը Եւրոպայի հետ արդէն սկսել էին
խախտել հաւատը քաղաքական Ռուսաստանի
վրայ։ Շուտով, սակայն, այս տարակարծու-
թիւնները հարթուեցին։

Մի քանի խօսք էլ Դրոյի Ռուսաստանից
հեռանալու առթիւ. ի՞նչ հեքիաթներ ասես չյո-
րինուեցան դրա շուրջ. իբր թէ Դրոն յանձնա-
րարութիւն է ստացել Ստալինից Դաշնակցու-
թիւնը քայքայելու, իբր թէ նա արտասահման
էր անցել Չեկայի կամքով հակադաշնակցական
գործունէութեան համար, իբր թէ... բայց ար-

ժէ՞ յիշել մարդկային տխմարութեան բոլոր արտայայտութիւնները։

Պէտք է ի նկատի ունենալ 1925 թուականի պայմանները, Նէպը դեռ ի զօրու էր, ներքին ու արտաքին քաղաքականութիւնը համեմատաբար աւելի մեղմ, շատերին թոյլ էր տրւում արտասահման մեկնելու։

Դրոն մանաւանդ, Զեմալ փաշայի ահաբեկումից եւ դեկլարացիայից յետոյ, իր ռուսասիրական հակումներով, վստահելի էր դեռ բոլշեւիկների աչքին։ Ինչպէս վերեւ ասացինք, նա շատ բարեկամներ ունէր Սովետական Ողիմպոսում, Օրջոնիկիձէի, Սահակ Տէր Գաբրիէլեանի պէս ազդեցիկ մարդիկ։ Ստալինը ինքն էլ լաւ վերաբերում ունէր դէպի Դրոն։ Այսպիսի պայմաններում դժուար չէր արտասահման մեկնելու արտօնութիւն ստանալ։

Անհաւանական չէր որ Զեկան, որի հաւանութիւնը անհրաժեշտ էր, ոեւէ մէկին արտասահմանի անցագիր տալու համար, այո՛, կարող էր պատահել, որ Զեկան որոշ հաշիւներ կապում էր Դրոյի արտասահմանեան կեանքի հետ։ Աներեւակայելի բան չէ, որ Ստալինն ինքն էլ գաղտնի նպատակներ սնուցանում էր, բայց Դրոն որեւէ յանձնարարութիւն չէր ստացել, որեւէ պարտաւորութեան տակ կամ քաղաքական սակարկութեան մէջ չէր մտել արտասահման մեկնելիս։ Նրա խիղճը մաքուր էր, ինչպէս մաքուր է եղել միշտ։

Մոսկուայից նա Փարիզ եկաւ ուղղակի իմ

մօտ։ Ինչո՞ւ ծածկեմ, Դրոյի գալը մի պահ ինձ էլ չփոթեցրեց, եւ ես կտրուկ կերպով հարցրի նրան.

—Ստալինից ի՞նչ յանձնարարութիւն ես բերել…

Վարանում էր բարկանա՞յ թէ ծիծաղի։ Բայց ոչ բարկացաւ, ոչ ծիծաղեց։ Վճռական, կասկած չվերցնող ձեւով յայտարարեց, որ ոչ ոքից եւ ոչ մէկից ոչ մէկ յանձնառութիւն չունի։

Եւ, ի հարկէ, չունէր։ Ես պէտք չունէի համոզուելու, բայց չուտով ամենակասկածոտներն անգամ համոզուեցին։

Դաշնակցական Դրոն, բոլշեւիկեան կապանքներից արձակուած, եկել էր դաշնակցական ընկերների մօտ, ազատ աշխարհում, պայքարելու անազատութեան դէմ հայ ժողովրդի եւ Հայաստանի ազատութեան համար։

ԺԲ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Մոսկուայից, Գերմանիայի վրայով Դրոն ուղղակի եկաւ իմ մօտ, Փարիզ։

Հինգ տարիները բոլշեւիկեան բռնատիրութեան տակ զգալի հետք էին թողել Դրոյի վրայ։ Արտաքնապէս էլ կարծես փոխուել էր. վրայի հագուստը խունացած էր երեւում։ Երեւանից տարած գլխարկն էլ դեռ գլխին։ Լեզուի մէջ մուտք էին գործել բոլշեւիկեան արտայայտութիւններ։ Փարիզը իր լոյսերով, ազատ ու աղմկոտ կեանքով չչմեցուցիչ տպաւորութիւն էր գործել նրա վրայ։

Մեր առաջին գործը եղաւ նրա արտաքին կերպարանքը կարգի բերել։ Ձեռք բերինք նոր հագուստ։ Նա բռնագրաւեց իմ գլխարկը եւ իր գլխարկը դրեց իմ գլխին։ «Քաղաքակիրթ» տեսք ստացաւ։

—Հիմա ցոյց տուր ինձ Փարիզի նշանաւոր Փարիզեան տեղերը, պահանջեց նա։

Ես ինքս էլ ծանօթ չէի Փարիզեան տեղերին եւ առաջնորդեցի նրան Օլիմփիա հաստատութիւնը, Մագլէն պողոտայի վրայ։ Կուրացնող լուսաւորութիւն, ընդարձակ պաճուճազարդ սրահներ. աղմուկ ժխոր, հեղձուցիչ մթնոլորտ, մազերը «ա լա կարսոն» խուզած, կիսամերկ

կանանց եւ չպարուած երիտասարդների կատարեալ Սոդոմ Գոմոռ։ Այլանդակ, գարշելի այդ իսկապէս Փարիզեան որջում։ Դրոն ուղղակի չչմեց, պժգանքով քաշեց ինձ դէպի ելքը։

—Մայս է ազատ ու գեղեցիկ Ֆրանսիան, թո՛ւհ, թքեց նա նողկանքով։

Եւ, յիրաւի, յետ պատերազմեան Փարիզը գալարւում էր անբարոյականութեան ճահճում. Դրոն չէր տեսել եւ չէր կարող տեսնել միւս Փարիզը։ «Օլիմփիա»ների եւ գիշերային այլ զբաղանքների կողքին Սորպոնը, Ազգային Մատենադարանը, Գիտութեանց կաճառը, Օփերան ու Քոմեդի Ֆրանսէզը, որոնք անծանօթ էին եւ անծանօթ էլ մնացին Դրոյին. Նրա կարծիքը Ֆրանսայի մասին վերջնականապէս որոշեց «Օլիմփիա»ն։

—Թո՛ւհ, գարշանքով թքում էր նա. Նաբուլէոնի հայրենիքը բոլորովին այլասերուել է։

Նոյնիսկ Էդուալի ճաղթական կամարը եւ Նաբուլէոնի գերեզմանը Էնվալիդում, անգամ Լուվրն ու Վերսայլը անկարող եղան փոխելու նրա բացասական կարծիքը Ֆրանսայի մասին։ Այդ էր պատճառը, որ նա չուզեց մնալ Փարիզում եւ աշխատեց շուտով հեռանալ Ֆրանսայից։

Դրոն մասնակցեց Հ.Ց.Դաշնակցութեան 10րդ Ընդհանուր Ժողովին։ Տարագիր սփիւռքի բոլոր կեդրոններից եկել էին պատգամաւորներ։ Եկել էին նաեւ Հայաստանից։ Բոլորի էլ տրամադրութիւնը բարձր չէր։ Հայաստանի անկա-

խութեան կորուստը մի կողմից, Լոզանի խայտառակ դաշնագիրը միւս կողմից, Թրքահայ տարագրութեան դառն վիճակը, բոլշեւիկեան նենգամիտ քաղաքականութիւնը հայկական հարցում, Թուրք-սովետական բարեկամութիւնը եւ մեծ պետութիւնների խոստումնադրուժ դիրքը, այս ամէնը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ հայ ժողովրդի ընդհանրապէս եւ ի մասնաւորի Հ.Յ.Դաշնակցութեան տրամադրութեան վրայ։ Բայց հակառակ քաղքենի տարրերի վհատութեան ու յուսալքումին, դաշնակցական հայութիւնը պահում էր իր բարոյական կորովը եւ ապագայի հաւատը։

10րդ Ընդհանուր Ժողովը անցաւ լաւատեսութեան նշանի տակ։ Գաղափարական ընդդիմութիւն բոլշեւիկեան վարչաձեւի, անդուլ պայքար յօգուտ Անկախ եւ Միացեալ Հայաստանի, հայութեան համարանքի պահպանութիւն, ընդհանուր ճակատ ազատատենչ ժողովուրդների հետ։ Ընդհանուր Ժողովի պատասխանը այս բոլոր հարցերին եղաւ յստակ, վճռական եւ համերաշխ։

Ես ուշադրութեամբ հետեւում էի Դրոյի շարժումներին եւ արտայայտութիւններին ժողովում եւ ժողովից դուրս եւ ուրախութեամբ նկատում էի, որ նա մտաւորապէս շատ էր հասունացել։ Նրա քաղաքական հորիզոնը լայնացել էր, շատ արագ ըմբռնում էր իրեն համար բոլորովին նոր եւ անծանօթ խնդիրները։ Միտքը չարչարում էր հաշտեցնելու համար սովե-

տական լծի տակ մնացող եւ արտասահմանի ընկերների տեսակէտները, որ դիւրին գործ չէր այն ժամանակ։

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան պատասխանատու ընկերներից ոմանք մտածում էին նրան ընտրել կուսակցութեան Գերագոյն Մարմնի անդամ. Դրոն վճռական կերպով մերժեց։ Նա իրեն պատրաստ չէր զգում նման պատասխանատու դերին։ Եւ ժողովից յետոյ փութաց հեռանալ Փարիզից։ Եւ հակառակ որ նիւթական միջոցներից բոլորովին զուրկ էր, մերժեց ընդունել կուսակցութեան աջակցութիւնը։ Իր ամբողջ կեանքում ինքն էր օգնել ուրիշներին, այժմ նրա համար անտանելի էր ուրիշից օգնութիւն ստանալ։

Բարեբախտաբար, շատ կարճ մնաց նա Փարիզում։ Շուտով կարողացաւ հսկիչի համաստ պաշտօն ապահովել ծանօթ նաւթարդիւնաբերող Ա. Ղուկասեանի Ռումանիայի նաւթահանքերում, որ, ինչպէս ինքն էր սրախօսում, «մի ելք էր դէպի բաց ծով»։

Դրոն Փարիզից մեկնեց դառն յիշողութիւններով Ֆրանսայի մասին։ Իր մէկ մտերիմ ընկերոջից նա ստացել էր որոշ գումար, իբրեւ ճանապարհածախս եւ Ռումանիայում առաջին օրերին ապրուստի միջոց։ Երբ պայուսակը պանդոկի վերին յարկից ուղարկեցինք վար եւ, ըստ Դրոյի սովորութեան, նստանք մի վայրկեան լուռ, յանկարծ, նա ձեռքով չօշափեց գրպանը եւ պոռաց.

—Փողերը գողացել են...

Տիրեց իրարանցում։ Սուր վէճ պանդոկի ալզասցի տիրոջ հետ, որ երդում-պատառ էր լինում, թէ իր պատուաւոր հաստատութեան մէջ նման բաներ չեն պատահում։ Հարցաքննութիւն սպասաւորների։ Ոստիկանական միջամտութիւն — կորած դրամը անկարելի եղաւ գտնել։ Հետեւանքը եղաւ այն, որ երկաթուղու գնացքը փախցրինք եւ ստիպուած եղանք կայարանում սպասել յաջորդ գնացքին մինչեւ երեկոյ։

—Թո՛ւհ, անբարոյական Ֆրանսիա, հայհոյում էր Դրոն։ Սրանց մի լաւ բոլշեւիզմ է հարկաւոր...

Ռումանիայից երկար ժամանակ լուր չառի։ Պուքրէշից եկած բարեկամներից մէկը տեղեկութիւն բերեց թէ Դրոն ինքը սիրտ չունէր գրելու։

Ա. Ղուկասեանի նաւթահանքերը գտնւում էին Փլոէշտիում, Պուքրէշից մօտ 50 քիլոմեթր հեռու։ Փռուած էին ընդարձակ տարածութեան վրայ։ Դրոյի պարտականութիւնն էր վերահսկողութիւն կատարել ամէն տեղ, յաճախ, սաստիկ անձրեւի կամ ձեան տակ, ցեխի կամ սառնամանիքի մէջ։ Իբրեւ բարեխիղճ մարդ՝ նա հաւատարմօրէն կատարում էր իրեն վստահուած գործը եւ չափազանց յոգնում էր։ Բայց գոհ էր, որ ուրիշին ձեռք չէր մեկնում եւ ինքը իր ճակտի քրտինքով վաստկում էր իր հացը։

Սկիզբի շրջանում գրեթէ բոլորովին մե-

կուսացած էր, առանց չփումի արտաքին աշխարհի հետ։ Նամակագրութիւն ունէր գրեթէ միայն ինձ հետ։ Հանրային եւ կուսակցական կեանքից կտրուած էր։ Իր աշխարհը կարելի է ասել Փլոէշտին էր, նաւթային պաշտօնէութիւնը եւ տեղական սակաւաթիւ հայերը։

Բայց Դրոն Դրօ չէր լինի, եթէ երկար ժամանակ համակերպուէր նման կացութեան հետ։ Նա հետզհետէ իր մօտ գործի քաշեց իր զինակից Կուռոյին, Գրիգոր Ամիրեանին, Աղեքսանդր Շարաֆեանին եւ ուրիշներին, որոնց ներկայութիւնը չափով մեղմացրեց տաղտկալի կեանքը ցեխոտ Փլոէշտիում...

1928ին ես հիւր գնացի Դրոյի մօտ, Փլոէշտի։ Նա արդէն տեղաւորուած էր եւ ծանօթների ու բարեկամների լայն շրջանակ ունէր Փլոէշտիում եւ Պուքրէշում։ Մտել էր կուսակցական եւ հանրային կեանքի մէջ, ընդհանուրի յարգանքը վայելող ղեկավար դէմք էր գաղութում։ Պէտք է ասել, որ Ա. Ղուկասեանի բարեացակամ վերաբերումի շնորհիւ, նիւթապէս էլ բարեկեցիկ վիճակի էր հասել։

Տարուէ տարի նրա նիւթական բարեկեցութիւնը աճեց եւ հեղինակութիւնը զօրացաւ։ Նա դուրս եկաւ նաւթահանքի պաշտօնից եւ ձեռնարկեց սեփական առեւտրական գործի մի հրեայ ընկերոջ հետ։ Ձեռնարկը յաջողուեց եւ Դրոն, ի վերջոյ, հասաւ նիւթական նախանձելի վիճակի։ Ամուսնացաւ եւ ընտանեկան նոր յարկ ստեղծեց։ Եւ աւելի գործօն դեր ստանձնեց

կեանքում։ Մասնակցեց Հ.Յ.Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովին Փարիզում։ Այս անգամ անպայման աւելի մեծ թափով եւ հեղինակութեամբ։

Ժողովի ընթացքին, առհասարակ իմ մօտ էր ապրում Բէքոն-լը-Բրիւյէրում։ Ընդհանրապէս աչխոյժ եւ կենսուրախ՝ երբեմն ընկնում էր խոր թախիծի ու մելամաղձոտութեան գիրկը եւ ամբողջ գիշերներ ոչ ինքն էր քնում, ոչ էլ ուրիշին թոյլ էր տալիս քնելու։ Անվերջ յիշում էր Սովետ Միութեան մէջ մնացած ընկերներին՝ Կորիւնին, Տիգրանին, Արսէնին, իր զինակից սպաներին եւ տանջւում էր, որ չի կարողանում նրանց օգնել։

Այս անգամ էլ ուզեցին նրան Գերագոյն Մարմնի անդամ ընտրել, նորից մերժեց կտրական կերպով։

Փորձեց օձիքը ազատել եւ 12րդ Ընդհ. Ժողովում, 1933ին, բայց այս անգամ խոփը դիպաւ քարին։ Պայմանները այնպէս դասաւորուեցին, որ Դրոն պարտաւորուեց մտնելու կուսակցութեան գործօն ղեկավարութեան մէջ, ուր մնաց մինչեւ մահ։

Դրոյի ընկերական ոգին ես առանձնապէս զգացի այդ օրերին։ Մեր միջեւ իմի եւ քոյի խնդիր չկար· երբ նա ունէր եւ ես կարիքի մէջ էի, առանց վերապահութեան առնում էր նրանից։ Երբ ես ունէի եւ նա կարիքի մէջ էր, նա էլ առնում էր անվարան, ինչպէս պատահեց Մոսկուայից Փարիզ գալու օրերին։ Այս

անգամ ես մնացի անգործ, առանց նիւթական միջոցի։ Միայն Դրոն եղաւ, որ պահեց ինձ, մինչեւ որ ես կարողացայ աշխատանք գտնել։ Եթէ Դրոյի օժանդակութիւնը չլինէր, «Վէմ» հանդէսն էլ գոյութիւն չէր ունենայ։ Իրական ընկերութիւնը արտայայտւում է այն ժամանակ, երբ մարդիկ նեղութեան են մատնւում։

Մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը, Դրոն մնաց Ռումանիայում։ Նա վճռական դեր կատարեց Մարտկոցական պղտոր շարժումը հաշուեյարդարի ենթարկելու գործում։ Մարտկոցական ախտի մի տեսակն էլ երեւան եկաւ Պուլկարիայում, որ դարմանուեց առաւելաբար Դրոյի միջամտութեամբ։ Իր բարձրը հեղինակութիւնը ընկերների եւ հասարակութեան աչքին անվիճելի երաշխիք էր յաջողութեան, երբ նա ստանձնում էր որեւէ գործ։

Դրոյի հեղինակութիւնն ու խիզախ, ձեռներէց ոգին, անձնուէր հայրենասիրութիւնը երեւան եկաւ մասնաւորապէս համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին։

Դրոն գիտէր մարդկանց հոգիները գրաւելու արուեստը։ Եւ գիտէր նաեւ մերձաւորին ու հեռաւորին օգնութեան հասնելու ձեւը։ Ռումանիայում եւ դուրսը կային շատ ընկերներ, որոնց նա բաժին էր հանում իր վաստակից։ Տարիներ եւ տարիներ նա հոգում էր հանգուցեալ կամ այլապէս աշխատելու անկարող ընկերների ընտանիքների ապրուստը առանց ոեւէ մէկին զգացնել տալու իր արածի մասին։

Այդ նրա բնածին յատկութիւնն էր — արա՛ եւ մի՛ խօսիր։ Եւ զարմանալի չէր, որ Դրոյին սիրում էին ամէնքը եւ ամէն տեղ։ Բարեբախտաբար, իր անձնական գործերն էլ միշտ յաջող էին գնում՝ հնարաւորութիւն տալով նրան ապրել բարեկեցիկ եւ ապրեցնել ուրիշներին՝ լաւատեսութիւն եւ ուրախութիւն սփռելով շուրջը։ Համաշխարհային երկրորդ պատերազմը եկաւ փոխելու նրա կեանքի ընթացքը, կարելի է ասել իր կամքից անկախ, կապելով նրան պատերազմի հետ ռուս-գերմանական ճակատում, իբրեւ «նացիների գործակից»։

«Նացիների գործակից», մի ժամանակ էլ «բոլշեւիկների գործակից», իսկ դրանից առաջ՝ «ցարիզմի գործակից» — կարելի՞ է երեւակայել աւելի անհեթեթ եւ աւելի տխմար միտք, քան այս մեղադրանքը Դրոյի հասցէին, մի անհատի, որ մինչեւ ողն ու ծուծը անհաշտ թշնամի էր բռնակալութեան եւ իր ամբողջ կեանքում պայքարել էր ազատութեան համար ամէն տեսակ բռնակալութիւնների դէմ։ Իբրեւ կամաւորական գնդի հրամանատար «գործակցելով ցարիզմին», նա, իր ընկերների հետ, հայ դատն ու հայութիւնն էր պաշտպանում եւ միայն այդքան։ Ո՛չ մէկ փաստ կարելի ցոյց տալ, թէ նա համակրում կամ ծառայում էր ցարական վարչութեան։ «Գործակցելով բոլշեւիկներին», դարձեալ նրա միակ մտահոգութիւնը հայն ու Հայաստանն էին։ Դրոյի կեանքի եւ գործունէութեան մէջ կարելի չէ ցոյց տալ համակ-

բանքի եւ աջակցութեան ո՛չ մէկ արտայայտութիւն բոլշեւիզմին։ Բացարձակ անբարեխղճութիւն ու տխմարութիւն է ոմանց ճիգը արատաւորելու Դրոյի անբիծ անունը՝ ինչ որ կապ ցոյց տալով բոլշեւիզմի հետ։

Նոյնքան եւ աւելի մեծ տխմարութիւն ու անբարեխղճութիւն է Դրոյին մեղադրել նացիական համակրանքին մէջ։ Նացիզմը, որպէս բըռնակալութիւն, նրան նոյնքան խորթ է եւ ատելի, որքան եւ բոլշեւիզմը, որքան եւ ցարիզմը։ «Գործակցելով նացիզմին», Դրոն առաջնորդըւում էր միայն եւ միմիայն հայ ժողովրդի եւ Հայաստանի գերագոյն շահերով։ Եւ եթէ ուզում էք, նաեւ ընդհանուր համամարդկային ազատութեան շահերով։ Այսօր կոյրերն անգամ տեսան, որ բոլշեւիզմ եւ նացիզմ երկու չարիքներից նացիզմը փոքրագոյնն էր։ Բայց Դրոյին եւ նրա ընկերներին զբաղեցնողը, ի հարկէ, գաղափարաբանական խնդիրները չէին, այլ ամէնից առաջ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան մտահոգութիւնը։ Կեանքը եկաւ հաստատելու, որ այդ մտահոգութիւնը տեղին էր, եւ Դրոյի ու ընկերների ընթացքը, այն ժամանակւայ պայմաններում, ապահովութեան միակ հընարաւոր միջոցն էր։ Վաղը, երբ լոյս ընծայւին բոլոր փաստաթուղթերը, անկասկած պատմութիւնն էլ իր ձայնը պիտի միացնէ հանրութեան ձայնին՝ հայրենասիրութեան բարձր ոգի տեսնելով Դրոյի եւ ընկերների գործունէութեան մէջ։

ԺԳ

«ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱՑԻԶՄԻ ՀԵՏ»

Դրոյի կենսագրութեան այս էջը, իմ աչքում, առանձնապէս նշանակալից է նրա հոգեկան ու մտաւոր աշխարհի լուսաբանութեան համար։

Ըստ իս, անկարեւոր է այն պարագան, որ Դրոյի հասցէին անհուն լուտանք թափեցին եւ դեռ շարունակում են թափել աջից՝ կուրորէն, մոլեգին կատաղութեամբ, առանց նոյնիսկ հարցի էութեան ծանօթ լինելու։ Կարեւոր չէ եւ բոլշեւիկեան կատաղութիւնը կամ «Ստալինեան լաւարէատ»ների հայրենասիրական կեղծ խրատները։ Ի՞նչ օրերի ենք հասել, որ «արածող նախիրի» երգիչները Նակաշիձէի ահաբեկիչներին հայրենասիրութեան քարոզներ են կարդում։

Դրոյին առանձնապէս ցաւ էր պատճառում այն իրողութիւնը, որ իր գաղափարակից ընկերների մէջ էլ գտնուեցան անհատներ, որոնք անկարող եղան ըմբռնելու նրա գործի իմաստը։ Ես շատ եմ խօսել նրա հետ այդ հարցի մասին եւ լիովին համաձայն եմ նրա հետ։ Փորձենք վերլուծել եւ պարզել իրական պատկերն ու իմաստը Դրոյի «գործակցութեան նացիզմի հետ»։

Ցիշեցէք երկրորդ համաշխարհային պատերազմի նախընթաց եւ առաջին օրերը։ Պատերազմը սկսուեց դեմոկրատիկ աշխարհի եւ նացի Գերմանիոյ միջեւ՝ Սովետական Միութեան չէզոքութեամբ։ Հայաստանն ու հայութիւնը գործօն դեր չունէին այդ պատերազմում, որ անխուսափելիօրէն պիտի անդրադառնար — չէր կարող չանդրադառնալ — նրանց ճակատագրի վրայ։

Աշխարհագրականօրէն եւ քաղաքականօրէն հայութիւնը բաժանուած էր երեք մասերի. մի մասը ապրում էր Հայաստանում եւ Սովետական Միութեան միւս մասերում՝ անհրաժեշտօրէն պարտաւորուած լինելով հետեւելու սովետական քաղաքականութեան։ Միւս մասը գտնուում էր դեմոկրատիկ պետութիւններում — Ամերիկա, Ֆրանսա, Մեծն Բրիտանիա — եւ սրանց ենթակայ երկիրներում։ Սրանց ճակատագիրն ու քաղաքականութիւնն էլ բնական կերպով պիտի պայմանաւորուէին այդ պետութիւնների քաղաքականութեամբ։ Ուքրանիայի եւ Պալքանների նուաճումից յետոյ, շուրջ 400.000 հայեր մնացին նացի գերմանական աշխարհակալութեան սահմաններում։ Ինչ պիտի լինէր սրանց վիճակը։ Կարելի չէր չմտահոգուիլ, մանաւանդ, գիտենալով նացի կուսակցութեան ազգայնամոլ եւ օտարատեաց գաղափարաբանութիւնն ու գործելակերպը։

Դրոյի եւ ընկերների մտահոգութիւնն աւելի եւս ծանրացաւ, երբ յայտնի դարձաւ նա-

ցիզմի գործնական քաղաքականութիւնը հրեայ ժողովրդի վերաբերմամբ — ֆիզիքական բնաջնջում հրէութեան։ Շուտով հայերն էլ կարող էին դասուել հրեաների կարգը. նացի կառավարութեան կարգադրութեամբ հայութիւնն էլ կը նկատուէր թշնամի տարր եւ կ'ենթարկուէր նոյն օրէնքներին՝ ինչ որ եւ հրեաները։ Պատերազմի ընթացքին նացիները բնաջնջեցին մի քանի միլիոն հրեաներ. ակներեւ էր, որ նացի տիրապետութեան տակ ընկած հայերն էլ կարող էին ենթարկուել նոյն ճակատագրին։ Գերմանիոյ յաղթութեան պարագային Հայաստանն էլ պիտի մատնուէր հակահայ նացիզմի շահատակութեան։

Վտանգը մեծ էր, մանաւանդ որ նացի կուսակցութեան մէջ մի ազդեցիկ թեւ Ռոզենբերգի գլխաւորութեամբ, աշխատում էր հայերին դասել ոչ հնդա-եւրոպական, ասիական ժողովուրդների շարքին։

Դրոն եւ ընկերները հէնց սկիզբից տեսան եւ ըստ արժանւոյն գնահատեցին գալիք վտանգը։ Եւ որդեգրեցին տուեալ պայմաններում, միակ հնարաւոր գործելակերպը՝ համոզել գերման կառավարութիւնը, որ հայերը թշնամի չեն, Գերմանիոյ եւ հայերի օրինապահութիւնը հաստատող գործնական որոշ ապացոյցներ տալ։ Այստեղից՝ «գործակցութիւնը նացիզմի հետ»։

Մեր մէջ ռամիկ մտածողութիւնը ի վաղուց անտի մեծ պետութիւնները դասաւորել է որոշ կարգով. «ռուսը մեր քեռին է», «Անգ-

լիան մեր բարեկամն է», «Գերմանիան՝ մեր թշնամին» եւայլն։ Իրապէս ոչ ռուսը կամ Անգլիան մեր բարեկամն են եւ ո՛չ թշնամին։ Ոչ էլ Գերմանիան մեր թշնամին։ Քաղաքականութեան մէջ բարեկամ ու թշնամի գոյութիւն չունի. կայ միայն հաշիւ ու շահ։ Թուրքը երբէկ ամենաատուած ազգն էր օրինակ, Ամերիկայում. այսօր ամերիկացիի համար թուրքը ամենապատուաւոր ազգն է Ամերիկայում։ Ո՞վ է յիշում, որ նոյն այդ պատուաւոր ազգը մէկ միլիոն անմեղ կանայք ու երեխաներ ջարդեց։

Վիլհելմի Գերմանիան մեզ բարեկամ չէր, որովհետեւ բարեկամ էր Թուրքիոյ, որին բարեկամ չէինք մենք եւ բարեկամ չէր ռուսին, որին բարեկամ էինք մենք։ Բայց ըստ էութեան, գերման ժողովուրդը թշնամի՞ էր հայութեան։ Ի հարկէ, ո՛չ։ Այդ գերման ժողովուրդն էր որ խանդավառուէն ծափահարեց Գերմանիոյ բարեկամ համարուած Թուրքիոյ վարչապետի ահաբեկիչ Սողոմոն Թեհլիրեանի անպարտ արձակումը գերման դատարանի կողմից։ Ցետոյ մենք տեսանք, որ մեզ բարեկամ կարծուած Անգլիան ու Ռուսաստանն էլ մեզ բարեկամ չեն, այլ բարեկամ են ու գործակից մեր թշնամի Թուրքին։ Տո՛, բարեկամ եւ թշնամի գոյութիւն չունի քաղաքականութեան մէջ։ Կայ միայն հաշիւ ու շահ։

Հաշուից ու շահից առաջնորդուելով՝ նացի Գերմանիան էր եկաւ այն եզրակացութեան, որ հայերին թշնամանալով օգտակար ծառայութիւն

չի մատուցանի իր ազգին։ Եւ իրաւացի էին Դրոյի նման հայերը, որոնք եւս աշխատում էին ապահովել Գերմանիոյ բարեկամութիւնն ու պաշտպանութիւնը։ Այս փոխադարձ շահի հասկացողութիւնից տրամաբանօրէն բխում էր եւ «գործակցութիւնը նացիզմի հետ»։

Մանրամասնութիւնները հետաքրքրական եւ էական չեն այստեղ։ Որեւէ գործակցութիւն հիմնւում է կողմերի փոխադարձ շահի ճանաչման վրայ։ Հայերի շահերը պարզ էին — ժողովրդի ֆիզիքական գոյութեան ապահովութիւն եւ ապագայի քաղաքական երաշխիք։ Գերմանիան էլ, անշուշտ, ունէր իր հաշիւներն ու շահերը։

Պատմութեան ընթացքը անառարկելի վըճռականութեամբ հաստատեց, որ Դրոյի եւ ընկերների նախատեսութիւնները ճիշդ էին եւ հաշիւները իրական։ Գերման քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ հիմնովին բարեփոխուեց։ Հայերի դէմ սկսուած ճնշումները եւ հալածանքները վերջ գտան։ կարմիր բանակի տասնեակ հազարաւոր հայ գերիների կեանքը փրկուեց։ 400.000 հայեր, պատերազմի արհաւիրքներից դուրս եկան գրեթէ անվնաս եւ այսօր իրենց կեանքը, մեծ մասամբ, պարտական են Դրոյին եւ ընկերներին։

Եւ երբ պատերազմը վերջացաւ եւ «պատերազմի մեղադրեալները» յանձնուեցին արդարադատութեան, մէկ յարգանքի արժանի ձեռք չբարձրացաւ ամբաստանելու համար Դրոյին։

Զինադադարի առաջին թոհուբոհի մէջ, պատահաբար, նա ենթարկուեց բանտարկութեան, բայց դաշնակից իշխանութիւնները շուտով հասկացան սխալը եւ պատուով ազատ արձակեցին։ Ամէնքի համար անվիճելի էին նրա հայրենասիրական-գաղափարական բարձր առաքինութիւնները։ Բնորոշ է, որ սովետական կառավարութիւնն էլ որեւէ լուրջ պահանջ չներկայացրեց իրեն յանձնելու Դրոյին եւ ընկերներին։ Երեւի, բոլշեւիկների համար էլ պարզ եղաւ, որ ազատ աշխարհի օրէնքով կարելի չէր դատապարտել Դրոյի «գործակցութիւնը նացիզմի հետ»։ Դրոն ջերմ ընդունելութիւն եւ պատիւ գտաւ ազատ աշխարհում, մանաւանդ Լաֆայէտների եւ Կոստուչկոների գաղափարական յուշերով ապրող Ամերիկայում։

Ինչպէս յայտնի է, պատերազմի սկզբին, կարմիր բանակի ամբողջ զօրամասեր յօժարակամ անձնատուր էին լինում Գերմանիային։ Գերման ճամբարներում միլիոնաւոր կարմիր գերիներ հաւաքուեցին, որոնք ճանճերի պէս կոտորուում էին ձմեռուայ սառնամանիքից, բայց երկնքի տակ, անօթի ու թշուառ։ Մօտ 40.000 հայ գերիների կեանքը փրկուեց Դրոյի եւ ընկերի շնորհիւ։

ԺԴ

ՄԲՐԻԿՈՎ ԱՇԽԱՐՀ ԵԿԱՒ, ՓՈԹՈՐԻԿՈՎ ՀԵՌԱՑԱՒ

Պատերազմը վերջացաւ Դաշնակիցների յաղթանակով եւ... Դաշնակիցների պառակտումով։ Արդէն Փոցտամում ամերիկացիք եւ ռուսները տարբեր լեզուներով էին խօսում։ Անհասկացողութիւնն ու փոխադարձ անվստահութիւնը աւելի խորացան Սան Ֆրանսիսկոյում, ուր «մէկ աշխարհ»ը ճեղքուելով՝ բաժանուեց «պաղ պատերազմ»ի Լենինեան հռչակաւոր նշանաբանը «ոչ խաղաղութիւն, ոչ պատերազմ»։ Նախապատերազմեան անոյժ Ազգերի Դաշնակցութեան ու անհաշտ մրցակցութեան յաջորդեց որձեւէգ Միացեալ Ազգերի որձեւէգ կազմակերպութիւնը աւելի անհաշտ եւ կատաղի մրցակցութեամբ ու պայքարով։

Պատերազմն ու Միացեալ Ազգերը խաղաղութիւն չբերին եւ հայ ժողովուրդին։ Հիասթափութիւն Սան Ֆրանսիսկոյում։ Ներգաղթի խայտառակ այլասերում, հայութեան ներքին է՛լ աւելի խիստ պառակտում, բոլշեւիկների կողմից շահագործում Հայ Դատի ու հայ ժողովրդի՝ միջազգային շահաստանների վրայ, քաղաքական ճակատների վերջնական ձեւակերպում — համայնավարութեան հետ եւ համայնավարութեան

դէմ — երկաթէ անթափանց վարագոյր — այս ամէնը սաստիկ յուսաբեկում ու վհատութիւն առաջ բերեց հայութեան մէջ։ Յետ լօզանեան հոգեբնախօսական վիճակը յիշեցնող մի կացութիւն ստեղծուեց Սվիւռքում։

Եւ ինչպէս Լօզանից յետոյ, այս անգամ էլ հայութեան հոգեկան կորովը բարձր պահող, հանդիսացաւ Հ.Յ.Դաշնակցութիւնը։ ԺԴ. Ընդհանուր Ժողովը 1947ին նորից գտաւ իրականութիւնից բխող սրտապնդիչ բանաձեւեր, ցնցեց հայ ժողովրդի վհատութեան մատնուած միտքը, յոյս ու եռանդ ներշնչեց երիտասարդներին եւ երէցներին, հասկանալի եւ յստակ խօսքերով, լաւատեսութեան չունչով, ցոյց տուեց ազգային հետագայ քաղաքական ուղեգիծը։

Բանաձեւերը եւ կոչերը, սակայն, անարժէք են, եթէ չկան հաւատաւոր գործադրող ուժեր։ Դրոն մէկն է այդ հաւատաւորներից, անսպառ կենսունակութեան եւ եռանդի տէր։ ԺԴ. Ընդհանուր Ժողովում, 1947ին, ԺԵ. Ընդհանուր Ժողովում, 1951ին, ԺԶ. Ընդհանուր Ժողովում, 1955ին, Դրոն վերընտրուեց Դաշնակցութեան Գերագոյն ղեկավար մարմնի անդամ եւ ամբողջապէս, հոգիով եւ մարմնով, նուիրուեց կուսակցական-հանրային գործունէութեան։

Դրոյի հետապնդած գործերը դեռ իրենց ընթացքի մէջ են, պատմութիւն դարձած չեն, հետեւաբար, վաղաժամ է այդ մասին խօսելը։ Բայց կարելի է ասել, որ Դրոն դարձաւ կուսակցութեան ամենազօրաւոր շարժիչ ոյժը, իբ-

բեւ դրական գործի մարդ։ Նա ոտքի տակ տուեց Եւրոպան եւ Ամերիկան, ամէն տեղ կենդանի կապեր հաստատեց քաղաքական աշխարհում, իր անցեալով եւ ոգեշունչ խօսքով յոյս ու կենսունակութիւն ներշնչեց հայ ժողովուրդին, բայց մանաւանդ, երիտասարդութեան։ Ցարգանքի եւ վստահութեան արժանացաւ եւ մեզ բախտակից ժողովուրդների շրջաններում։

Որպէս քաղաքական գործիչ Դրոն այլեւս ձեւակերպուած դէմք էր։ Նա լրիւ կերպով ազատագրուել էր նախկին սէրերից եւ ատելութիւններից։ «Քաղաքականութեան մէջ զգացմունքը տեղ չունի» կրկնում էր նա յաճախ, «քաղաքականութիւնը շահի չուկայ է»։ Եւ այդ չուկայում արդիւնաւէտ ու շահաբեր գործ անելու համար պէտք էր լինել ուժեղ։ Ուժի պաշտամունքը շատ զօրաւոր էր նրա մէջ։

Դրոն տան, ընտանիքի մարդ էր։ Նա չէր սիրում աղմկոտ զուարճարանները։ Սրճարանում կամ ճաշարանում երկար նստելը տառապանք էր նրա համար։ Սիրում էր ընտանեկան միջավայրը, սեփական կամ մտերիմների յարկի տակ։ Այստեղ, ընկերական ժամանցների եւ քէֆերի ժամանակ անմրցելի էր իր ուրախ բընաւորութեամբ, իր հաճելի կատակներով, քաղցրը պատմութիւններով ու սրախօսութիւններ, երգով ու պարով։ Անպաճոյճ խօսող էր, բայց կարողանում էր յուզել մարդկային հոգու նուրբ թելերը...

Եթէ մէկին սիրէր, կը սիրէր ամբողջ

էութեամբ, բայց ատելութեան մէջ էլ բուռն էր։ Եւ արդէն ո՞ր հզօր անհատը չի իմանում սիրել եւ ատել ուժգին։

Նկատուած երեւոյթ է՝ հասարակական գործունէութեամբ տարուած մարդիկ, սովորաբար, զոհում են իրենց անհատական-ընտանեկան կեանքը։ Դրոն էլ բացառութիւն չէր կազմում։ Առաջին ամուսնութիւնից նա ունեցաւ մէկ տղայ, որ, մօր մահից յետոյ, մնաց առանց դաստիարակութեան եւ իրեն համար որոշ ինչ չգտաւ կեանքում, այժմ ծառայութեան մէջ է Ֆրանսական Լէժեոն էտռանժէում, իբրեւ սպայ։

Երկրորդ անգամ Դրոն ամուսնացաւ 1915ին եւ ամուսնութիւնից անմիջապէս յետոյ, Կամաւորական Գնդի գլուխն անցած, մեկնեց ճակատ եւ այնուհետեւ գրեթէ միշտ բացակայ եղաւ տնից։ Երկրորդ կնոջից ունեցաւ երկու մանչ զաւակ, որոնց երեսը շատ քիչ տեսաւ։ Դրոյի աքսորից յետոյ, նրա կինն էլ, Արփենիկը, երկու զաւակներով ուղարկուեց Սիբիր։ Քանի հնարաւոր էր, Դրոն արտասահմանից հոգում էր նրանց ապրուստը, բայց, ի վերջոյ, երկաթէ վարագոյրը ընդմիշտ բաժանեց նրանց իրարից։

Աւելի բախտաւոր էր Դրոն երրորդ կնոջ՝ Գայեանէի եւ Մարտիկ-Թոթօ որդու հետ, որոնց սիրում էր անսահման սիրով։

Այս անգամ էլ, սակայն, նա ստիպուած էր յաճախ հեռու մնալ տնից, մանաւանդ,

կեանքի վերջին տարիներին, երբ ամբողջապէս կլանուած էր կուսակցական-քաղաքական աշխատանքով։

1952ի նոր տարուց այս կողմ ինձ վիճակուեց բախտը հինգ տարի միեւնոյն յարկի տակ ապրելու Դրոյի հետ։ Դրանից առաջ էլ, երբ մի քանի անգամ Ամերիկա եկաւ, մեծ մասամբ միասին էինք գտնուում — կա՛մ իմ բնակարանում, Նիւ Եորքում, կամ ընկ. Աւետիս եւ Անահիտ Գարակէօզեանների տանը, Սան Ֆրանսիսկոյում, Լոս Անճելըսում ընկ. Մարկոս եւ Գլէօտիս Վարդանեաններին հիւր, Պոստոնում Տոքթ. Լեւոն եւ Լուսին Տաղլեանի տանը։ Ամէն տեղ, ամէնքը նրան շրջապատում էին սիրով ու գուրգուրանքով։ Ամէնքի սիրտը նա գրաւում էր իր ջերմ բնաւորութեամբ։

Պէյրութում մեր հնգամեայ մտերիմ կենակցութիւնը անվերջ կատակների նիւթ էր ծառայում ընկեր-բարեկամների շրջանակում։ Մեզ կոչում էին հարս ու կեսուր։ Հարսը, ի հարկէ, Դրոն իրեն էր վերապահում, թէեւ իրապէս ինքն էր կեսուրութիւն անում...

Պէյրութում նա ձեռք էր բերել ընկերների ու բարեկամների, մտերիմների եւ հարազատների լայն շրջանակ, որոնց տանը նա զգում էր իբրեւ իր սեփական տանը եւ որոնք նրան սիրում էին անձնուէր զգացումներով։ Ցաւի եւ տխրութեան պահերին, նա նրանց էր ապաւինում եւ նրանց մօտ հանգիստ ու մխիթարութիւն գտնում։ Ցիշենք մի քանի անուններ —

Մխо եւ Գոհար Մխիթարեան, Մկրտիչ եւ Յաստիկ Խանջեան, Դոկտ. Համբարձում Մարգարեան (Պէյրութի պարսկահայ գաղութը)։ Մովսէս եւ Անահիտ Տէր Գալուստեան, Տոքթ. Եղիկ եւ Շաքէ Գոնեալեան, Փիրանեան չէն ընտանիքը, Կարապետ եւ Ազնիւ Հացպանեան եւ բազում, բազում ուրիշներ, որոնց եղբայրական եւ քրոջական անկեղծ սէրն ու հոգածութիւնը ջերմացրին մասնաւորապէս Դրոյի կեանքի վերջին անարեւ տարիները... Դրոն առանձնապէս գոհ ու երախտապարտ էր երիտասարդ բժիշկ Սէֆէրեանին, որ անձնուէր ժրաջանութեամբ խնամում էր նրան։

Նուիրուած մտերիմներ Դրոն ունէր նաեւ ամէն տեղ։ Պոստոնից, իր նամակներում, նա յաճախ յիշում էր անունները ընկերներ Լեւոն Տաղլեանի, Համօ Բարաղամեանի, Վ. Քրմոյեանի, Մ. Օզանեանի, բժ. Ե. Թուզճեանի, որոնք, անսահման նուիրումով, խնամեցին նրան իր հիւանդութեան տաժանելի օրերին։

Ե՞րբ մտաւ Դրոյի մարմնի մէջ անիծեալ հիւանդութիւնը։

Բացի պատերազմի դաշտի վէրքից, ես չեմ յիշում, որ Դրոն կովկասում երբեւիցէ հիւանդացած լինէր։ Ամուր կազմով, պողպատէ մըկաններով, առողջ մարդ էր՝ կենսուրախ ու լաւատես։ Ռումանիայում միայն մի անգամ ծանր հիւանդացաւ ու գործողութեան ենթարկուեց, բայց այս էլ նրա ընդհանուր առողջութեան համար մի լուրջ հետեւանքներ չունեցաւ։

Ըստ երեւոյթին, վերջին պատերազմի տարիների անհանգիստ կեանքը արդէն ազդել էր նրա վրայ, երբ առաջին անգամ Ամերիկա եկաւ, գանգատւում էր յոգնաւից։ Յոգնա՞ւ էր միայն, ո՛չ ինքը, ո՛չ էլ բժիշկները կարողացան որոշել։

Երբ ես Պէյրութ փոխադրուեցի, 1951ի վերջը, Դրոն սկսել էր բժշկուել, տանջւում էր ցաւից, որ տարուէ տարի սաստկացաւ։ Մասնագէտ բժիշկները դժուարանում էին որոշել հիւանդութեան բնոյթը։ Իր միտքը միշտ պատում էր յոգնաւի շուրջը։

—Այս ռեւմադիզմը սպանում է ինձ, գանգատւում էր միշտ։

Մասնագէտ բժիշկները, Պէյրութում ու Եւրոպայում, երեւի կասկածում էին քաղցկեղի մասին. տանջում էին նրան զանազան փորձերով, դեղերով ու խիստ ցաւ պատճառող գործողութիւններով. բայց նզովեալ հիւանդութիւնը խուսափում էր նրանց տեսողութիւնից։ Դրոն տառապում էր եւ տառապեցնում էր մտերիմներին։ Մանաւանդ, խիստ տանջւում էր գիշերները, երբ քունը փախչում էր աչքերից եւ մրոայլ յոռետեսութիւնը պաշարում էր միտքը։ Բայց միաժամանակ, զարմանալի կերպով պահում էր մտքի յստակութիւնն ու կամքի զօրութիւնը։ Իր հիւանդութիւնը, կարելի է ասել, մազաչափ իսկ չանդրադարձաւ իր գործունէութեան վրայ։ Նա, միշտ մնաց պարտականութեան մարդը։

ցաւերը երթալով սաստկանում էին։ Պէյ-
րութի եւ Եւրոպայի բժիշկներից դարման չը-
գտնելով՝ նա դիմեց Ամերիկայի մասնագէտնե-
րին։ Իր նախավերջին այցելութեան Ամերիկա,
նա քննութեան ենթարկուեց Պոստոնի Լեհի
հռչակաւոր հիւանդանոցի մասնագէտների մօտ,
որոնք երեւան բերին քաղցքեղի մի կէտ նրա
մարմնում եւ ցոյց տուին նոր դարման մի-
ջոցը։ Դարմանումը, թւում էր թէ, տուեց դը-
րական արդիւնք, Ամերիկայից Դրոն վերադար-
ձաւ բոլորովին համոզուած, թէ բուժուած է
բոլորովին։ Եւ նախկին եռանդով անցաւ կու-
սակցական ու հանրային գործունէութեան։ Սա-
կայն, մէկ-մէկ կասկածը կրծում էր նրա միտ-
քը, մանաւանդ որ «ռեւմադիզմ»ի աւելի եւ ա-
ւելի սուր ցաւեր էր զգում ուսերում։ Սկսեց
գանգատուել ախորժակից, թուլութեան նշաններ
ցոյց տալ։ Ինձ թւում էր, թէ շաքարախտի
հետեւանք էր։ Շաքարախտ էլ ունէր, բայց ին-
ձանից ծածկում էր՝ վախենալով, որ արգելք
կը լինեմ, որ որոշ կերակուրներ չուտի։ Ընդ-
հանրապէս, սիրում էր լաւ ուտել եւ «Սուրբ
կարապետ երթալու» պէտք չունէր ախորժակ
բերելու համար։

Այս շրջանում, մանաւանդ, յաճախ էր յի-
շում իր ուսուցիչ Նիկոլ Դումանին, որ նոյն-
պէս բռնուեց քաղցկեղից եւ ինքնասպանութիւն
գործեց։ Իր մտքում Դրոն էլ որոշել էր հետե-
ւել ուսուցչի օրինակին։ Երբ գիշերները, ցաւից
տանջուելով, անքուն նա, հառաչելով, մտն էր

գալիս սենեակում, սրտումս վախ էի զգում եւ աշխատում էի նրա ուշադրութիւնը ուրիշ բանով զբաղեցնել։ Եւ բաւական էր որեւէ ձեւով յիշել Մարտիրոս Զարուխեանի կամ Դաշնակցական Խեչոյի անունը, որպէսզի նա ընկնէր անցեալի վերյիշումների մէջ, եւ գիշերը լուսացընէինք անփորձանք։

1955ի աշնան Դրոյի ցաւերը առանձնապէս սաստկացան։ Իր մտերիմները աշխատում էին համոզել, որ մեկնի Ամերիկա նոր քննութեան ու դարմանումի համար։ Արդէն Լէհիի մասնագէտներն էլ անհրաժեշտ էին համարել նոր քննութիւն կատարել։ Ի վերջոյ, Դրոն ինքն էլ համոզուեց եւ 1955 թ. Դեկտ. 6ին մեկնեց Ամերիկա։

Վերջին օրերը խիստ ջղային վիճակի մէջ էր։ Անհանդարտ, դիւրագրգիռ։ Արտաքնապէս, ուրիշների աչքին նոյն Դրոն էր՝ կենսախինդ եւ կատակաբան, բայց իրապէս տառապում էր։ Գիշերները չէր քնում։ Ման էր գալիս սենեակից սենեակ, խօսում էր ինքն իրեն հետ, երգում էր։ Մտնում էր մօտս, նստում մահճակալի վրայ կամ մտնում վերմակիս տակ եւ յուզուած խօսում էր անցեալ օրերի, մեռած ընկերների կամ օրուայ հարցերի մասին։ Միտքը սուր էր եւ թեւաւոր. արագ թռչում էր մի նիւթից միւսը։ Երբեմն դառնում էր մելամաղձոտ, երգում էր տխուր։ Մերթ զայրացկոտ օրուայ չարիքների առթիւ։ «Ուրտեղ կտրուի կապը, սատկի թշնամու պապը», կրկնում էր

յաճախ իր սիրած խօսքը։ Ցայտնապէս տառապում էր։

Պէյրութից մեկնելիս, նախընթաց գիշերն էր կարծեմ, սովորական աղմուկով ներս մտաւ սենեակս եւ ընկաւ մահճակալիս վրայ։

—Հեռացի՛ր, թո՛ղ որ քնեմ, բարկացայ ես։ Բայց նա մտիկ չարաւ ու սկսեց ծիծաղել։ Ապա մեղմ ասաց.

—Գիտե՞ս ինչ, մենք այլեւս չենք տեսնուի։

—Ի՞նչ ես յիմար-յիմար դուրս տալիս, պոռացի վրան։ Կ'երթաս, առողջացած կը վերադառնաս...

Նա ջղային ծիծաղով կտրեց խօսքս։

—Ես, ի հարկէ, կը վերադառնամ, այո՛, բայց վախենամ դու այլեւս չլինես...

—Ահա թէ ինչ... Թէթեւ պահիր, ես կը սպասեմ քեզ։ Գնա՛, հանգիստ քնիր...

Բայց նա չգնաց ու գիշերը լուսացրինք կողք-կողքի, միեւնոյն վերմակի տակ։

Մեկնելու օրը, օդակայանում, ես մռայլ էի։ Շատ ընկերներ ու բարեկամներ եկել էին ողջերթ մաղթելու, եւ ամէնքը տխուր էին։ Դրոն ամէնքի հետ կատակ էր անում, բայց առաջուայ Դրոն չէր կարծես։ «Ի՞նչ ես մռութդ կախել,— ասաց նա ինձ,— դարդ մի՛ անիր, կը տեսնուինք»։ Ու վերջին համբոյր։ Վերջին օդային համբոյր ամէնքին։ Եւ թռաւ, անհետացաւ օդում։ Գնաց։

Դրոն գնաց եւ բաւական ժամանակ նրանից լուր չեկաւ։ Որոշ էր, որ լաւ չէր զգում

իրեն։ Եւ, յիրաւի, Լէհիի մասնագէտների քննութիւնը հաստատել էր մեր վախերը, քաղցկեղը փոխանցուել էր մարմնի միւս մասերին՝ կողոսկրին, ուսերին՝ սաստիկ ցաւ պատճառելով։ Իրենից գաղտնի էին պահել քննութեան արդիւնքը. ասել էին, թէ ոսկրախտ ունի, որ բուժելի է էքս ճառագայթներով, եւ նա հաւատացել էր...

Այնուհետեւ Դրոյի անձնական նամակները դառնում էին «ոսկրախտ»ի շուրջ — գանգատ ցաւերից եւ յոյս մօտակայ բժշկութեան։ Նա շարունակում էր հետաքրքրուել — ամբողջ էութեամբ ապրել — հանրային եւ կուսակցական հարցերով։ Մարմնով Ամերիկայում իր միտքը այստեղ էր, Լիբանանում, հայութեան եւ ընկերների հետ։

Ու մի օր էլ՝ հեռագիր Պոստոնից. Դրոյի վիճակը յուսահատական է։ Նոր ի՞նչ էր պատահել։ Ինքն էլ երկար ժամանակ չէր գրել։ Երեւի սիրտ չունէր։ Կամ անկարող էր գրելու։ Ամերիկայից չարագուշակ լուրեր էին հասնում։

Մեր նամակների եւ հեռագիրների վրայ հետզհետէ հասան տեղեկութիւններ։ Առաջ բերենք մի քանի քաղուածք Դրոյի մտերիմների գրած նամակներից։

Այսպէս, Հ.Ց.Դ. Ամերիկայի կեդր. կոմիտէն գրում է 1956, Փետր. 3ին.

«Մօտ շաբաթ մը հիւանդանոց մնալէ ետք, ընկ. Դրօ տուն դարձաւ։ Այսօր գնաց Լէհի Գլինիկ, ուր որոշ քննութեանց ենթարկուեցաւ։

ճիշդ հիմա Տոքթորը, որ հիւանդին հետը ե-
ղած է, հեռաձայնով յայտնեց մեզի։

«Ք. ճառագայթները ցոյց կու տան, որ
ողնայարի 5րդ ոսկորը եւ աջ ու ձախ ուսերը
վարակուած են մեզի ծանօթ հիւանդութեամբ։
Մասնագէտները առ այժմ կը վարանին վճռա-
կան բան մը ըսելու դարմանումի մասին։

«Պիտի տան էլեկտրական ուժը դարմա-
նումներ՝ ցաւերուն կամ գէթ զգալապէս մեղ-
մացնելու ցաւերը, այն ատեն Ք. ճառագայթնե-
րով նորէն պիտի հանուին հիւանդ մասերու
պատկերները՝ հին ու նոր պատկերներու տար-
բերութիւնները տեսնելու համար։

«Եթէ ցաւերը վերջ գտնեն կամ զգալա-
պէս մեղմանան, բժիշկները պիտի դառնան ա-
ւելի յուսալից հիւանդի կացութեան վերաբեր-
մամբ։

«Գիտէք ընկ. Դրոն չաքար ալ ունի։

«Ամերիկա երբ եկաւ, ծանրութիւնը 204
փաունտ էր։ Այժմ՝ 179։ Մտահոգ իր վիճակի
վերաբերմամբ, Դրոն չատ չ'ուտեր, գիշերները
լաւ չի քնանար։ Ասոնք ալ անշուշտ, կ'ազդեն
իր ծանրութեան նուազման։

«Երբ նամակ գրէք, իրեն սիրտ տուէք։
Գործի վերաբերեալ յանձնարարութիւններ մի ը-
ընէք։ Յանձնարարութիւններ ստանալ եւ զանոնք
իր վիճակի բերումովը չկարենալ կատարելը
զինքը աւելի անհանգիստ եւ ջղային կը դար-
ձընէ։

«Իր հիւանդութեան մասին մենք ըսած

ենք, որ ոսկորի բորբոքում է — Ասթիայիս։ Դուք ալ երբ գրէք, հիւանդութեան անունը մի տաք»։

Համօ Բարաղամեանի Փետր. 4 նամակից գրում է.

«Դրոն չորս օր հիւանդանոց մնալէ ետք տուն բերինք։

«Գործողութեան արդիւնքը այն է, որ այդ անիծած հիւանդութիւնը կողերուն զարկած է, բուժում չկայ։ Ծանր է վիճակը։ Իրեն բան մը չենք ըսած։ Կը խնդրեմ դուն ալ կամ այդտեղի ընկերները որ նամակ գրէք, մի՛ գիտցնէք։ Եթէ յայտնենք իրեն, սարսափելի վիճակ կը ստեղծուի։ Այս քանի անգամ է կ'ըսէ. «Համօ ջան, պէտք է թողո՞ւս, որ աղբերդ անկողնի մէջ մեռնի...»։

«Անցեալ օր Լէհիի ռիփորթը մեր ուզածին պէս չինել տուինք եւ բժ. Թուզճեանի միջոցով իրեն ղրկեցինք։ Հեռախօսը բացաւ եւ ըսաւ. «Աղբեր ջան, ռիփորթը շատ լաւ է, միայն ոսկորի ցաւ է, որ իքս ռէյով կարելի է դարմանել»։

«Շատ ծանր օրեր կ'ապրինք։ Ես ու Լեւոնը ամէն օր կը տեսնենք անոր հալ ու մաշ ըլլալը։ Ախորժակը բոլորովին կտրուած է։ Երեւակայիր, մօտ 35 փաունտ կորսնցուցած է։ Դժուար թէ դիմանայ»։

Աւելի մռայլ գոյներով պատկերացնում է Տոքթ. Լեւոն Տաղլեանը, իր Փետր. 23 նամակով։

«Անցեալ Հինգշաբթի, Փետր. 16ի գիշերը, հիւանդանոց փոխադրեցինք Դրոյին։ Գայեանէն ձայն մը կը լսէ եւ կ'ելլէ որ Դրոն լուացարանի մէջ ինկած երեսն ի վար պառկած է, նուաղած է եղեր։ Ջուր թափելու ելած է, փսխելը եկած է եւ ծռած է որ փսխէ, նոյն պահուն նուաղած է եւ ինկած է. բարեբախտաբար՝ իյնալուն պատճառաւ որեւէ մնաս չէ ունեցած. փորհարութիւն ունեցեր է, մեծ մասով արիւն, նոյնպէս փսխուքն ալ արիւն է եղած։ Թուզճեանը ինծի ալ իմաց տուաւ, առտուայ ժամը 3ն էր, ambulance կանչեցինք եւ հիւանդանոց փոխադրեցինք։ Արիւն ներարկեցին, տեւաբար, մէկ երկու անգամ ալ թեթեւ արիւնահոսութիւն ունեցաւ։ Վերջապէս արիւնը կեցաւ, 1-2 աստիճան տաքութիւն ունի, դեղերու ազդեցութեան տակն է, երբեմն կը զառանցէ — Սիմոն, Մարտիրոս, Ատուր կը կանչէ, յետոյ կը նայիս կատարելապէս արթուն է եւ կ'ուզէ նամակ գրել Ատուրին, Վահանին։ Երբ որ կաթողիկոսական ընտրութեան լուրը տուի, չտկուեցաւ եւ համբուրեց զիս, «կեցցէ այս կազմակերպութիւնը, եւ վստահ էր որ մեզ յուսախաբ չեն ըներ» ըսելով հանգիստ քնացաւ մօտ կէս ժամ։ Հոգիով եւ մտահոգութեամբ ձեզ հետ է։ Բարեբախտաբար լրիւ տեղեակ չէ իր կացութեան, կասկածներ ունի, բայց՝ ինչպէս բոլոր հիւանդները ինքն ալ տրամադիր է յուսալու։ Առօրեայով մտահոգուած է։ «Ահա այս ինչ դեղը պիտի տան, x-ray պիտի առնեն,

վաղը տեղեկագիրը կը ստանանք յայտնի կ'ըլլայ» եւ նման մտահոգութիւններով ժամերը կը սահին։ Այսպէս որքա՞ն կը դիմանայ, ոչ ոք գիտէ։ Այս արիւնահոսութենէն առաջ երեք ամիս կու տային, իսկ հիմա «շաբաթներով» կը խօսին։ Լաւագոյն խնամքը կը ստանայ. հիւանդապահուհիներէ եւ բժիշկներէ զատ՝ մեր ընկերներէն մէկ երկու հոգի միշտ հետն են, օրական 24 ժամ»։

Եւ, իսկապէս, յուզիչ է եղել մեր Ամերիկայի ընկերների վերաբերումն դէպի հիւանդ Դրոն։ Պաշտամունքի հասնող նուիրում։ Նիւթական եւ բարոյական ոչ մի միջոց չի խնայուել փրկելու համար նրա թանկագին կեանքը։ Բայց անողոք բնութեան դէմ անզօր են անցնում բոլոր ճիգերը։

Մարտ 8ին Տաղլեանը գրում է.

«Դրոն Երկուշաբթի առտու գործողութեան ենթարկուեցաւ։ Ամբողջ մարմինը դեղնած էր, լեղուցքի ճամբան գոցուած էր եւ փոխանակ աղիքներուն մէջ թափուելու, մարմնին մէջ կը տարածուէր։ Եթէ անմիջապէս գործողութեան չենթարկուէր, թունաւորումէ պիտի մեռնէր։ Նկատի ունենալով իր կացութիւնը — շաքարախտ, ստամոքսի ulcer, քանսրրի ընդհանուր ճիւղաւորում եւայլն — գործողութիւնը շատ մեծ risk էր. բժիշկը ըսաւ որ կրնայ գործողութեան սենեակէն ողջ չվերադառնալ։ Ըստ բժիշկներու, գործողութիւնը յաջող անցած է եւ Դրոն լաւ դիմացած է։ Երէկ եւ այսօր հան-

դիպեցայ, ուշքը վրան չէ, դեղերու ազդեցութեան տակ է, երբեմն աչքերը կը բանայ. կը յուսան որ մէկ երկու օրէն դէպի լաւը փոփոխութիւն մը ըլլայ։ Մարմնի դեղնութիւնը նորէն առաջուան պէս է։ Լեարդի մէջ շատ քանսըր չեն գտած, pancreaseը վարակուած է եւ մեծնալով ճնշուած է ball-bladderի ճամբուն վրայ։ Այս բոլորը մաքրած են եւ լեղուցքի համար նոր ճամբայ բացած են։ Նամակ կարդալու հնարաւորութիւն չունի, թէեւ երբեմն՝ կը խնդրէ որ հեռագրենք ձեզի, որ crisisը անցած է եւայլն»։

Ակներեւ էր, որ իր օրերը համրուած էին։

Եւ Մարտ 8ին, երեկոյեան ժամը 8։45ին, ծանր հոգեվարքից յետոյ, Դրոն փչում էր իր վերջին շունչը՝ օտար երկնքի տակ, հեռու սիրելի հայրենիքից։

Հեռագրական կարճ լուր — Դրոն մեռաւ — որ ցնցեց Սփիւռքի ազատատենչ հայութիւնը։

Դրոն մեռա՞ւ։ Կարելի՞ է Դրոյի մասին ասել «մեռաւ»։

Ցմեռաւ։ Հեռացաւ մեզանից մարմնով միայն. իր հոգեկան էութեամբ միշտ մեզ հետ է եւ յաւիտեան կը մնայ մեզ հետ։

Դրոյի վերջին ժամերի մասին ի զուր տեղեկութիւններ սպասեցի իր մօտը եղողներից։ Հատուկտոր բաներ միայն գրեցին։ Ահա մէկը՝ Համօ Բարաղամեանից, Դրոյի, կարելի է ասել վերջին օրերի համհարզի նամակից։

«Շատ կը ցաւիմ, որ խնդրածդ նամակը բնաւ չբաւարարէ քեզի, բայց այնուամենայնիւ պիտի ջանամ որոշ չափով գոհացնել։ Դրոն մահուան մասին բնաւ չէր մտածեր, երբեմն կը գիտակցէր, որ իր վիճակը ծանր է, երբեմն ալ կ'ըսէր. «այս ալ կ'անցնի» այդ պատճառով ալ շատ բան չէր խօսեր, կամ վերջին ժամուն խնդրանքներ կամ հրահանգներ չէր տար մեզի։ Այսուամենայնիւ վերջին 4–5 շաբթուան մէջ պատահած մէկ քանի բնորոշ դէպքերու մասին կ'ուզեմ գրել։

«Ինձ համար ամէնէն հետաքրքրականը, երբ Լեհի Քլինիք կը տանէի treatmentի համար, ճամբան շատ յաճախ կ'երգէր ու միշտ միեւնոյն երգը «Զանգեզուր փախչող աղջիկ, սրտիդ ընկերը ես եմ, Հայաստան մէկ էլ տեսնէի, տեսնելուց յետոյ մեռնէի», եւ կամ «Երեւան մէկ էլ տեսնէի» եւայլն։

«Զարմանալի էր նաեւ կուսակցական գործերու շուրջ ունեցած հետաքրքրութիւնը։ Օրինակ, երբ քու նամակդ առինք, ուր գրած էիր, թէ Վազգէն կաթողիկոսը ինչպէս դիմաւորեցիք։ Երբ իրեն կարդացի նամակդ, մէկէն գոռաց. «Տօ, շաշ, տես ոնց են բերնի ջուրերը վազցնում... վայ քու խերը... Տես, տես, ոնց է գովում կաթողիկոսին...»։ Առիթէն օգտուելով ըսի իրեն «Դրօ ջան, մի հեռագիր խփիր, որ պինդ կենան»։ Հա, հա, լաւ կը լինի, Լեւոնին մի հեռախօս բաց արա, վազեցի հեռախօսի մօտ, երբ սկսայ Լեւոնին ասել, որ Դրոն հե-

ռազիր է ուզում խփել՝ այն մարդը, որ անկողինէն ելելը 20 վայրկեան կ'առնէր, մէկէն գոռաց. «Ես պիտի խօսիմ Լեւոնի հետ» ու ցատկեց անկողինէն ու եկաւ հեռախօսի մօտ, եւ խօսեց Լեւոնին։ Ես այդքան գոռում գոչիւն չէի լսած Դրոյէն։ Ինչպէս ըսի մինչեւ վերջին պահը նա միշտ կենդանի հետաքրքրութիւն պահեց։ Այն գիշերը, որ արիւն փսխեց եւ հիւանդանոց տարինք, այդ նոյն գիշերը Համաստեղը եւ կինը եկած էին։ Ես ու Լեւոնն ալ հոն էինք. խօսակցութիւնը կաթողիկոսի ընտրութիւնն էր, Համաստեղը սովորականին պէս դէմ էր, որ մենք Զարեհը թեկնածու կը պաշտպանենք, պէտք է տեղի տանք ու անոնց ուզածը նշանակենք. ես ու Լեւոնը լուռ էինք, թողուցինք որ Դրոն խօսի, եւ հիւանդ մարդը առիւծ էր, ոտքի ելաւ, սկսաւ ճառել, թէ որքան կարեւոր է այս ընտրութիւնը հայութեան համար։ Եւ, ի վերջոյ, հանդիսաւորապէս ոտքի կեցաւ, ու բառ առ բառ ըսաւ հետեւեալը.

—«Տղերք, հպարտ եղէք որ անդամ էք մի կազմակերպութեան, որից վախենում են բոլշեւիկը եւ թուրքը. դրա համար էլ ուզում են քայքայել նրան։ Ցարգում են մեզ օտարներն ու հաշուի են առնում թուով թէեւ փոքր, բայց որակով բարձր մեր ուժը։ Հպարտ եղէք, ձեզ եմ ասում»։

«Եւ մենք, բոլորս ոտքի ելանք, ի յարգանս մեր կազմակերպութեան։

«Այնուհետեւ, գիշերը Դրոն, արիւն փսխեց։

ժամը 3ին ինձ հեռախօսեցին, Թուզճեանին ալ լուր տուինք ու տարինք հիւանդանոց։

«Հիւանդանոցի մէջ վիճակը բնաւ լաւ չէր. դեղնութիւնը առեր էր ամբողջ մարմինը. կը զգայիր, որ հսկան կ'երթայ կամաց-կամաց...։ Երբեմն խելքը վրան էր ու շնորհքով կը խօսէր. երբեմն ալ անկապ-անկապ բաներ կ'ըսէր ու ուշքը վրան չէր։ Հակառակ անոր որ օրը երեք անգամ հիւանդանոց կ'երթայի, բաւական ատեն կը կենայի քովը, օր մը ալ Փոլ Նահապետեանին ըսեր է. «Փոլ ջան, այս մեր Համոն ո՞ւր է, չի երեւում, խռովա՞ծ է, ինչո՞ւ չի գալիս, ասա իրեն, որ կարեւոր ըսելիքներ ունիմ ու յանձնարարութիւններ ունեմ իրեն համար, անպայման թող գայ»։

«Մահուան օրը, առաւօտ, կրկին Գայեանէին հետ գացինք, մտանք սենեակը։ Առաջին խօսքը որ ըսաւ՝ «Գայեանէ, ես կոմայի մէջ եմ — եւ դարձաւ ինծի — Համօ ջան, ի՞նչ նորութիւններ կան Պէյրութից եւ դէսից-դէ նից...»։ Ու կրկին կոմայի մէջ ինկաւ։ Օր մը ալ Լեւոնին ըրած էր նոյն բանը։ Լեւոնը երկար կեցած է քովը, բայց ոչ մէկ խօսք արտասանած է...»։

Եւ, վերջապէս, «Հայրենիք»ը, 10 Մարտին հաղորդում է.

«Անհուն վիշտով կը հաղորդենք մեր մեծ ու սիրեցեալ ընկերոջ՝ Դրոյի մահը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 8 Մարտ, երեկոյեան ժամը 8ը 45 անց, Նիւ Ինկլէնտ Տիքընէս հիւան-

դանոցին մէջ, երկարատեւ եւ չարչարագին հիւանդութենէ մը ետք։

«Ճակատագրական այս հարուածը, որ կը խլէ այս ժողովուրդէն իր հերոսական զաւակներէն մէկը, խորապէս կը վշտահարէ բովանդակ հայութիւնը, Սփիւռքէն մինչեւ Հայաստան, ուր վառ ու կենդանի կը մնայ Վահագնազարմ այս դիւցազնին հերոսական արարքներուն յուշը, հայ բազմութիւններուն սրտերուն մէջ։

«Դրոյի մահով կ'անհետանայ Հայկական Ազատամարտի ամէնէն չքեղ ու մարտնչող դէմքերէն մէկը, վերջին Պահակախումբի քաջերէն, որոնք Հայոց Պատմութիւնը զարդարեցին լոյսով ու յաղթանակներով։

«Հայաստանի Ազատութիւնն ու Անկախութիւնը կերտող բացառիկ դէմքերէն եղաւ Ան, բոլոր ճակատներու վրայ, եւ յատկապէս, Բաշ Ապարանի հերոսական մարտնչումներուն մէջ, իբրեւ ղեկավար, որ գիտցաւ իր զինուորական բարձր ընդունակութիւններով, իր յանդգնութեամբ, անվեհեր քաջութեամբ եւ ժողովրդականութեամբ, հայ բանակը բոցավառել ու դէպի յաղթանակ առաջնորդել։

«Դրօ, որ մարտնչող բազմութիւններուն չունչ ու ոգի տուաւ, անչունչ է այսօր, թէեւ իր յիշատակը կ'ոգեւորէ բովանդակ հայութիւնը։

«Շատ քիչ դէմքեր ունեցած ենք, որոնց անունը զանգուածները չարժման մէջ դրած ըլլայ։ Դրոն այդ անուններէն էր, որ դրօշակ

դարձաւ Ազատութեան եւ յանդուգն արարքներու։ Իր քաջութիւնը, իր բնազդական ու ստացական մարտունակութիւնը, իր բացառիկ յանդգնութեան հետ՝ իր անհուն բարութիւնը, զինքը կը դասեն Հայոց Պատմութեան մեծագոյն դէմքերուն շարքը, անմոռանալի եւ պաշտելի»։

Եւ այնուհետեւ՝ հող էին եւ ի հող դարձիր — յուղարկաւորութիւնը եւ յանձնումը հողին։

Շաբաթ երեկոյից սկսած մինչեւ Կիրակի կէս գիշեր, Մարտ 9-10-11, Դրոյի բաց դագաղը կը դրուի «Հայրենիք»ի սրահը բազմաթիւ ծաղկեպսակներով եւ պահակ կեցած երիտասարդ ընկերներով շրջապատուած։ Պոստոնից եւ շրջակայքից աւելի քան 2000 ընկերներ եւ հայրենակիցներ, լուռ շարքերով եւ երախտագէտ երկիւղածութեամբ, անցնում են դագաղի առջեւից՝ վերջին «մնաս բարեւ»ը ասելու համար իրենց պաշտելի հերոսին։ Հայ ժողովրդական յարգանքի յուզիչ ցոյց էր այս...

Թաղումը տեղի ունեցաւ Կիրակի, Մարտ 18ին։ Մի քանի օր էր աննախընթաց փոթորիկ էր անում, ցուրտ, ձիւն ու սառնամանիք, փչում էր անասելի քամի։ Բոլոր ճանապարհները փակուել էին։ Երկաթուղային գնացքները եւ ինքնաշարժները դժուարութեամբ էին գործում։ Բազմահազար բազմութիւն էր սպասում Դրոյին հրաժեշտ տալու համար Նիւ Ինկլընտի նահանգներից, Նիւ Եորքից եւ աւելի հեռաւոր

տեղերից։ Շատերը չհասան, մնացին ճանապարհին...

Հանդիսաւոր արարողութիւնից յետոյ Պոստոնի Հոլի Թրինիթի նշանաւոր եկեղեցում՝ հոգին յանձնումը տեղի ունեցաւ Ուսթրրթաունի Մաունթօթրն գերեզմանատան մէջ։ Ներկայ եղող ընկերներից մէկը գրում է ինձ այդ առթիւ.

«Ջես կարող երեւակայել, թէ ինչ պատահեց։ Սարսափելի փոթորիկ էր, բուք ու բորան։ Փողոցները անանցանելի էին դարձել։ Անհաչիւ օթոմոպիլները խրուեցին մնացին ձեան մէջ։ Շատերը չկարողացան ներկայ գտնուիլ թաղման։ Քիչ մնաց ես ալ չհասնէի...

«Եւ երեւակայիր, ինչ հրաշք պատահեց։ Արդէն գերեզմանի մօտ էինք, երբ, յանկարծ, փոթորիկը կտրուեց։ Երկինքը բացուեց, եւ ձիւների մէջ թաղուած գերեզմանոցը ողողուեց արեգակի շլացնող ճառագայթներով։ Եւ այս ըսքանչելի եղանակը շարունակուեց մինչեւ դագաղը հողը իջեցնելը։ Ապա փոթորիկը վերսկսուեց աւելի կատաղի ուժով։

«Երբ լսուեց «Ի վերին Երուսաղէմ»ի սըրտակեղէք մեղեդին, ես աչքս բարձրացրի վեր, երկնքում, անսահման բարձրութեան վրայ, նըշմարուում էր արծաթէ թեւերով մի սաւառնակ, որ կարծես վեր էր սլանում՝ տանելով իր մէջ Դրոյի լուսաշող հոգին։ Երեւոյթը այնքա՛ն անակնկալ էր եւ տպաւորութիւնը այնպէս ցնցող, որ ես քիչ մնաց ուշաթափուէի...»։

Անտարակոյս, Դրոյի հոգին էր, Դրոն ինքը, որ մրրիկով աշխարհ եկաւ եւ փոթորիկով հեռացաւ։

ԱՆՁՆԱՆՈՒՆ

Աբրահամ.— 51
Աթարբէգեան (Աթարբէգով).— 137, 145
Ալադի.— 70
Ալիխանով Աւարսկու.— 50, 51, 52, 58, 59, 60, 61, 70
Ալոյեան, Գալուստ.— 69, 90
Ախուլգինսկի.— 20, 21, 26
Ամարոնեան, Աւետիս.— 8, 99
Աղաճանեան, Գրիգոր.— 51
Աղբալեան, Նիկոլ.— 80, 86, 100
Ամիրով, Գէորգ.— 66
Ամիրեան, Գրիգոր.— 159
Անդրանիկ.— 14, 15, 77, 78, 85, 86, 87, 88, 89, 98, 99, 101, 102, 105, 112,
Անդրանիկ, Քաչալ.— 43
Աշխէն (քոյր).— 83
Աշտարակեցի, Ներսէս.— 80
Ատուր.— 183
Արամ.— 70, 73, 95, 98, 104, 105, 106, 108, 109, 110, 116
Արղութեան, Ցովսէփ.— 80
Արշարունի, Հմայեակ Վրդ.— 8
Արսէն.— 160
Արտաշէս.— 109
Արփենիկ.— 90, 138, 140, 141,142, 173
Աւագեան.— 9, 20, 35, 42, 46
Աւագեան, Արծուիկ.— 20, 35, 42, 46, 64
Աւետով, Արտուշ.— 66, 67
Աւիս.— 137, 145

Բաբալեան, բժ. Ա.— 131, 132
Բարաղամեան, Համ.— 175, 182, 185, 188
Բէգզատեանց, Տիգրան.— 99
Բլկով (Գնդ.).— 30
Բորրիշչեւ (Զօր.).— 137, 140
Բոգուսլաւսկի.— 16, 17, 18, 19, 30, 33
Բուրկացկու (Գնդ.).— 68
Բրաժնիկով.— 11

Գալօ, Խլաթցի.— 43, 44, 45
Գալեանէ.— 173, 183, 188
Գարակէօզեան, Աւետիս եւ Անահիտ.— 174
Գարօ, Արմէն.— 53, 73, 80, 81, 82, 91
Գէորգ (Ադիւ).— 43
Գէորգեան.— 17, 18, 19
Գիւլխանդանեան, Աբրահամ.— 27
Գոլիցին.— 12
Գոնեալեան, Տոքթ. Եղիկ եւ Շաքէ.— 175

Դաւիթ, Սասունցի.— 7
Դաւթեան, Յոնան.— 73
Դոստոյեւսկի.— 150
Դուման, Նիկոլ.— 21, 24, 25, 26, 27, 36, 39, 40, 41, 42, 44, 45, 47, 49, 52, 57, 62, 177
Դրօ (Դրաստամատ Կանայեան, ընկեր Դրօ, մորկածին Դրօ, Սուրէն Էֆէնտի) .— 5, 6, 7, 10, 11, 13, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 26, 27, 29, 34, 35, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 108, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 122, 123,

124, 125, 126, 127, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166,168, 169, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178,179, 180, 182, 182, 183, 184, 185, 186, 187, 188,189, 190, 191:

Եղо (Թոփալ).— 93

Զաբոլոտկо, Սաշա.— 17, 18, 19
Զարեհ.— 187
Զարիֆեան, Ե.— 71
Զաւրեան, Ե. բժ.— 6—, 64, 80
Զաքքի.— 8
Զինովիեւ.— 127

Էնվեր.— 127

Թադէոսեան, Լեւոն (Պապաշա).— 24, 38
Թաւաքալեան, Բագրատ Վրդ.— 9
Թէհլիրեան, Սողոմոն.— 167
Թուզճեան, Ե. բժ.— 175, 182, 187
Թումանեան, Յովհաննէս.— 80, 81

Ժորգանիա, Նոյ.— 114

Իշխան.— 70
Իշխանեան, Բաշխի.— 135
Իսահակեան, Աւետիք (Աւо).— 53, 54, 59
Իսահակեան, Ինժինէր.— 144, 145

Լաֆայէտ.— 169
Լեւոն.— 182, 186, 187

Լէգրան.— 133, 134, 137
Լուկաշին.— 146

Խալիլ, Փաշա.— 124, 127
Խանջեան, Մկրտիչ եւ Ցասմիկ.— 175
Խատիսեան, Ալ.— 83, 84, 133, 135, 136
Խաչատուրեան, Սմբատ.— 146
Խեչօ.— 82, 86, 88, 89
Խեչօ (Դաշնակցական).— 35, 36, 37, 38, 45, 85, 178

Կալեայեւ.— 34, 49
Կանայեան, Լիւտեկ.— 47, 64
Կանայեան, Մարտիրոս (Կակոյենց).— 7, 9, 10, 20, 35, 42, 46
Կապուտիկեան, Բարունակ.— 117
Կարապէքիր, Քեազիմ.— 127, 130, 133, 135
Կարճիկեան, Խաչիկ.— 80, 83, 99, 112, 113
Կոմիտաս վարդապետ.— 9
Կոմս.— 90
Կոստիշկոյ.— 169
Կորիւն.— 160
Կուկունեան.— 12
Կուռօ.— 159
Կռօ (Գանձակեցի).— 27, 28, 34, 35

Հախվերտեան, Ց. Զօր.— 110, 111, 115, 146
Հաճի, Կոտոյի.— 43
Հաճի, Տարօնցի.— 42
Համազասպ.— 77, 78, 85, 86
Համաստեղ.— 187
Համլէթ.— 103
Համօ.— 49
Հայկ Նահապետ.— 109
Հացպանեան, Կարապետ եւ Ազնիւ.— 175

Հոռոմ.— 7

Ղազար.— 82
Ղազարեան, Կորիւն.— 122
Ղուկասեան, Ա.— 157, 159

Մամիկոնեան, Ստեփան.— 98, 99, 102
Մանանեան, Սարգիս.— 35
Մանուկեան, Հմայեակ.— 117
Մասարիկ.— 109
Մարգարեան, Դոկտ. Համբարձում.— 175
Մարտիրոս.— 16, 17, 49, 183
Մարտիկ (Թոքմ).— 173
Մացակ (խնամի).— 7
Մելիքեան, Վաչական (Վաչօ).— 67, 68
Մեսրոպ, Մակուեցի.— 69
Միասնիկեան.— 146
Միկոյեան.— 124
Մինախորեան, Վահան.— 69
Միւլիքով.— 139
Մխիթարեան, Մխօ եւ Գոհար.— 175
Մկրտիչ, Փառակեցի.— 35, 37, 38

Ցարութիւնեան, Սեր.— 63

Նաբոլէոն.— 155
Նազարբէկեան, Զօրավար.— 11, 115, 130, 146
Նակաշիձէ (Ճահանգապետ).— 25, 26, 27, 29, 30, 31, 32, 33, 34, 38, 39, 41, 48, 59, 64, 70, 164
Նահապետեան, Փոլ.— 188
Նաշչանակի.— 33
Նաջի Բէյ.— 73
Նժդեհ.— 142

Նիկոլայ Ցար.— 83, 84
Նիկոլայեւիչ, Նիկոլայ.— 90, 94, 97
Նիկոլայեւ, Զօրավար.— 85
Նոբել.— 23
Նուարդ (Դրոյի կինը).— 64
Նուպար, Պօղոս.— 77
Նուրի, Փաշա.— 109

Շահ.— 62
Շահմազեան, Արսէն.— 146
Շահնազարով.— 68
Շահրիկեան, Ցարութիւն.— 24
Շարաֆեան, Աղեքսանդր.— 159
Շէկոյ.— 33
Շէքսփիր.— 103
Շիխլինսկի, Զօրավար.— 124
Շմերլինգ.— 30, 33
Շումակեւիչ.— 33

Ուաշինկթըն, Ճորճ.— 109
Ուիլսըն.— 119

Զարուխեան, Մարտիրոս.— 38, 39, 50, 51, 52, 53, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 69, 178
Զեխով.— 150
Զիլինգիրեան, Արա.— 135
Զոփուռ.— 49

Պաւլով.— 30, 33
Պետրոս, Մեծ.— 139
Պէհաէտտին Շաքիր.— 73

Ջանփոլատեան.— 49

Զաւախով.— 33
Զեմալ, Փաշա.— 147, 152
Զուղելի, Վալիկօ.— 115

Ռաշմաճեան, Տիգրան.— 59, 60, 61
Ռոստոմ.— 5, 62, 70, 72, 73, 78, 93, 102, 113, 122
Ռոդշիլդ.— 23
Ռուբէն.— 90

Սազանով.— 49
Սաթօ.— 38
Սախարով.— 30, 33
Սաքօ, Սեւքարեցի.— 53
Սեպուհ.— 77, 111, 124
Սերգոյ.— 33
Սերոբ, Փաշա.— 42
Սէֆէրեան, բժ.— 175
Սիլիկեան, Զօրավար.— 110, 130
Սիլինի.— 134, 135, 137
Սիմոն.— 183
Սուլթան.— 104
Սուլթանով, Դոկտ.— 123
Ստալին.— 127, 142, 151, 152, 153

Վահան.— 183
Վազգէն, Կաթողիկոս.— 186
Վարդան.— 77, 85, 86, 88, 89
Վարդան, Խանասորի.— 24, 85
Վարդանեան, Մարկոս եւ Գլէօտիս.— 174
Վեհիպ, Փաշա.— 110
Վռամեան.— 73
Վորոնցով, Դաշկովս.— 90

Տաղլեան, Տոքթ. Լեւոն եւ Լուսին.— 174, 175, 182, 184
Տէր Գաբրիէլեան, Սահակ.— 145, 146, 152
Տէր Գալուստեան, Մովսէս եւ Անահիտ.— 175
Տէր Դաւթեան, Յ. բժ.— 35, 70, 71, 72
Տէր Թովմասեան, բժ.— 34
Տէր Մինասեան, Եգոր.— 113
Տէր Մինասեան, Ռուբէն.— 98, 99, 101, 102, 117, 120, 122, 129,131, 135
Տէրտէրեան, Համբարձում.— 133, 134, 137
Տէր Սահակով.— 33, 68, 69
Տիգենհաուզ (Ճահանգապետ).— 69
Տէր Վահանեան.— 146
Տիգրան.— 160
Տոլստոյ.— 150
Տրուխինի, Ջօրավար.— 86, 87

Փիրանեան.— 175
Քալանթարեան, Լեւոն.— 8, 135
Քամօ.— 146
Քաջազնունի, Յովհաննէս.— 24, 111, 114, 145
Քեռի.— 45, 47, 48, 72, 77, 85, 86, 88, 102
Քիւրտ.— 49
Քրմոյեան, Վ.— 175

Օդապաշեան, Սարգիս (Կոլոտ).— 45
Օգանեան, Մ.— 175
Օհանջանեան, Համօ բժ.— 131, 135
Օնէ.— 82
Օրջոնիկիձէ, Սերգօ.— 146, 152

ՏԵՂԱՆՈՒՆ

Աբաղա.— 82, 85
Աբովեան պողոտայ.— 131, 141
Ազրպէյճան.— 104, 109, 123, 124, 136
Ալեքսանդրապոլ.— 52, 53, 55, 61, 132, 133, 135, 136
Ալճաւազ.— 69
Աղթամար.— 86
Աղստաֆեան.— 66
Ամերիկա.— 102, 109, 116, 117, 127, 165, 167,
Անգարա.— 129
Անգլիա.— 167
Անի.— 55, 57, 58, 59
Աշտարակ.— 9
Ատրպատական.— 62
Արագած.— 105
Արարատեան Դաշտ.— 8, 9, 68, 95, 98, 104, 106
Արեւմտեան Հայաստան.— 72
Աւարայր.— 106

Բագու.— 20, 21, 22, 23, 24, 25, 26, 31, 32, 33, 34, 37, 38, 39, 50, 62, 63, 64, 69, 104, 124, 127, 129, 142, 146
Բաղէշ.— 70
Բայազիտ.— 64, 70, 72, 74, 100, 101
Բաշ Ապարան.— 106, 110, 189
Բասէն.— 100, 101

Բարթողեան (բարձունք).— 75
Բարձր Հայք.— 12, 70, 72, 85
Բետերպուրգ.— 94
Բերկրի.— 89
Բէքոն-լը-Բրիւէր.— 160

Գանձակ.— 30, 33, 41, 91, 104
Գայլատուայ լիճ.— 75
Գերմանիա.— 154, 165, 166, 167, 168, 169
Գիաւոէ Շամի.— 82
Գորիս.— 124
Գուրիա.— 50, 51, 61

Դալարագեազ.— 42, 43, 45, 124
Դալարագերս.— 105
Դաւալու.— 42
Դիլիջան.— 49, 53, 105
Դոնբաս.— 147

Երեւան.— 6, 11, 15, 18, 20, 21, 35, 36, 37, 39, 40, 42, 46, 64, 65, 66, 68, 69, 81, 85, 90, 91, 92, 95, 97, 99, 105, 106, 108, 110, 112, 113, 114, 119, 123, 124, 131, 133, 134, 136, 137, 138, 141, 144, 154, 186
Երզնկա.— 91, 100, 101
Եւրոպա.— 73, 117, 127, 151, 172, 176, 177
Եփրատեան.— 91

Զանգեզուր.— 44, 45, 46, 47, 48, 49, 105, 112, 123, 124, 129, 142, 186
Զանգիբազար.— 124, 125, 126, 127
Զանգու.— 67

Էջմիածին.— 63, 68, 112
Էրզրում.— 12, 79, 81, 99, 101, 129, 175

Թաշքէնտ.— 104
Թաւրիզ.— 69
Թէճէրապատ.— 16, 17
Թիֆլիս.— 19, 34, 35, 64, 77, 80, 82, 83, 84, 85, 88, 91, 94, 95, 97, 98, 105, 113, 114, 117, 122, 147
Թուխի.— 86
Թուրքահայաստան.— 77, 101
Թուրքիա.— 73, 79, 84, 104, 119, 120, 124, 126, 150, 167

Ժրնեւ.— 32

Իգդիր.— 7, 8, 9, 20, 35, 38, 42, 64, 76, 77, 82, 89, 91, 142
Իգդիր—Մաւա.— 8

Լիբանան.— 180
Լոռի.— 138
Լոս Անճելըս.— 174
Լուվր.— 155
Լօզան.— 155, 171

Խարբով.— 147
Խնձորկի.— 86
Խնուս.— 70

Կազդուան.— 94
Կարին.— 69, 70, 72, 73, 77, 78, 80, 102, 131
Կարս.— 58, 59, 119, 130, 131, 132

Կողք.— 94
Կովկաս.— 12, 22, 26, 29, 32, 37, 69, 70, 74, 77, 79, 84, 86, 90, 95, 97, 115, 119
Կոտայք.— 39

Հայաստան.— 9, 72, 90, 104, 105, 106, 108, 109, 110, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 123, 124, 125, 126, 127, 129, 130, 131, 132, 133, 134, 136, 137, 138, 139, 140, 144, 145, 146, 147, 149, 150, 153, 155, 156, 163, 165, 166, 186, 189
Հայաստան, Արեւմտեան.— 72
Հին Բայազիտ.— 69, 71, 73

Ղարաբաղ.— 41, 112, 123, 124
Ղարաքիլիսա.— 53, 105, 106
Ղըրխբուլախ.— 39, 40

Մաբոն.— 48

Մագլէն պողոտայ.— 154
Մասիս.— 7
Մարգարայի կամուրջ.— 136
Մեծն Բրիտանիա.— 165
Միլի.— 105
Միջերկրական ծով.— 139
Մոկս.— 86
Մոսկուա.— 98, 127, 138, 139, 144, 145, 146, 147, 148, 154, 160
Մուշ.— 70, 86, 87, 100, 101, 102

Նախիջեւան.— 41, 42, 44, 45, 49, 50

Նախիջեւան, Լեռնային.— 43, 45, 46, 48
Ներսիսեան լիճ.— 112
Նիւ Եորք.— 174, 190
Նիւ Ինկլընտ.— 190
Նորս.— 43, 44, 45

Ոստան.— 86
Ուսթրրթաուն.— 191
Ուրթապ.— 86
Ուքրաինա.— 165

Չեխոսլովաքիա.— 109
Չիլան.— 90
Չինգիլի (լանջ).— 74, 82, 85

Պաթում.— 109
Պալքաններ.— 165
Պարապետ.— 27, 28, 29, 31, 32
Պարսկաստան.— 8, 62, 77
Պետերբուրգի.— 63
Պէյրութ.— 102, 174, 175, 176, 177, 179, 188
Պիատիգորով.— 26
Պիթլիս.— 100
Պոլիս.— 74, 80
Պոստոն.— 174, 175, 177, 180, 190, 191
Պուլկարիա.— 161
Պուքրէշ.— 158, 159

Ռաֆվա.— 89
Ռուսահայաստան.— 101
Ռումանիա.— 157, 158, 161, 175

Ռուսաստան.— 6, 11, 20, 22, 48, 49, 62, 70, 90, 108, 123, 124, 128, 139, 149, 150, 151, 167

Սալմաստ.— 79, 81, 85
Սան Ֆրանսիսկոյ.— 170, 174
Սասուն.— 15, 20, 88, 90
Սարդարապատ.— 106, 110
Սարըղամիշ.— 119, 130, 131, 132
Սեւ Ծով.— 109
Սեւր.— 126, 127, 129
Սիբիր.— 38, 69, 70, 142, 173
Սիսիան.— 46
Սոդոմ Գոմոռ.— 155
Սովետական Միութիւն.— 116
Սորպոն.— 155
Սուրմալու.— 7, 8, 9, 20, 72, 126, 130, 131, 132

Վան.— 69, 70, 79, 81, 85, 86, 88, 89, 100, 101, 102
Վասպուրական.— 12, 70, 72, 85, 86, 91
Վերսալ.— 155
Վորոնցով.— 64
Վրաստան.— 50, 108, 138, 147

Տաճկահայաստան.— 17
Տարօն.— 12, 70, 72, 85, 87, 89, 90
Տիգրիսեան.— 91
Տրապիզոն.— 101

Փարիզ.— 144, 148, 151, 154, 155, 157, 160
Փլոէշտի.— 158, 159
Փոցտամ.— 170

Քանաքեռ.— 37, 115, 137

Օլթի.— 29, 81
Օոլովի.— 67

Ֆրանսիա.— 155, 157, 158, 165

Կեդրոնատեղի

HAMASKAÏNE Bookshop
SHAGHZOYAN Cultural Center
Bourdj Hammoud — Lebanon

Գատուէր	864
Գրակ	13
Տպաքանակ	1500
Ամսաթուիր	15-5-96

ՀԱՄԱՍԿԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon by Hamaskaine Wahe Sethian Press